

4-5(607-608)

10.03.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՍԻՐԵԼ ԶԱՅՐԵՆԻՔԸ՝ ԱՊՐԵԼՈՎ ԶԱՆՈՒՆ ԶԱՅՐԵՆԻՔԻ

Պարտությունը բացատրական բառարանում փոխաբերական իմաստով նշանակում է, մասնավորապես, անհաջողություն: Բառին փոխաբերական իմաստով մոտենալն անհրաժեշտ է ամենից առաջ քաղաքական ապատիայից դուրս գալու համար: Այո, Արցախյան երկրորդ պատերազմում մենք տարածքային ու մարդկային ցավալի կորուստներ ենք ունեցել, բայց հո՞՞ ծնկի չենք եկել: Քավության նոխազներ փնտրելու փոխարեն մեզ պետք է հետևողականորեն զբաղվել հաջորդ պատերազմի նախապատրաստությամբ, ինչն անխուսափելի է: Նոյեմբերին՝ իրենք անկողնից համաձայնագիրն ընդամենը հրադարարի մասին պայմանավորվածություններ էր, որը չի ամրագրվել միջազգային որևէ քաղաքական ատյանի (ԵԱՀԿ, ՄԱԿ) կողմից: Ի դեպ, 1994-ի մայիսի 5-ին կնքված բիշքեյան համաձայնագիրը ևս միջազգային համընդունելի մանրատ չունի, հենց այդ պատճառով էլ շուրջ քառորդ դար անց վերսկսվեց Արցախյան պատերազմը՝ կամայական միջամտություններ հարուցելով: Նույնը կարող է լինել ներկա դեպքում, հատկապես որ նոր իրավիճակում թուրք-ազերական տանդեմի համար առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվել:

Արդյո՞ք սիրում ենք մեր հայրենիքը. հարցը մերկապարանոց չընկալենք: Հայրենիքը սիրում են ոչ միայն նրա համար կյանքը զոհաբերելով, այլ նաև հանուն հայրենիքի ապրելով: Իսկ ապրել՝ նշանակում է զորանալ, շենանալ ու շատանալ: Ինչքան՞ ժամանակ է պետք արժանապատվորեն ոտքի կանգնելու համար, ստույգ ժամանակը դժվար է նշել, մինչդեռ մեկնարկը կարելի է հաշվարկել հենց այս վայրկյանից, անգամ այս տողերը կարդալու պահից: Քաղաքագետ թե զինծառայող, իրավապահ թե մանկավարժ՝ բոլորը պետք է անմնացորդ նվիրվեն իրենց վստահված գործին: Չկա ավելորդ բնագավառ կամ ոլորտ, մասնագիտություն կամ արհեստ, որի կարևորությունն ընդգծված չէ հայրենաշինության սուրբ գործում:

Այս համատեքստում արժենշելի է մանկավարժի դերակատարությունը: Սերունդ կրթելու և դաստիարակելու գործընթացը պետք է խարսխված լինի առողջ լավատեսության վրա, իսկ դրա համար հարկավոր է հետապետերազմյան համախոսման շուտափույթ ազատվել: Եթե ուսուցիչն անբաթույց վիատ ու հուսահատված է մտնում դասարան, ապա նրա առաքելությունը կարելի է արդեն ձախողված համարել՝ դրանից բխող անցանկալի հետևանքներով:

Առհասարակ, վաղուց ժամանակն է ձերբազատվել դժբախտ ազգի հոգեբանությունից: Միայն հայերը չեն ենթարկվել ցեղասպանության ու կոտորածների, մարդկության պատմությունն այլ օրինակներ էլ ունի: Տեղին է հիշել գերմանացի պետական ակադեմիկոս գործիչ Օտտո Ֆոն Բիսմարկի հայտնի խոսքերը, որոնք նա գրել է նամակներից մեկում 1861 թվականին. «Լեհերին խփեք այնպես, որ նրանք կորցնեն ապրելու ցանկությունը: Ես ցավակցում եմ նրանց՝ ողբալի վիճակի համար, սակայն եթե մենք ցանկանում ենք ապրել, ապա մեզ այլ բան չի մնում, քան բնաջնջել նրանց»: Կարծում ենք, ավելորդ է հիշեցնել, թե ինչպիսի հզոր ու զարգացած երկիր է այսօր Լեհաստանը:

Իսկ մենք, անկասկած, ոչ ոքի չենք զիջում: Մենք կանք, կլինենք ու դեռ կշատանանք: Պարզապես հավատանք մեր սեփական ուժերին:

«ԼՍԱՐԱՐ»

ՆԱԵՎ ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՕԳՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՇԵԼ ԵՐԿՐՈՒՄ



Շարունակվում են ԱՀ նախագահ Արայիկ Գրուբյանի հանդիպումները պետական կառավարման համակարգի աշխատողների հետ: Հերթականը կրթության ոլորտի աշխատողների հետ էր: Մասնակցում էին ԿԳՍՍ աշխատակազմը՝ նախարար Լուսինե Ղարախանյանի գլխավորությամբ, Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների տնօրենները:

ԱՀ նախագահն ասաց, որ նման հանդիպումների նպատակն է համատեղ քննարկել ստեղծված իրավիճակը, հստակեցնել, ուղղել մեր անելիքները: Հանդիպման մասնակիցներին նա կոչ արեց բարձրագույն իրենց մտահոգող բոլոր հարցերը՝ պատրաստակամությամբ հայտնելով պատասխանել բոլոր «ինչու»-ներին:

Ա. Գրուբյանյանի ելույթը լի էր քննադատական և ինքնաքննադատական շեշտերով և որոշ առումով պատասխան էր իր ընդդիմախոսներին: Նրա խոսքով, այդպես էլ արտահայտվում ոչ թե մեղավորներ փնտրելու կամ ինքնադատարանացում, այլ իրականությունը ճիշտ ներկայացնելու:

Ըստ նրա, պատերազմը սկսվեց, որովհետև մենք քաղաքական առումով պատրաստ չէինք երկխոսության: Խոսվում է իր ընտրվելուց հետո մեր երկրի սուբյեկտայնության, ինքնուրույնության անկման մասին: Ինչպես նա նշեց, մենք անկում ունեցել ենք դեռ 1992թ. սկզբին, երբ Արցախում Գերագույն խորհրդի նախագահ էր ընտրվել Արթուր Մկրտչյանը, որի նկատմամբ սկսվել էր հալածանք՝ ընդհուպ մինչև նրա սպանությունը, քանի որ ՀՀ իշխանությունների համար անընդունելի էր ոչ ՀՀ-ական ղեկավարը:

Ասաց, որ իրեն մեղադրում են, թե ինչ է արել երկրի համար իր վարչապետության տասը տարիներին: «Կատարել եմ Նախագահ Բակո Սահակյանի հանձնարարականները՝ ուղղված տարբեր ենթակառուցվածքների, ինժեներական աշխատանքների, կենցաղային, բնակարանային խնդիրների լուծմանը», - ասաց նա: Եվ որոշ ծրագրերի մասին մանրամաս-

նեց, կանխատեսելով պատերազմը՝ իրականացրել է բազմաթիվ ենթակառուցվածքային ծրագրեր, ինչի արդյունքում պատերազմից հետո նրա հետևանքները վերացվել են կարճ ժամանակամիջոցում: Ինչքան տրանսֆորմատոր կայաններ են խփվել, կարողացել են պատերազմի ժամանակ էլ էլեկտրականություն մատակարարել: Չկա մի կամուրջ, որը չի խոցվել թշնամու կողմից, բայց շրջանցող ճանապարհներ նախանշվել էին:

Ծանր էր լսել երկրի ղեկավարի խոստովանությունը, որ առաջնագծում խայտառակ վիճակ էր տիրում, որ եթե ունենայինք պաշտպանված առաջնագիծ, պատերազմի այսպիսի արդյունք չէինք ունենա: Ասաց, որ չպատկերվեց 2021թ. ՀՀ բյուջեով մ ա խ ա տ ե ս վ ա ծ

հանդիպումները, գրուբյանը նախկին նախագահների, ՀՀ վարչապետի, գեներալների հետ: Հյուսիսային թևի պաշտպանությունը հաջողվել էր իրականացնել: Հիմնական անհաջողությունը սկսվել է հարավային թևից, որի պատասխանատուն ՀՀ ՁՈՒ-ն էր:

Ա. Գրուբյանյանին մեղադրում են այն հարցում, որ ասել էր, թե Արցախի օդը պաշտպանված է: Պարզաբանեց, որ դա ասել էր Արդեշանի զինատեսակները հաշվի առնելով և ոչ թե թուրքական բայրաքթարները, որից կարող են պաշտպանվել թերևս միայն Ռուսաստանը, ԱՄՆ-ն, զուցե նաև՝ Չինաստանը: Անգամ եվրոպական երկրները բայրաքթարի դեմ հակաօդային ուժեր չունեն: Իսկ բայրաքթար առաջին անգամ օգտագործվել է Արցախում:

Ինքն է հորդորել ՀՀ վարչապետին պատերազմը դադարեցնելու հրաման տալ դեռ հոկտեմբերի 19-ին՝ մեղքը վերցնելով իր վրա: Բայց ՀՀ քաղաքական ուժերը կոնսուլիդացիայի չզնային:



նրանց հարցերին: Դրանք հիմնականում վերաբերում էին մեր բանակի, լեզվի կարգավիճակին, անվտանգությանը: Հ. Գրուբյանի տնօրեն Արթուր Միսասյանը հետևյալն ասաց. «Ստրին շնորհակալություն մնան ձևաչափով անկեղծ մթնոլորտում հանդիպում կազմակերպելու համար: Լավ է, որ Ձեր խոսքի մեջ հնչում է քննադատություն և ինքնաքննադատություն: Երանի այսպիսի հանդիպում լինել մինչև պատերազմը: Մենք երկի կիսուսափեինք շատ սխալներից: Դուք ասացիք, որ ռազմական բախման անհամաչափությունն էր մեր պարտության հիմնական պատճառը: Ես, որպես մտավորական, համաձայն եմ և ունեմ նաև այլ գնահատական. կարծում եմ, պարտությունը սկսվել է բարոյական հարթակից: Մենք պարտվել ենք այն ժամանակ, երբ սկսել ենք անարդար ապրել, երբ Ղարաբաղում շատ դեպքերում իշխում էր այլ մթնոլորտ. սառն էին մի բան, անում մեկ այլ բան, երբ պաշտոնյան իր տեղում չէր, ուսուցիչն իր տեղում չէր, այսինքն՝

խախտվել էր բարոյական աստվածային նորմը: Ժամանակն է սթափվելու, այսպես մեզ սպասում է վերջնական կործանում: Պարոն նախագահ, իմ խնդրանքն է, որ ուշադրություն դարձնեք բարոյական կողմին, և պաշտոնի նշանակվեց նրանց, ովքեր արժանի են, այսպես մարդիկ չեն հավատալու: Հավատը վերականգնելու մեկ ճանապարհ կա՝ լինել ազնիվ, ապրել սրբակենցաղ վարքով: Կարծում եմ, եթե Դուք դա անեք և անձնական օրինակ ցույց տաք, օրինակ կվերցնեն բոլորը»:

«Սկսած 1994թ. մայիսի 12-ից, բոլոր տոներն ենք հաղթանակներ՝ չզնահատելով իրականությունը: Մենք չենք պատրաստվել պատերազմին, մենք իմիտացիա ենք արել, մենք խաբել ենք մեզ, ժողովրդին, հայությանը: Եթե պատրաստված լինեինք, այս վիճակում չէինք լինի»,- ասաց նա: Ա. Գրուբյանյանը պետք է բացառվի: Սոցիալական, տնտեսական երաշխիքներն ինչքան էլ լավ լինեն, այսօր անենակարևորն ընդհանուր տրամադրությունն է լինելու մարդկանց այստեղ պահողը: Ժողովրդագրական խնդիրն է այսօր մեր մարտահրավերը: «Ինչքան հնարավոր է, սոցիալական երաշխիքները կծեծացնենք, կիրականացնենք վերաբնակեցման նոր քաղաքականություն: Ցանկացողներ շատ կան, որ պատրաստ են գալ այստեղ ապրելու: Անվտանգության երաշխիքներ էլ ունենալով՝ կպայքարենք նախկին ԼԴԻՍ-ի տարածքի վերականգնման և մեր անկախության ճանաչման համար», - երկրի ապագայի իր տեսլականը ներկայացրեց ԱՀ նախագահը:

Ա. Գրուբյանյանը ոչ միայն գնահատեց մտավորականի տեսակետը, այլև առաջարկեց նրան ամեն օր մտնել իր աշխատանքային և մատուցույց անել իր սխալները, եթե թյու է տալիս: Եվ ասաց, որ ընդհանրապես, բոլոր ղեկավարները եթե կոլեկտիվում հարգանք չեն վայելում, տեղ չունեն այնտեղ: Միանձնյա իշխելու սկզբունքը պետք է բացառվի: Սոցիալական, տնտեսական երաշխիքներն ինչքան էլ լավ լինեն, այսօր անենակարևորն ընդհանուր տրամադրությունն է լինելու մարդկանց այստեղ պահողը: Ժողովրդագրական խնդիրն է այսօր մեր մարտահրավերը: «Ինչքան հնարավոր է, սոցիալական երաշխիքները կծեծացնենք, կիրականացնենք վերաբնակեցման նոր քաղաքականություն: Ցանկացողներ շատ կան, որ պատրաստ են գալ այստեղ ապրելու: Անվտանգության երաշխիքներ էլ ունենալով՝ կպայքարենք նախկին ԼԴԻՍ-ի տարածքի վերականգնման և մեր անկախության ճանաչման համար», - երկրի ապագայի իր տեսլականը ներկայացրեց ԱՀ նախագահը:

Յավալի է լսել, որ այսօր մենք պայքարում ենք հայաստանյան ուժերի դեմ, որոնք իրար դեմ են աշխատում: Ցավալի է, որ թուրքը չարախնդում է՝ ձեզ թշնամի պետք չէ, դուք իրար հերիքեք:

Այս առնչությամբ ԱՀ նախագահն ասաց, որ միայն ներքին համերաշխությունը կարող է մեր շատ հայրենակիցների ստիպել մնալ մեր երկրում:

ԱՀ նախագահը լսեց նաև ներկաներին, պատասխանեց

Ս. ԿԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ - ԲՆԱՐԿՈՒՄ

ԲՈՒՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Չայոցյանը ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի հետ միասին Արցախի պետական համալսարանում հանդիպում ունեցան պետական և ոչ պետական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

Բարձրագույն կրթությունը դառնում է եռաստիճան. ասպիրանտուրան չի համարվելու հետբուհական կրթություն, լինելու է բակալավր, մագիստրոս և դոկտոր:

մագրման գործընթաց: Նոր օրենքով հստակեցված է, որ եթե բուհն այդ գործընթացը երկու անգամ չի անցնում, ապա փակվում է:

պատերազմական իրադարձությունների պատճառով վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև փետրվար ամիս: Հինգ հայտ են ստացել, ու մոտ ժամանակներս մրցույթը կամփոփվի:

Հանդիպումը բացեց ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, որը նշեց, որ շատ սպասված հանդիպում է, հատկապես այս շրջանում, երբ շատ են անորոշությունները, և բոլորիս համար կարևոր է ապագայի տեսլականը: Նա խնդրեց ԱՀ ԿԳՄՍ նախարարին՝ ներկայացնել բարձրագույն կրթության համակարգում կատարվող բարեփոխումները և առանձնահատուկ անդրադարձնալ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծին, քանի որ Արցախը Հայաստանի հետ գտնվում է նույն կրթական դաշտում: Իսկ Ա. Չայոցյանին՝ պարզաբանել, թե ինչու Արցախի գիտնականները չեն կարող մասնակցել ՀՀ գիտության կոմիտեի կողմից առաջադրված թեմաների մրցույթին: Ու նաև՝ ինչպիսին են գիտության պետական կոմիտեի և ԳԱԱ նախագահության, բարձրագույն որակավորման կոմիտեի փոխառնչությունները, որովհետև օրենքում կարծես թե ԲՈԿ-ի այդ գործառույթների մեծ մասը կամ ամբողջությամբ արդեն վերապահվում է Գիտության կոմիտեին:



Գիտության մասով նշեց, որ ակադեմիան չի փակվում, ինչի մասին կասկած են հայտնում գիտնականները: Գիտահետազոտական ինստիտուտներին տրվում է ավելի մեծ ազատություն ու անկախություն իրենց գործունեության մեջ: Գիտահետազոտական ինստիտուտներն իրենց ցանկությամբ կարող են միավորվել տարբեր ցանցերով: Թե ինչ անուն կունենան՝ ակադեմիա, նախագահություն, համակարգող կենտրոն, կախված կլինի իրական տված գիտական արդյունքից: Գիտությունը շատ կարևոր է, և պետք է զբաղվել իրական գիտությամբ: Այսօրվա իրականության հետ պետք է հաշվի նստել և գործնական արդյունքներ դնել՝ հստակ չափելիության չափանիշներով:

Ա. Չայոցյանն էլ ասաց, որ ԲՈԿ-ի գործառույթը հաճախ շփոթում են աստիճան շնորհող կազմակերպության հետ: ԲՈԿ-ը ոչ աստիճան տվող է և ոչ էլ վերցնող: Այն ընդամենը հաստատում է մասնագիտական խորհրդի շնորհած գիտական աստիճանը: Նոր օրենքի նախագծով գիտական ատենախոսությունների փորձաքննություն ըստ անհրաժեշտության կիրականացվի Գիտության կոմիտեի միջոցով: Ենթադրվում է, որ ապագայում բուհերն իրենք պետք է կազմակերպեն այդ աստիճանաշնորհումը, բայց դա անելու համար պետք է ապացուցեն, որ իրենք կարող են դա անել:

Գիտությունն ու կրթությունը այն ոլորտն են, որ փափուկ ու ժով՝ գիտական դիվանագիտությամբ կարող են միջազգային ճանաչման տեսանկյունից ապահովել, ինչը քաղաքական դաշտում, հնարավոր է, դժվարությամբ ընդունվի: «Եթե մենք ունենանք միջազգային տեսանկյունից ունեցող գիտություն Արցախից, ոչ մի տեղ կանխակալ վերաբերմունք չի լինի նրա հանդեպ, հանգիստ կտպագրվի միջազգային պարբերականներում: Շրջանառության մեջ կմտնեն «Արցախի պետական համալսարան», «Արցախի գիտական կենտրոն» անունները և կամա թե ակամա կմտնեն միջազգային հանրության մեջ: Ուրեմն, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ մրցույթներում պարտադիր պահանջ է դրվելու միջազգային պարբերականներում տպագրությունը: Դրա համար որպես մուտքային պայման դրվել է խորհրդատուի ներգրավումը: Խորհրդատուն կարող է լինել այն մարդը, որը կարողանում է միջազգային գրականության մեջ տպագրվել, այսինքն՝ հասցնի նրան, որ Արցախի գիտնականների աշխատանքները տպագրվեն միջազգային պարբերականներում:



Իր խոսքում Վ. Դումանյանը կարևորեց ԱրՊՀ դերակատարությունը որպես վաղուց կայացած բուհ ոչ միայն կրթության, այլև պետական տարբեր հարցերում՝ ասելով, որ նման բուհի գոյությունը անհրաժեշտ պայման է ցանկացած երկրում:

Անդրադառնալով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծին՝ մասնավորապես ասաց, որ նոր օրենքով ուսանողն ինքն էլ է մասնակից դառնում իր կրթության կազմակերպմանը, ինքն էլ կպլանավորի իր ուսումը:

Ինչ մնում է մրցույթներին, ասաց, որ Գիտության կոմիտեն պարբերաբար իրականացնում է մրցույթներ և Արցախի հետ համագործակցության ծրագիր ունի: Անցած տարվա սեպտեմբերին Գիտության կոմիտեն հայտարարել էր մրցույթ, բայց

թական հաստատություններ և առանձնապես մայր բուհը զարգանան ժամանակին համահունչ. «Մայր բուհի կարգավիճակը պարտավորեցնող է, նաև նրա պարտականություններն էլ շատ են»:

որը, ըստ էության, պետք է իր վրա վերցնի ուսուցիչների վերապատրաստման կարևոր գործառույթները: Բայց այն լինելու է ոչ թե հիմնական վերապատրաստող կազմակերպությունը, այլ մշակելու է վերապատրաստման չափորոշիչը, ծրագիրը, մեթոդաբանությունը, համակարգելու է գործընթացը: Ուսուցիչները հնարավորություն են ունենալու ընտրելու այն վերապատրաստող կազմակերպությունը, որը պետք է լինի նախարարության կողմից երաշխավորված ցանկում: Դրա առավելությունն այն է, որ կլինի մրցակցություն, հետևաբար, ավելի որակյալ դասընթացներ կազմակերպելու հնարավորություն: Ուսուցիչները, բնականաբար, կընտրեն այն կազմակերպությունը, որի պատրաստած վերապատրաստումից ավելի զոհ կմնան, և որն ավելի արդյունավետ կլինի: Կերաշխավորվեն նաև դասընթացներ, այդ թվում՝ առցանց: Նշանակում է, որ ուսուցիչները կկարողանան ունենալ ճկունություն այդ դասընթացների միջոցով կրեդիտներ հավաքելու և ինքնաբերաբար ատեստավորվելու: Գործընթացն այս տարի կսկսվի: Կարգի հաստատումից հետո առաջիկայում կսկսվի կազմակերպությունների երաշխավորման գործընթացը, այնուհետև՝ վերապատրաստումները: Դրանք կհամապատասխանեն նոր չափորոշիչներին:

այն կմեկնարկի փորձնական ձևով: Սրա շրջանակում հնարավորություն է ստեղծվելու, որ ուսուցիչներն իրենց նախաձեռնությամբ մասնակցեն թեստավորմանը: Դա լինելու է իրենց առարկայական ոլորտից, որի արդյունքում բարձր ցուցանիշներ ստացած ուսուցիչները կունենան աշխատավարձի 30-50 տոկոս բարձրացում:

տերազմը շարունակվում է Արցախում: Խոսք մշակութային պատերազմի մասին է: Խաղաղապահների օգնությամբ հայերը փորձում են մտնել Դաղիվանք, որն աղբյուրաբանները ներկայացնում են որպես աղվանական, սեփականում են մեր մշակույթը, արվեստը: Ուսուցիչները դպրոցներում ի գործու են մշակելուներին պարզաբանելու, ճիշտ ուղու վրա դնելու, թե որն է իսկական հայ արվեստը, մշակույթը, որ խաչքարը, Դաղիվանքը, Գանձասարը հայկական են: Հնարավոր է դպրոցում ներդնել նոր առարկա, որը կկոչվի «Արվեստի պատմություն» կկոչվի կամ «Հայ մշակույթի պատմություն», որի ընթացքում երեխաներին կսովորեցնեն հայ արվեստի առանձնահատկությունները:

Ճանաչեն մեր մշակութային արժեքները, մեր արվեստը: Մշակել ենք «Արվեստ» ինտեգրված առարկա, բացի արդեն գոյություն ունեցող «Երաժշտություն», «Կերպարվեստ» ուղղություններից, որոնց չափորոշիչները վերանայվել են: «Արվեստ» ինտեգրված առարկան դեռ նախագծման փուլում է և փորձարկման ենթակա:



Ինչ վերաբերում է ուսուցիչներին ուղղված քաղաքականությանը, Ժ. Անդրեասյանն ասաց, որ ներդրում են նաև մի կարևոր գործընթաց՝ ուսուցիչների կամավոր կամ սեփական նախաձեռնությամբ ատեստավորման գործընթաց: Այս տարի

ԿԶՆԱԿ-ի գործառույթներից մեկն էլ լինելու է ուսուցիչների ամառային դպրոցների և տարեկան համաժողովների կազմակերպումը: Փոխնախարարն ասաց, որ ուրախ կլինեն, եթե Արցախից էլ մասնակիցներ լինեն, առավել ևս, որ այն անցկացվի Արցախում՝ միասին քննարկելու կրթության հիմնախնդիրները:

Մա՛ առաջիկա պլաններում:

Սա՛ առաջիկա պլաններում:

Մա՛ առաջիկա պլաններում:

Սա՛ առաջիկա պլաններում:

ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

«Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզունն ա ու հավատը: Լեզուն փոխի՝ հավատը ուրացի՞ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե որ ազգիցն ես»:

Իսկ գիտուն լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, իստակ խոսա: Դու քո լիզուն որ իստակ խոսաս, ի՞նչ վնաս ունի, հենց գիտուն ես խելքդ ձեռնիցդ կառնեն, թե՞ տերության սիրտն ես ուզում շահի՞լ: Բարեխնամ տերությունը ե՞րբ կուզի, որ մարդ իրան լեզուն կտրի, իր ազգիցը հեռանա: Բաս էլ ո՞ւր են էքսան վարժատուն շինում, վարժապետ պահում, աստիճան, պատիվ տալիս: Ֆրանցուզ, մեմեց, ինգլիզ, որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞ պատիկ դու էլ պետք է սիրես ու գովես: Քեզանից չեն նեղանում, ա՛ջքի լույս, մեր բախտիցը ժամանակն էնքան ծռվել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէր կարում պահիլ, ո՞ւր մնա՝ լեզվի դարդը քաշիլ...

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնի՛մ, ձեր արևին դուրբան. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դա՛յիմ բռնեցե՛ք:

Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի»

ՕՐ, ՈՐ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է

Մայրենիի օրվա կապակցությամբ ԱԶ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը շնորհավորանքի խոսք է հղել, որում ասվում է. «Շնորհավորում եմ բոլորիս թերևս ամենալուսավոր տոնի՝ Մայրենիի օրվա կապակցությամբ: Օր, որը չափազանց պարտավորեցնող է, հատկապես՝ մեր օրերում, հետպատերազմյան այս ծանր ժամանակաշրջանում: Եվ, միաժամանակ, մայրենիի հանդեպ ծառայած խնդիրներին անդրադառնալու և արդյունավետ լուծումներ փնտրելու յուրօրինակ առիթ է:

Հիրավի, տարեցտարի ավելի ու ավելի շատ միջոցառումներ ենք կազմակերպում՝ նվիրված մայրենիին, գիտակցում ենք, որ այն յուրաքանչյուր հայիս համար խորհրդանշական իմաստ ու-

նի, որ հայոց լեզուն մեր ինքնության ողնաշարն է, մեր ազգային ինքնասիրությունը և արժանապատվությունը: Բայց և միաժամանակ արձանագրում ենք, որ շատ են նաև անելիքները, որոնք գլխավորապես պայմանավորված են արդի մարտահրավերներով: Այո՛, մարտահրավերները միշտ են եղել մեր ծննդյան օրից առ այսօր, սակայն ներկայումս այլ են դրանք, այլ տեսքով, այլ բովանդակությամբ, թեև յուրաքանչյուրն էլ դժգոյն սպառնալիք է մեր ինքնությանն ու գոյին: Ու ինչպես մեր պատմության օրհասական պահերին, այսօր ևս հայերենը, հանց բացառիկ ավաստ վահան, չի ընկրկում ժամանակի և ճակատագրի հարվածներին: Մա ամուր է իր հզոր Արարատի պես, անհարթելի Հայկ մահապետի, հազարամյա հայի, ոչնչից և եր-

բեք չվիատվող արցախցու պես:

Պարզապես, մեր հոգատարության կարիքն ունի, մեր հարգալից վերաբերմունքի, անմագորդ սիրո և նվիրումի:

Մայրենիի օրն այս թող յուրօրինակ կոչ լինի մեր բոլոր օտարախոս հայրենակիցներին, որ օր առաջ փոխեն վերաբերմունքն առ մեր ինքնության գլխավոր կրված հայոց լեզուն, և բոլորիս՝ ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերիս, որ այսուհետ անաղարտ պահենք այն, որպես սուրբ մատուց, գերծ մանք լեզվական մեղանչումներից, անտարբեր չլինենք, այլ հոգ տանենք ու ապրենք նրանով՝ մեր բացառիկ լեզվով:

Շնորհավոր օրը, Հայոց լեզու, չխամորդ գարդ, հայ ազգածառի կենսարար արմատ, մեր ոգու մշտնջենական ակունք»:

ԵՎԵՔ ԱՎԵԼԻ ՍԻՐԵՆԷ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ



Հանրային քննարկման է դրված Արցախում ռուսերենը պաշտոնական լեզու դարձնելու «Լեզվի մասին» ԱԶ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը: Նշենք, որ նրա հեղինակներն են ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցությունից Արամ Հարությունյանը, «Միասնական հայրենիք» խմբակցությունից՝ Գագիկ Բաղդուցյանը, «Արդարություն» կուսակցությունից՝ Մետաքսե Հակոբյանը:

Հարցի առնչությամբ «Լուսարար»-ը հարցազրույցի է հրավիրել ԱԶ ԿԳՄՍՆ լեզվի տեսչության պետ Արտակ ՂՈՒԼՅԱՆԻՆ:

Միևնույն ժամանակ շահագրգիռ անձանց հրավիրում ենք հանդես գալ «Լուսարար»-ի էջերում:

- Պարոն Ղուլյան, ըստ Ձեզ ո՞րն է «Լեզվի մասին» ԱԶ օրենքում փոփոխություն կատարելու հիմնական շարժառիթը: Այդ առթիվ տարբեր հիմնավորումներ են հնչում:

- Շարժառիթի մասին երկի նախագծի հեղինակները ճիշտ կասեն: Իմ կարծիքով, հետպատերազմյան իրողություններն են: Մենք պետք է հաշվի առնենք, որ արդեն Արցախում է գտնվում և բավականին երկար ժամանակով այստեղ է լինելու ռուս խաղաղապահ զորքը, ինչպես նաև տարածաշրջանում գերտերությունների դերի վերաբաշխում է նկատվում, մասնավորապես՝ Ռուսաստանի: Կարծում եմ հիմնական պատճառներից մեկը դա պետք է լինի, այսինքն՝ պաշտոնական մասնակցությունը, պաշտոնական խոսքը ռուսերեն լինելու անհրաժեշտությունը: Խոսքն ավելի շատ վերաբերում է ազգամիջյան հաղորդակցության լեզվին: Եվ այդ է պատճառը, որ մինչև սույն չարչրկված նախագծի հանրայնացումը մենք նախագծի համահեղինակ Արամ Հարությունյանի հետ հանդիպել ենք և առաջարկել. ավելի նպատակահարմար է, որ նոր օրենքի նախագծում «ռուսերենը պաշտոնական լեզվի» փոխարեն գրվի «ազգամիջյան հաղորդակցության լեզու» հասկացությունը: Մենք այդպիսի փորձ ունեինք նաև խորհրդային շրջանում: Բայց, չգիտեմ ինչու, նախագծում, որն արդեն քննարկման է դրվել, բացակայում է մեր առաջարկը:

- Բայց հետամուտ կլինե՞ք, որ Ձեր առաջարկը կյանքի կոչվի:

- Ես նախ ուրախ եմ, որ նախագծի հեղինակների մոտ նկատում եմ մտահոգություն հայոց լեզվի, նրա անաղարտության և ընդհանրապես լեզվի հիմքերի ուղղությամբ, որպեսզի մամատիպ նախագծերը ոչնչով չկարողանան ցնցում առաջացնել այս հարցում, չխախտեն մայրենիի հիմքերը: Եվ ուրախ եմ, այո, որ այս նախագիծը ոչ մի սպառնալիք չի կարող լինել մեր մայրենիին:

- Իմ հաջորդ հարցն էլ հենց դրան է վերաբերում: Ո՞նանք նույնականացում են «պետական լեզու» և «պաշտոնական լե-

զու» եզրույթները: Ի՞նչ եք կարծում, դրանց իրավաբանական բովանդակությունն արդյո՞ք նույնն է:

- Դրանք բոլորովին տարբեր բաներ են: Տարբեր մեկնաբանություններ կան, բայց ամենամատչելին, որը մենք փորձում ենք բացատրել մեր հասարակության, այն է, որ պետական լեզու ասելով հասկանում ենք այն լեզուն, որով գրված է քո Սահմանադրությունը: Արցախի Հանրապետության Սահմանադրությունը գրված է հայերենով: ԱԶ օրենքները գրված են հայերենով: ԱԶ-ում ուսուցման լեզուն հայերենն է: Եթե պաշտոնական լեզուն է, որը նաև պաշտոնական խոսքն է, գրագրությունը, գիտության, հասարակության տարբեր ոլորտներում մեր լեզուն է, և այստեղ ավելանում է նաև ռուսերենը, ես կարծում եմ՝ այդտեղ ինչ-որ դավադրություններ պետք չէ փնտրել: Որովհետև, կրկնում եմ, սա պայմանավորված է պատերազմի իրողություններով:

- Հարցից հարց թխեց. գրագրությունների մասին խոսեցիք, բնականաբար, պաշտոնական մասնակցների մասին ասացիք: Իսկ այն դեպքերում, երբ պետական մարմիններում գրագրությունը տարվի ռուսերենով, ընդունելի՞ կլինի:

- Գործավարությունը շարունակելու է մնալ հայերեն: Մյուս կողմից էլ մենք այդքան շատ մասնագետներ չունենք Արցախում, որ գործավարությունը կարողանան ռուսերեն գրել:

- Այդ հիմա չունենք, բայց տարիների ընթացքում կարող են ձևավորվել:

- Իսկ ի՞նչ է փոխվելու տարիների ընթացքում: Ես չեմ կարծում, թե այս նախագիծը ենթադրում է ռուսերեն լավ իմացող մասնագետների աճ. բացառվում է:

- Մենք նաև այդպիսի հարց ենք նախատեսել. օրենքում փոփոխություններ մտցնելը չի՞ հանգեցնի նրան, որ ռուսերենը կրթական հաստատություններում կդառնա հայերենին համահավասար ուսումնական առարկա: Նկատենք, Արցախում ռուսերենի իմացության մակարդակը, հատկապես գրավոր խոսքում, հազիվ թե լիարժեք բավարար է գործնական կիրառումներում:

- Դրա մասին խոսք լինել չի կարող ընդ-

հանրապես: Գիտե՞ք, երբ խոսքը վերաբերում է ուսումնական գործընթացին, ընդհանրապես դպրոցներից, չպետք է մոռանալ, որ օտարալեզու դպրոցները բացվում և փակվում են կառավարության որոշումներով: Եթե քո կրթության, քո ուսուցման լեզուն հայերենն է, բնականաբար, շարունակելու է հայերենն էլ մնալ: Եվ ռուսերենը (ոչ միայն) և մեկ այլ լեզու չի հավասարվելու հայերենին:

- Ռուս խաղաղապահները, նոյեմբերից՝ պայմանավորվածության համաձայն, Արցախում կմնան որոշակի ժամկետով: Նրանց խաղաղարար առաքելությունն ավարտվելուց հետո արդյո՞ք անհրաժեշտություն չի ծագի ռուսերենի՞ պաշտոնական լեզվի կարգավիճակը վերանայելու իմաստով:

- Մի կողմից որքան էլ այս ամենը պայմանավորված լինի ռուս խաղաղապահների գործոնով, Արցախում նրանց ներկայությամբ, մյուս կողմից էլ մենք չպետք է մոռանանք, որ անկախ ամեն ինչից, մենք, ընդհանրապես Արցախը բազմաթիվ թելերով կապված է Ռուսաստանի հետ: Այո, ռուսերենին պետք է ուշադրություն դարձնենք, այո, մեր երեխաները պետք է ռուսերենին տիրապետեն, բայց ոչ մի դեպքում՝ հայերենի, մեր ինքնության հաշվին: Եթե մարդ գիտի ռուսերեն կամ անգլերեն, առավելություն է ոչ միայն նրա մտավոր զարգացմանը, այլև աշխատանքային հարաբերություններում, ընդհանրապես կյանքում: Եվ ոչ միայն ռուսերեն, թող մի քանի լեզուներ իմանա:

- Ընդհանրապես աշխատաշուկայում առավելությունը տրվում է լեզուներ իմացող մասնագետներին:

- Այո: Ու նաև ասում ենք՝ ռուսերենին, որպես ազգամիջյան հաղորդակցության լեզվի ինչքան շատ տիրապետող ունենանք, այնքան մեր օգուտն է:

- Ձե՛ք կարծում, որ նկատելի շտապողականություն է դրսևորվել «Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելիս: Կարելի էր, թերևս, համապարփակ քննարկումներ կազմակերպել ոլորտի ճանաչված (այդ թվում՝ հայաստանաբնակ) մասնագետների ներգրավմամբ: Այսինքն՝ նախ փորձորոշում իրականացնել, նոր միայն անցնել օրենսդրական լուծմանը:

- Այո, ճիշտ նկատեցիք, շտապողականություն կա, բայց բարեբախտաբար դեռևս չի ընդունվել օրենքի նախագիծը, դեռ հանրային քննարկման է դրված, յուրաքանչյուրն իր կարծիքն է հայտնում, և սա շատ լավ է: Նաև մեր կառավարությունն իր ամփոփ եզրակացությունը չի տվել դեռևս: Երբ արդեն կլինեն բոլոր կարծիքները, երբ արդեն վերջնական նախագիծը կործակվի սեղանին, այն ժամանակ մենք մեր խոսքը կասենք: Բայց այն վիճակում, որ արդեն կա և ընդամենը տալիս է պաշտոնական լեզվի կարգավիճակ, որով ոչ թե հավասարվում է

հայերենին, այլ պարզապես որոշ առանձին դեպքերում պետք է օգտագործվի ռուսերենը, ես ինչ-որ վտանգ չեմ տեսնում մեր մայրենիի հիմքերին:

- Մեր անկախության ժամանակաշրջանում, երբ հայրենն էր արդեն տիրապետող, մենք ինչ-որ տեղ հանգստացել էինք և թափփվածություն էինք ցուցաբերում հայերենի նկատմամբ: Նկատի ունենք եթերի, համացանցի լեզուն: Բայց հիմա, երբ արդեն գիտենք, որ ասես մրցակցություն կա մեր լեզվի հետ, կստիպի՞ դա մեզ ավելի շատ հոգատար լինել մեր լեզվի նկատմամբ:

- Չավելալը գիտե՞ք որն է. որ այս նախագծի դեմ հիմնականում պայքարում են մարդիկ, որոնք, ես չեմ տեսել, որ համացանցում հայատառ գրեն: Կամ մարդիկ, որոնց ես գիտեմ, որ մեքենայում, հնարավոր է, բարձրածայն թուրք-ադրբեջանական կլկլոցներ լսեն: Եվ այս մարդիկ պայքարում են հայերենի համար, այն դեպքում, երբ հենց իրենք չեն տիրապետում գրական հայերենին:

- Պայքարելու ամենալավ ճանապարհը հայերենը անաղարտ պահելն է, տարածելը...

- Մյուս կողմից, եթե պաշտոնական լինի, օրինակ, անգլերենը կամ գերմաներենը, կրկնում եմ, դա ոչնչով չպետք է խաթարի հայոց լեզվի հիմքերը: Մենք պետք է սիրենք մեր լեզուն: Մենք ունենինք բավականին ժամանակ: Մեր անկախության 30 տարիները, իշխանությունները, նաև պատկան մարմիններն ամեն ինչ պիտի անեին, որ հայ մարդը սիրի իր լեզուն: Քանի որ գիտեինք, որ 70 տարիներից ավելի մենք հեռացել էինք մեր լեզվից, ավելին՝ մենք հեռացել էինք մեր ինքնությունից: Իսկ ինքնությունը վերադառնալու առաջին կամուրջը, հաջողության գլխավոր երաշխիքը լեզուն է՝ գրական հայերենը: Ցավոք, մենք գրական հայերենին տեղ տալու, գրական հայերենը հավուր պատշաճի գնահատելու փոխարեն չգիտես ինչի հետևից ենք ընկել, թե այսինչ տողը ինչու է այսպես գրված և այլն: Այսինքն՝ եթե ռուսերենը չընդգրկվի որպես պաշտոնական լեզու, արդյո՞ք, մենք դրանով ավելի ենք սիրում մեր լեզուն: Եվ ի՞նչ կապ ունի մեկը մյուսի հետ: Եկեք այնպես անենք, որ ավելի սիրենք մեր լեզուն:

Կրկնեմ, ես այս նախագիծով չեմ տեսնում հայերենին սպառնալու վտանգ, համոզված եմ, որ եթե չլինեք ռուսերենին պաշտոնական լեզու տալու այս նախագիծը, չեմ կարծում, թե մենք դրանով ավելի կգնահատենք մեր լեզուն: Այո, պետք է սիրել լեզուն: Մյուս կողմից էլ այն մտահոգությունները, որ առկա են հասարակության շրջանում, շատ հաճելի են, որովհետև դրանց մեջ վախ կա, որ մեր մայրենին կարող է վնասվել:

ՄԱՅՐԵՆԻԻ ԶԱԲԱՑ

ԱԶԳԻ ՀՈԳԻՆ ԼԵՋՈՒՆ Է

Ուր որ հայրենի երգեր կլսվի՝
Հոն հայրենիքը ողջ է...

Ղևոնդ ԱԼԻՇԱՆ

«Սովորողների հոգեբանական խնդիրները, որ ծագել են մեր այս վերջին դաժան պատերազմի պատճառով, փորձում ենք լուծել տարբեր եղանակներով: Նպատակ ենք դրել զանազան միջոցառումներով շեղել նրանց ուշադրությունը, կտրել պատերազմական ծանր օրերից, փորձել մեղմել նրանց ճնշված ներաշխարհը ու որոշակի դրական լիցքեր հաղորդել նրանց միապաղաղ ու տխրամած հոգիներին: Ուզում ենք ամեն ինչ անել՝ մատուցել սերնդի ժպիտը վերադարձնելու, առօրյան հագեցնելու և նրանց կյանք վերադարձնելու համար: Դժվար է, բայց հավատն էլ չի լքում մեզ»,- այսպես է ներկայացնում իրականությունը Ասկերանի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն, ուսմանավար Մելանյա Սարգսյանը «Մայրենիի շաբաթ» միջոցառման մեկնարկից առաջ:

Այո, իրոք, հետպատերազմական ժամանակահատվածում ավելի է դժվարացել մանկավարժների աշխատանքը, քանզի նրանց առջև նստած հարյուրավոր երեխաներ, որ ավագներիս պես նույնպես անորոշության օվկիանոսում են հայտնվել ու չգիտեն, թե ինչ է լինելու վաղը, օդի պես կարիք ունեն հետաքրքիր ժամանակների ու հաճելի ակնթարթների, իրավունք ունեն անհոգ ու խաղաղ կյանքի:

Հենց այս նպատակն է հետապնդել դպրոցի կազմակերպիչ Արթուր Գյանջումյանը, որը նախաձեռնել է «Մայրենիի շաբաթ»-ը՝ համագործակցելով 5-8-րդ դասարանների դասղեկների հետ, միաժամանակ ապավինելով իր ստեղծագործական կարողություններին ու տարիների փորձին:

Միջոցառմանը մասնակցում էին ութ դասարաններ, 5ա և 5բ, 6ա, 6բ, 7ա, 7բ, 8ա, 8բ:

Առաջին օրը սովորողները հանդես եկան իրենց ողջույնի խոսքով, որով փառաբանում էին մեր լեզուն ու խոսքը: Հատկապես տպավորիչ էին 6ա դասարանի աշակերտուհի Լինա Շեկյանի ասմունքը (Գևորգ Էմին, «Պատգամ»), որով կոչ էր անում. «Զգույշ քայլի շայտատանում, Նեղ են ճամփեքը լեռնական...», և 8բ դասարանի աշակերտուհի Վերա Բաղդասարյանի «Հայրենիքիս ջուրը» հոգեցունց երգը: Կրկնակի էր նրա հուզմունքը, քանի որ դաժան պատերազմում նա էլ կորցրել էր հայրենի Ավետարանը:

Երկրորդ օրը սովորողներին առաջադրված աշխատանքներով նպատակ ունեին գաղափար կազմել նրանց բառագիտական ու ուղղագրական կարողությունների մասին: Առաջադրվել էին. ա) Լրացնել բաց թողած տառերը. բ) Առանձնացնել և կողք կողքի գրել իմաստով իրար նոտ բառերը. գ) Ո՞ր շարքի բոլոր բառերի արմատներին է հնարավոր կազմել բառեր -ուկ վերջածանցով. դ) Կազմել նախածանցավոր բառեր՝ սյունակներից ընտրելով համապատասխան արմատ:

Ամեն օր արդյունքներն ամփոփվում էին, և լրացվում էր ցուցանակի աղյուսակը: Սովորողներն ու դասղեկները եռանդուն աշխատում էին՝ փորձելով ամեն օր դրական առաջընթաց գրանցել արդյունքների մեջ:

Շատ հետաքրքիր էր երրորդ օրվա հանձնարարությունը: Ի՞նչ է երջանկությունը, ինչպե՞ս են այն պատկերացնում. արտահայտիչ նկարի ու գույների միջոցով: Մինչ աշակերտները կկատարեին առաջադրանքը, այդ ընթացքում ոչ մասնակից աշակերտները դահլիճի հանդիսատեսին զբաղեցրին իրենց կատարում-

ներով: 5բ դասարանի աշակերտուհի Սաննա Հայրապետյանը ներկայացրեց իր փոքրիկ շարադրությունը. «...Փոխանակ մեր դաշտերն ու անտառները աշնանային կարմիր տերևներով ու վառ գույներով ներկվեին, ներկվեցին մեր զինվորների արյունով... Թշնամու կողմից գրավված տարածքում մնաց նաև իմ հայրենի գյուղը՝ Ավետարանոցը, որտեղ անցնում էր իմ անհոգ մանկությունը: Վերքս խորն է, դժվար սպիանա...»: 8բ դասարանի Վերա Բաղդասարյանը, որն էլի Ավետարանոցից է, կատարեց «Մեր գյուղը» երգը, 6ա դա-



սարանի Հայկ Կասյանը՝ «Հերոս տղերքը մեր»: Ամեն տողի ու հնչյունի հետ թրթռում է սիրտը, փշրվում՝ հոգիդ:

Ավարտելով առաջադրանքը՝ թիմի անդամներին մեկը ներկայացնում է նկարի իմաստն ու բովանդակությունը: Մեկի համար երջանկությունը իր ընտանիքի, հարազատների, հայրիկ-մայրիկի շրջապատում է, նրանց ներկայությամբ, բայց հայրենի հողում, մյուսի համար՝ հաղթանակի, Պապիկ-Տատիկ, եռագույնն ունենալու հպարտության մեջ: Մեկի համար արևը, խաղաղու-



թյունը, աղավաղված խորհրդանշանները, աղավաղված խորհրդանշանները, մյուսի կարծիքով՝ Արցախի Պապիկ-Տատիկը, որը հավերժության ու խորագնա արմատների խորհրդանշան է՝ եռագույնով փաթաթված աղջիկը նրա ֆոնին:

7ա-ի պատկերացումը երջանկության մասին բաց վանդակով դուռն է, և աղավաղված ձայնով անհայտ մեջ. առանց ազատ ճախարհի երջանկություն լինել չի կարող: 6բ-ի նկարի առաջին պլանում Սասիներն են՝ գլխավերևում թռչող կռունկներով, որոնք զախս են դեպի Հայաստան. երջանկությունը գտնում են միայն մայր հայրենիքում: 8ա-ն այն կարծիքին է, որ երջանկի լինելու համար շատ քիչ բան է պետք, քանի որ երջանկությունը հավերժական չէ, այլ ակնթարթային, և պատկերել է աղավաղված (ազատության խորհրդանշան), ընտանիք (կյանքի կարևոր օղակ) և Մասիս սարը՝ հայրենիք վերադարձնելու ակնկալիքով:

Եվ վերջապես, 8բ դասարանի համար էլ երջանկությունը պատկերված է ծառի տեսքով, որի ճյուղերը խորհրդանշում են

գիտելիք, սեր, հույս, ընկերություն՝ լուսնի լույսի ներքո, հավատ՝ եկեղեցու պատկերով: Այս ամենն ունենալու դեպքում է մարդը երջանիկ:

Սովորողները հանդես էին բերել իրենց մտավոր ու հոգևոր ներուժը, գեղեցիկ երևակայությունը:

Օրվա ամփոփիչ խոսքում Ա. Գյանջումյանը, գնահատելով աշակերտների հանդես բերած ունակությունները, միաժամանակ նշեց, որ երեխաները դեռ շատ անելիք ունեն կապակցված խոսքը գարգացնելու գործում: Խորհուրդ տվեց շատ կարգալու շատ բան սովորել:

Չորրորդ օրը հանձնարարվեց բացատրել տրված շրջապատներն ու դարձվածքները:

Երեխաներն աշխատում էին. կազմակերպիչ Ա. Գյանջումյանը հարց ուղղեց դահլիճում նստած աշակերտներին՝ ես ուզում եմ...:

Ինչքան էլ փորձ էր արվում երեխաների ուշադրությունը շեղել պատերազմական գործողություններից, այնուամենայնիվ, նրանց հիշողու-



թյունը պատվում էր այդ աղետի շուրջ: Եվ ահա, 6ա-ի աշակերտ Գոռ Դանիելյանը շեշտադրված ասում է. «Ես ուզում եմ, որ բոլոր մայրերը գտնեն անհայտ կորած իրենց որդիներին», երկրորդն ասում է. «Ես ուզում եմ, որ մեր կորցրած հողերը վերադարձվեն», երրորդն ուզում է, որ վերադառնա հայրենի գյուղ, չորրորդն էլ ուզում է, որ Արցախը ճանաչվի աշխարհի կողմից: Մեկը մեկից հուզիչ ու սրտամաշ ցանկություններ, որ պարտել է մեր մանուկներին ու պատանիներին:

Հինգերորդ օրը սովորողները բառքամոցի էին աշխատում, հետո խառնված բառերով վերականգնում նախդասությունը: Վերջին առաջադրանքում դժվարացան: Համոզված են՝ ուսուցիչները հաշվի կառնեն այս հանգամանքը:

Վեցերորդ՝ եզրափակիչ օրվա առաջադրանքը նախօրոք հանձնարարված էր. ա) «Ինչպե՞ս են տեսնում Արցախի ապագան»՝ շարադրություն և բ) նկար-պատմություն. երեխաները պետք է պատմեին նկարի բովանդակությունը:

Դասարանները հերթով ներկայացնում էին իրենց աշխատանքները: Ուշագրավ էր հատկապես 6ա դասարանի աշակերտուհի Աննա Սարգսյանի շարադրությունը. «Հայի բնօրրանը, հույսն ու հավատը՝ Արցախը, եղել է, կա ու կմնա, քանի բաբախում է երկիր մոլորակի սիրտը: Ես հավատում եմ դրան: Ես, որ վերջին անգամ կարող եմ մայրել է իր հերոսական Քարին տակ գյուղին ու տխրամած հեռացել՝ վերադառնալու հույսը փայփայելով:

Ինձ սիրեցին նոր միջավայրում, ես սիրեցի բոլորին, դպրոցը, սակայն իմ առօր-

յայի մեջ միշտ պակասում է մի բան... իմ հարազատ գյուղը:

Թող թշնամին չցնծա իր չվաստակած հաղթանակով. ամեն գիշերից հետո նոր օր է բացվում, ամեն գարնան հետ առավել խիտ է անտառը հառնում: Կհառնի կտրված իմ ժողովուրդը կրկին: Չսպիացող վերջից տնքացող Արցախը դեռ կտոնի իր հաղթանակը:

Ես չեմ ուզում օտար հողում հայրենիք փնտրել: Ուրիշ ոչ մի տեղ Արցախի հող ու ջրի քաղցրությունը չկա, մայրական ջերմ գիրկ ու հայրենի երգ չկա:

Ատում եմ պատերազմը: Սիրում եմ Արցախս, հավատում եմ, որ նա իր ամբողջության մեջ էլի մերը կլինի: Նրանով է սկսվում ու վերջանում իմ աշխարհը»:

Այն ըստ արժանավույն գնահատական ստացավ ժյուրիի կողմից, իսկ Աննան էլ իր մայրենիի ուսուցչուհու կողմից (Սյուզաննա Աղաջանյան) պարգևատրվեց «Հայոց լեզուն տունն է հայուն» գեղեցիկ պատասառով:

Նկար-պատմությունը ներկայացնելու ժամանակ առանձնապես աչքի ընկավ 8ա դասարանի աշակերտուհի Սոնիկա Արզումանյանը, որն իր գրագետ ու պերճախոս լեզվով ներկայացրեց նկարի բովանդակությունը. «Առաջին պլանում Ասկերանի բերդն է, որ Արցախի դարպասն է և մեծ առաքելություն ունի: Վերևում Արցախի անդրորդ հսկող ամվեներ գինվորներն են: Աջ ու ձախ կողմերին մեր հավերժության խորհրդանշաններն են՝ հազարամյա Տնջրին, Տիգրանակերտը, Գանձասարը, իսկ Վանքի հսկա Առյուծը մեր աննկուն գինվորների արտական ոգին է նախանշում: Մեր կանգուն ենք մեր տոկունության, անրության ու հավատի շնորհիվ»:

Լավատեսական այսպիսի տրամադրություններ արտահայտող աշխատանքը գնահատվեց բոլոր կողմից լավագույնը, որի համար էլ ժյուրիի գնահատականից գատ Ա. Գյանջումյանն իրեն իրավունք վերապահեց ավելացնել ևս 2 միավոր:

Ամփոփվեցին մեկշաբաթյա աշխատանքները, որոնք, իհարկե, շատ բանով նպաստեցին սովորողների գիտելիքների հարստացմանը, հետաքրքրություն ծնեցին նրանց մեջ դեպի ուսումը:

Թիմային աշխատանքը պետք է պարտավորեցնի թիմի յուրաքանչյուր անդամի, որ հետագայում ավելի մեծ պատասխանատվություն հանդես բերի նման մրցույթներում:

Մայրենիի շաբաթվա ընթացքում անդրադարձ է արվել նաև Մեծ Լոռեցու ծննդյան տարեդարձին ու գիրք նվիրելու ավանդույթ դարձած տոնին:

Միջոցառման ավարտին ամփոփվեցին վեցօրյա աշխատանքները: Մրցակցային առաջին տեղն զբաղեցրեց 8ա դասարանի թիմը՝ 100 միավորով և պարգևատրվեց քաղաքապետի հուշանվերով, երկրորդ տեղը՝ 6ա դասարանը՝ 96 միավորով, և երրորդ հորիզոնականը՝ 7ա-ն՝ 85,75 միավորով:

Եզրափակիչ խոսքում դպրոցի տնօրեն Մարելա Ավանեսյանն ընդգծեց, որ գիտելիքը մարդու անմկառ զենքն է, պետք է միշտ պայքարել հարստացնելու այն և կոչ արեց միշտ գինված լինել նրանով:

Այնուհետև դահլիճը թնդաց պատերազմի օրերին հնչած «Պիտի ապրենք» երգով, որի խոսքի հեղինակը Ա. Գյանջումյանն է, երաժշտության հեղինակը՝ Էդգար Գյանջումյանը:

Այո, մենք պիտի ապրենք ու արարենք, հարատենք՝ ի հեռուկա մահի:

Այսպես կրթենք մեր մատաղ սերնդին ու առավել ամխոցելի դարձնենք:

Սա է մեր գոյի խորհուրդը:

ԿԱՐՄԻ ՇՈՒԿԱ

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ՄԵՐ ՀՈՂԻ ՎՐԱ ԱՄՈՒՐ ԿԱՆԳՆԵՆ Է



Մարտունու շրջանի Կարմիր շուկայի դպրոցը Արցախի շատ կրթօջախների համեմատությամբ պատերազմից հետո, ավելի ուշ՝ հունվարի 8-ին վերակսեց ուսումնական գործընթացը՝ պայմանավորված նրանով, որ գյուղը մեծ ավերածությունների է ենթարկվել թշնամու հրետակոծության հետևանքով: Նմանապես՝ դպրոցը, որը պատերազմի ժամանակ վերածվել էր հոսպիտալի և թշնամու թիրախում էր օրեր շարունակ:

Դպրոցի տնօրեն Զավեն Բաղասյանը նոր է նշանակվել այդ պաշտոնում: Մինչև պատերազմը նա Թաղավարդի դպրոցի գինղեկն էր, որի անունը տարիներ շարունակ հուլվել է որպես «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լավագույն մասնագետ. վերջին յոթ տարիներին Արցախի ՆՁՊ թիմն էր ՀՀ օլիմպիադայում անփոխարինելի հաղթողը, որի կազմում պարտադիր Թաղավարդից աշակերտ կար: Թիմի բոլոր անդամներն ուսուցիչների հետ միասին ամեն տարի ԱՀ նախագահի նստավայրում արժանանում էին նրա հատուկ պարգևին:

Այսօր Թաղավարդ գյուղի կեսը, դժբախտաբար, թշնամու վերահսկողության տակ է: Զ. Բաղասյանի հետ մեր զրույցն սկսեցինք դրանից. ինչպե՞ս թշնամուն հաջողվեց ներխուժել Թաղավարդ, որի պաշտպանների մեծ մասը, ըստ էության, Զ. Բաղասյանի դաստիարակած սերունդն էր, որին վիճակված էր դպրոցում ստացած ՆՁՊ գիտելիքները փորձարկել հայրենի գյուղի պաշտպանության ժամանակ:

Ձինդները պատմեց, որ ինքն էլ է զինվորագրվել հայրենիքի պաշտպանությանը: Եղել է վաշտի հրամանատար: Սկզբում որպես աշխարհագրային Ջաբրայիլում էր, իր խմբով վերջինն է դուրս եկել այդտեղից: Այնուհետև զբաղվել են իրենց գյուղի պաշտպանության հարցերով: Հրամանատարը Արարատ Մելքոնյանն էր (մինչև վերջերս նա Մարտունու շրջապահակազմի ղեկավարն էր), շտաբի պետը՝ Նորայր Սուսայելյանը: «Եղած գործով կազմակերպել ենք գյուղի պաշտպանությունը, այդքանն էլ հաջողվել է՝ երևում է՝ հրամանատարը չէր ուզում մամրանասել, այնուամենայնիվ, որոշ եզրահանգումներ ներկայացրեց: Թշնամին եկել էր ամեն տեսակի զենքով՝ օդուժով, տանկով, մեքենայով, հետևակով, բայց մենք չունեինք այդպիսի զենքեր: Այդ տեսակետից մենք թույլ էինք, մարդկային գործոնն էլ էր դեր խաղացել: Մեր գյուղի դիրքն այնպիսին է, որ թշնամին երեք կողմից հարձակվել է, երեք կողմից է ցանկացել մտնել գյուղ: Իսկ մեր մարդիկ քիչ էին, որ կարողանային բոլոր կողմերից պաշտպանություն իրականացնել: Գյուղում վերջին պահերին քիչ մարդ է եղել: Եթե բոլորը մնացած լինեին, ավելի լավ արդյունք կունենայինք: Դա էլ իր պատճառներն ունի. ուժերի անհավասարություն կար, դավաճանության մասին էին խոսակցություններ գնում, բոլորը չէ, որ կարող էին հաղթահարել խուճապային տրամադրությունը և դիմարդել: Բայց եղածները կանգնել են մինչև վերջ: Միայն Թաղավարդը 12 զոհ է տվել: Շատ զոհվողներ են եղել նաև ուրիշ տեղերից օգնության եկածներից: Եվ արդյունքում ունենք այն, ինչ հիմա ունենք. գյուղի կեսում թուրքերն են, կեսում՝ մեր բնակիչները: Դաշտերի մեծ մասը մնացել է թշնամու: Գյուղացիները մշակում են իրենց տնամերձերը, անասուններ պահում, ինչքան գոմուս հնարավոր է: Մի կերպ յուրա են գնում»:



Զ. Բաղասյանն էլ է գյուղի այն մասից, որը գտնվում է թշնամու վերահսկողության տակ: Կորցրել է տուն-տեղ, ապրուստ: Բայց իրեն չի

հաշվում տուժած, քանի որ, ըստ նրա, մարդկային կորուստներն են անդամալի, մնացածը կարելի է վերականգնել:

Կարմիր շուկայի դպրոցում պատերազմից տուժած ուսուցիչներ կան. մեկի տղան է զոհվել, անհայտության մեջ աշխատող ունեն...

Դպրոցը մեծ ավերածությունների է ենթարկվել: Առաջնահերթը դրանք վերացնելն էր, որպեսզի դպրոցական զանգի կանչով գյուղ վերադառնան տարբեր տեղերում ապաստանած բնակիչները: Դպրոցը պետության ուշադրության կենտրոնում է: Կարճ ժամանակում փոխվել են ջարդված դուռ-պատուհանները, լուծվել է էլեկտրամատակարարման ու գազամատակարարման խնդիրները: Դպրոցը ջեռուցվում է կենտրոնական ջեռուցմամբ, դասարանները տաք ու լուսավոր են:

Հունվարի 8-ին, երբ վերսկսվեց ուսումնական գործընթացը, դպրոցում 78 աշակերտ կար: Իսկ փետրվարի 15-ի տվյալներով՝ 151, որից 7-ը գալիս է Թաղավարդից: Մինչև պատերազմը սովորում էր 240 աշակերտ: «Գյուղում բնակարանային խնդիր կա, հիմնական պատճառը դա է, որ



բնակիչների մի մասը դեռ չի վերադարձել, ապրելու տեղ չունեն: Ավերված տները դեռ վերանորոգման փուլում են: Իմ կանխատեսմամբ՝ մինչև ուսումնական տարին ավարտվելը կունենանք 200 աշակերտ», - ասաց Զ. Բաղասյանը՝ հավելելով, որ ուսուցիչներն էլ, բացի երկու հոգուց, վերադարձել են, մասնագետի խնդիր չունեն: Հիմնականում տեղի ուսուցիչներն են, միայն ինքն է Թաղավարդից, մեկ էլ մաթեմատիկայի ուսուցիչը՝ Թաղավարդ Կալերից:

Դպրոցը զույգի մասով է որոշ վնաս կրել: Համակարգչային դասարանում միայն 12 նութբուք ունեին, հիմա չկան: «Տարբեր տեղերից աշակցել են, երկուսը տվել են, յուրա չի

գնում, բայց խոստացել են, որ էլի կտան», - ասաց տնօրենը՝ նշելով, որ զույգի մասով վնասի հայտը ներկայացվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարություն:

Կարմիր շուկայի մերձակայքով ռուս խաղաղապահների ուղեկցությամբ Շուշի գնացող աղբերանցիներ են անցնում: Ինչպե՞ս է դա ազդում բնակիչների, կոնկրետ ուսուցիչների ու աշակերտների հոգեբանության վրա: «Շփման



մեջ չենք մտնում, իրար խեթ-խեթ նայելով գնում ենք», - ասաց զույգակիցս:

Հունվարի 28-ին դպրոցի բակում մեծ միջոցառում են անցկացրել՝ նվիրված Հայրենյաց պաշտպանի օրվան: Հրավիրվել էին պատերազմի վետերաններ, զինծառայողներ, գյուղի բնակիչներ: Միջոցառումը սկսվել էր Արցախի օրհներգով. «Նպատակն է եղել հավաքվածների գիտակցությանը ևս մեկ անգամ հասցնել, որ բանակը, որն այնքան հաղթանակներ է բերել մեզ, դիրքերում կանգնած մեր տղաներն են, որ կազմակերպված պահպանում են մեր անդորրը: Հարգել ենք զոհվածների հիշատակը: Աշա-

կերտներն իրենց բանաստեղծությունների, երգերի մեջ արտահայտել են այդ սերը»:

Ավանդույթը պահպանվում է. Ձինդեկ Կարո Ավարյանն ասաց, որ ՆՁՊ դասը սկսելուց առաջ դպրոցի բակում դասարանը շարվում է, Արցախի օրհներգը երգում, ապա շարային քայլվածքով մտնում դասարան: Դպրոցում շաբաթական հինգ ՆՁՊ դաս է անցկացվում, ասել է թե՛ շաբաթվա մեջ հինգ անգամ դպրոցի բակում բարձր հնչում է Արցախի օրհներգը:

Ուսումնական մասի վարիչ Սուսաննա Հարությունյանի հետ շրջում ենք դասարաններով: 10-րդում ֆիզիկայի դաս էր: Ուսուցչուհի Անահիտ Հարությունյանից մի քանի րոպե խնդրեցինք՝ «Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր ապագան» հարցով փոքրիկ ճեպագրույց անցկացնելու:

«Դեպի լավը պետք է գնանք: Դիտի այստեղ ապրենք, որ լավ լինի», - ասաց Աննա Բալայանը:

Տղաներից Հայկ Գրիգորյանը, Ալեքս Ասրյանը, Արամայիս Այվազյանն ասացին, որ դպրոցն ավարտելուց հետո նախ և առաջ իրենց գործն է լինելու որպես զինվոր ծառայել բանակում:

«Ինչո՞ւ պարտվեցինք» հարցը դեռահասներին էլ է մտահոգում: Ըստ նրանց՝ երկրի վատ կառավարումն էր գլխավոր պատճառը, այն, որ լավ չէինք նախապատրաստվել պատերազմին: Տեխնիկական լավ չէինք գինված: Ֆիզիկայի, տեխնոլոգիաների դար է: Մենք պիտի ունենայինք մեր սեփական զենքը, պիտի կարողանայինք սարքել: Թշնամին այդ զենքը ձեռք է բերել փողի միջոցով, բայց մենք ի վիճակի ենք դա ստեղծել մեր ուժերով: Ասացին, որ այդ հարցերը պետք է լինեն պետության ուշադրության կենտրոնում. «Մենք էլ մեր լավ սովորելով, մասնագիտական ճիշտ կողմնորոշում ունենալով պիտի նպաստենք դրան: Մեր սերունդը պիտի լուծի այդ հարցը»:

Իսկ աղջիկներից երկուսն էլ ասացին, որ բուժքույր են ուզում դառնալ. և՛ խաղաղ, և՛ առավելապես պատերազմի ժամանակ այդ մասնագիտությունը շատ անհրաժեշտ է: «Բայց ամենակարևորը մեր հողի վրա ամուր կանգնելն է», - ասացին նրանք:

1-ին դասարանում երեխաները նստած են մի գծի վրա գտնվող նստարաններին: Դասավար Հասմիկ Սահակյանն ասաց, որ այդպես ավելի հարմար է. ինքը կարողանում է հայացքով բոլորին ընդգրկել, նրանք էլ իրենց ավելի ապահով են գզում կողք կողքի: Առաջին օրերի համեմատությամբ, երբ ավելի վախվորած էին, հիմա ավելի համարձակ ու աշխույժ են: Այնուամենայնիվ, նրանցից մեկը տարբերվում էր: Թաղավարդ Կալերից է: Դեռ չհարմարված դպրոցական կյանքին՝ ստիպված էր դպրոց փոխել: Դժվար է մերվում նոր պայմաններին, բայց դասավարը հոգ է տանում, որ նա շուտ դուրս գա այդ վիճակից:

Դասամիջոցի զանգը հնչելուն պես կրտսեր և միջին դասարանների երեխաները դուրս թան բակ, աղմուկով սկսեցին վազվզել: Մեր տարածաշրջանին անտեղյակ մարդը բոլորովին չի կասկածի, որ նրանք պատերազմ են տեսել: Ճիշտ են ասում, որ փոքրերն արագ են հարմարվում իրավիճակին, եթե մեծերը չվախեցնեն: Ես էլ անհարկի մի հարց տվեցի բակի նստարանին նստած տղաներին: «Չե՞ք վախեցնում, երբ մոտիկից թուրքեր են անցնում»: «Ինչո՞ւ մենք վախենանք, իրենք թող վախենան, որ մտել են հայի տարածք», - ասաց Ռոմա Առաքելյանը:

Ռուս խաղաղապահներն են այցելում դպրոց: Նրանք դասեր են անցկացրել առաջին բուժօգնության, չպայթած զենք-զինամթերքից զգուշանալու, հոգեբանական թեմաներով: Փետրվարի 2-ին նրանք պարապմունքը նվիրված էր Ստալինգրադի ճակատամարտի հաղթանակի օրվան, պատմում են նաև նրանում հայ զորավարների դերի մասին:

Դպրոցը և ընդհանրապես ողջ համայնքը տարբեր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում են և աջակցություն են ստանում:

ՍՈՍ

ԱՅՍՏԵՂ ՀՈՒՅՍԻ, ԼՈՒՅՍԻ, ՀԱՎԱՏԻ ԶԱՆՔՆ Ե ՀՆՉՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ



կապես, երբ տարածքից ոչ շատ հեռու թշնամին է դիրքավորված:

«Հիմա ավելի բարձր և ավելի շատ պիտի հնչեցնենք մեր ազգային երգն ու պարը: Պայքարի այդ զենքը մեր ձեռքից չպետք է բաց թողնենք»,- ասաց Արսենը՝ կանխելով մեր հարցը: Ուսուցիչ, որ իր համագյուղացիների հետ որպես աշխարհագրային, իսկ որդին էլ որպես պահեստագրային մասնակցել են 44-օրյա պատերազմին՝ ամեն վայրկյան նայելով մահվան աչքերին: Թշնամին հասել էր մինչև Սոսի մատույցները, բայց մեր գործին հաջողվել է կասեցնել նրա մուտքը գյուղ: Այնուամենայնիվ, այն որոշ ավերածությունների է ենթարկվել: Մասնավոր-

թշնամու վերահսկողության տակ են), բայց էլի ունեն և կարիք ունեցողներին սիրով կտրամադրեն:

Սոսի դպրոցը հանրահայտ է իր մարզական հաջողություններով: Մարզադահլիճը, որն իրենից ներկայացնում է առանձին շենք, նույնպես շահագործման է հանձնվել նոր դպրոցի հետ: Այն կրում է ֆիզկուլտուրայի վաստակավոր ուսուցիչ Արամ Բալայանի անունը: Այսօր նրա ավանդույթները շարունակում է Դարիբ Ահարոնյանը՝ նույնպես վաստակավոր մանկավարժ: Ահարոնյանների ընտանիքն Արցախում հայտնի է որպես «Մարզական ընտանիք» մրցույթի 11-ակի հաղթող, նաև՝ Հայաստանում, ինչքան որ այդ մրցույթը գոյատևել է: Նրանց օրինակը Սոսում շատ ընտանիքների համար է վարակիչ եղել: Մարզական կարիքների մի պատն զբաղեցնում են դպրոցի նվաճած մրցանակները: Դրանց մեջ իր մնայուն տեղն ունի ԱՅ Ազգային ժողովի՝ թեթև ֆուտբոլային զոնով երեք տարի անընդմեջ շահած գավաթը: Դպրոցում հովանավորչական միջոցներով գործում են տարբեր մարզական խմբակներ: Մարզադահլիճը երեկոյան ժամերին ծառայում է գյուղի երիտասարդներին:

Սոսի դպրոցը ժամանակին եղել է Արցախի բնագիտական առարկաների

դարբնոց: Դպրոցի անունը բարձրացրել են Բենիկ Ավագունյանը, Արտեմ Մուսայեյանը, Արտաշես Գասպարյանը, Ֆրունզե Բալայանը, Լաուրա Ջիվանշիրյանը և ուրիշներ: Այսօր դպրոցում աշխատում են նրանց շահավիղները, իսկ ամենապատանիներն այս տարի մասնակցել են մաթեմատիկա, կենսաբանություն առարկաների հանրապետական օլիմպիադային:

Դպրոցի տարածքը դարձել է յուրատեսակ կրթահամալիր: Ինչպես ասացինք, այստեղ տեղակայված է նաև ճարտարի արվեստի դպրոցի մասնաճյուղը: Երեխաներից շատերն իրենց զեղագիտական զարգացումն ստանում են այստեղ: 6-րդից Կարեն Հարությունյանը հենց բակում ցույց տվեց ապագա օպերային երգիչ դառնալու իր տվյալները՝ կատարելով իտալական դասական մի երգ:

Շատ քիչ կրթօջախներ են իրենց գործընթացը վերսկսել դեկտեմբերի 1-ին: Սոսի դպրոցը դրանցից մեկն է: Այն գրեթե լրիվ աշակերտակազմով է. 175 հոգուց միայն 4-ը չի վերադարձել ՀՀ-ից:

Դպրոց հաճախ են այցելում ռուս խաղադասերը և տարբեր թեմաներով դասընթացներ անցկացնում: Նրանք հաճելիորեն զարմացած են, որ աշակերտներն ասես պատերազմի մղձավանջ չեն ապրել: «Մեր մանկավարժական կազմով որոշում ենք ընդունել երեխաների հոգին չաղտորել պարտության վերաբերյալ զրույցներով»,- ասաց տնօրեն Մ. Վանյանը:

Չի կարելի ասել, թե դպրոցը գերծ է խնդիրներից: Նորակառույց դպրոցը կառուցվել է առանց բակի ջրահեռացման համակարգի: Ժամանակին նրա ընդարձակ տարածքում մարզադաշտ կար, որի մի հատվածն ընկել է նոր կառուցված մարզադահլիճի տակ, իսկ մյուս մասը պարապուրդի է մատնված, ցանկապատված չլինելու պատճառով հավերժ ու սագերն են այնտեղ անարգել զբոսնում: Տնօրենի պարզաբանմամբ՝ տարածքն իրենց ուժերով կարող են մաքրել, բայց մարզադաշտ դարձնելու համար ֆինանսական միջոցներ են հարկավոր, որը նախընտրական հավաքներում խոստացել են, սակայն պատերազմը խանգարեց իրագործել: Բայց հուսով է, որ դրա ժամանակը շատ չի ուշանա:

Սոսում բարի ավանդույթները շարունակվում են, քանի որ այստեղ հույսի, լույսի և հավատի զանգն է ամեն օր հնչում:


Ս.Խ.

«Ի՞նչ գեղեցիկ զանգ ունենք»,- Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցից ետպատերազմյան մեր այցի առաջին տպավորությունն էր: «Մեր գյուղի եկեղեցու զանգն է, որի մասին վերջերս ենք իմացել: Մենք չգիտեինք, որ մեր դպրոցի զանգն այդքան հին է: 2,5 տարի առաջ հյուրեր ունեինք Հայաստանից: Նրանք ասացին, որ եկեղեցու զանգ է ու այն էլ՝ շատ հին: Հետաքրքրվեցինք և իմացանք, որ մեր սուրբ Գևորգ եկեղեցու զանգն է և մոտ 250 տարվա պատմություն ունի: Շատ ուրախացանք, որ մեր եկեղեցու զանգն է դողանցում, դասի կանչում մեր երեխաներին: Ու նաև ավստացինք, թե ինչու չի գործում մեր եկեղեցին: Այն պահեստի էր վերածվել 1920-ական թթ. սկզբին: Շատ վատ, կեղտոտ վիճակում էր: Դպրոցի նախաձեռնությամբ և համայնքի ղեկավարի աջակցությամբ մաքրեցինք շրջակայքը և պահպանում ենք որպես մշակութային արժեք»,- պատմում է դպրոցի տնօրեն Մանուշ Վանյանը:

«Այստեղ հույսի, լույսի և հավատի զանգն է հնչում ամեն օր»,- այս մտքերով ոտք դրինք դպրոցի շենքին, երբ մեկ այլ բանից անակնկալի եկանք: Հենց մուտքում լսեցինք ազգային երաժշտության բարձր ծայր: Ամնիջապես կռահեցի. «Ազգային երգ-պար»-ի դաս է, և ուսուցիչն էլ Արսեն Բաղդյանն է: Նա, որի մասին հոգիս էի գրել չուրջ երկու տասնամյակ առաջ: Գաղափարն այս էր. շատ գյուղերում մշակույթի տներ կան՝ համապատասխան հաստիքներով, բայց ըստ էության դրանք չեն գործում, քանի որ մասնագետներ չեն աշխատում, իսկ Սոսում մշակույթի տուն չկա, բայց այնտեղ ապրում է մի երիտասարդ երաժիշտ՝ Արսեն Բաղդյանը, որը գյուղի պատանիներին հավաքած՝ իր տանը նրանց դուրս, շվի, դիոլ, կլարնետ նվագել է սովորեցնում, ժամանակ առ ժամանակ էլ բացօթյա համերգ կազմակերպում գյուղի բնակիչների համար: Իսկ ամառ նրան տեսել էի Ստեփանակերտում՝ «Ազգային երգ-պար» առարկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին, որն անցկացնում էին «Կարին» համույթի տղաները՝ նրա ղեկավար Գագիկ Գինոսյանի ղիսավորությամբ: Ուրախացա, որ Արսենը շարունակում է երեխաներին երաժշտական կրթություն մատուցելու իր բնատուր առաքելությունը:

Իսկ դասարանում հետևյալ պատկերին ականատես եղանք. երեխաներն ուսուցչի հետ ու ուսի շուրջապար էին բռնել՝ կատարելով նրա իրահանգները: Ձեռքով մշան արինք, որ շարունակեն. հաճելի էր մեր օրերի տրամուխան մեջ ոգևորիչ հնչյուններ լսել, հատ-

րապես, դպրոցի ինֆորմատիկայի կաբինետը շարքից դուրս է եկել արկի ուղիղ հրետակոծությունից: Հարյուր և ավելի քան մեկ տասնամյակը բոլորած կրթօջախի նոր շենքը շահագործման էր հանձնվել 2017 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԱՅ կառավարության համաֆինանսավորմամբ: Դպրոցի տնօրենն ասաց, որ հիմնադրամը խոստացել է վերականգնել վնասը: Հին դպրոցաշենքը ևս օգտագործվում է: Նրա մի մասը հատկացվել է արվեստի դպրոցին, իսկ մյուս մասում շարունակում



են տեղակայված մնալ արհեստանոցը, գրադարանի մի մասը: Այն նաև որպես պահեստ է ծառայում չօգտագործվող, բայց բավականին քարմ դպրոցական գույքի համար: Տնօրենն ասաց, որ մի շարք դպրոցների տրամադրել են այդ գույքից (ցավոք, դրանք այժմ

ՎԱՂՈՒՄ

ԲԺԻՇԿՆԵՐ «ԱՐՏԱՂՈՂ» ԳՅՈՒՂ



Ստեփանակերտի 30-րդ դպրոցում փետրվարի 6-ին անցկացվեց բնագիտական առարկաներից վերջին կենսաբանության հանրապետական օլիմպիադան: Մասնակցում էր 9-12-րդ դասարանների 15 աշակերտ, օլիմպիադան վերահսկող՝ ԱՅ ԿԳՄՍ ներկայացուցիչ Անահիտ Մկրտչյանի բնորոշմամբ՝ ապագա բժիշկները, քանի որ այդ աշակերտների գերակշիռ մասը դիմելու է բժշկական համալսարան: Մասնակիցների ցուցակն այսպիսի վիճակագրություն էր ներկայացնում. երկու հոգի Ստեփանակերտից են (հ. 8 և ֆիզմաթ դպրոցներ), չորսը՝ Մարտունու շրջանից (Մարտունու հ. 1, Զեքերի, ճարտարի, Սոսի դպրոցներ), երկու հոգի՝ Ասկերանի շրջանից (Ասկերանի և Նորագյուղի դպրոցներ), յոթը՝ Մարտակերտի շրջանից, որոնցից մեկը Զաթերքից, վեցը՝ Վաղուհասից:

Ինչպես տեսնում ենք, մասնակիցների կեսից մի քիչ պակասը բաժին է ընկնում Վաղուհաս գյուղին: Նրանց համար, ովքեր քիչ թե շատ ծանոթ են գյուղական այս դպրոցին, զարմանալի չէ նման առավելությունը: Անգամ Երևանի Մ. Զեքերու անվան բժշկական համալսարանում երբ ծանոթանում են ուսանողների ցուցակին, ընթերցելով նրանց անվան դիմաց գրված «Վաղուհաս» տեղանունը, ասում են. «Հա՛, սա այն բժիշկներ «արտադրող» գյուղն է»: Տողերիս հեղինակը տարիներ առաջ է բացահայտել այդ «արտադրանք»-ի հեղինակին՝ քիմիա-կենսաբանության երիտասարդ ուսուցչուհի Լիլիթ Ազիզյանին և ականատես եղել, թե որքան են սիրում նրան աշակերտները: Իսկ հայտնի բան է, առարկայի նկատմամբ աշակերտի սերն ուղիղ համեմատական է ուսուցչի հանդեպ ունեցած սիրուն: Նա այնպես է իր դասավանդած առարկաների նկատմամբ սեր առաջացրել սաների մեջ, որ նրանց համար ամենահետաքրքիր պահերը սիրելի ուսուցչուհու հետ անցկացնելն է, լինի դասապրոցեսին, թե դասերից դուրս՝ տնից դպրոց և դպրոցից տուն ոչ այնքան կարճ ճանապարհը նրան խմբով ուղեկցելիս, դասամիջոցներին կամ այլուր:

Օլիմպիադայի օրվա առավոտյան այս հետաքրքիր «չբախմբին» պատահական հանդիպեցի Ստեփանակերտի ավտոկայանում, որը նոր էր գյուղից հասել: Երեխաների բարձր տրամադրությունը հուշում էր, որ եկել են հաղթելու մտադրությամբ: Մի քանի ժամ կար մինչև օլիմպիադան, և ուսուցչուհին նրանց հետ ուղղվեց դեպի իր հայրական տունը: Լրագրողիս համար նման առիթը կորցնելը սխալ կլիներ, և հերոսուհուն կրկին տեսակցելու նպատակով մի քանի ժամ անց հ. 9 դպրոցում էի: Կողմնակի անձանց մուտքը երրորդ հարկի այն մասում, որտեղ ընթանում էր օլիմպիադան, արգելվում էր: Աշակերտներին ուղեկցող ուսուցիչներն սպասում էին առաջին հարկում կամ բակում: Այնպես որ, հատկացված երեք ժամը լիուլի բավարար էր ամեն ինչի մասին գրուցելու:

Լիլիթ Ազիզյանը, որ հիմա նաև ուսմասվարն է, պատմեց, որ իրենց դպրոցը նույնբերի 30-ից բնակամոն ռիթմով աշխատում է: Ուրախ են այն բանի համար, որ այս պատերազմում համայնքը չի տուժել, չհաշված Վաղուհասի և նրա կազմում ընդգրկված խնկավանի երկուական գոհերը: Արցախյան առաջին պատերազմում այս գյուղերը հիմնահատակ ավերվել էին, մեծ թվով գոհեր տվել, բնակիչներն ամեն ինչ սկսել էին զրոյից: Կարճ ժամանակում գյուղը վերականգնվել է, աճել և նույնիսկ առաջ անցել նախապատերազմյան մակարդակից: Այս պատերազմի ընթացքում երկու բազմազավակ ընտանիք է, որ

Չայաստանից չի վերադարձել: Յոթ աշակերտ ունեն՝ տեղահանված Չարեքտար և Մատաղիս գյուղերից: Դպրոցում հիմա սովորում է 178 աշակերտ, 4-ով ավելի, քան մինչև պատերազմն էր: Բացակայող ուսուցիչ չունեն: Լիլիթը պատմեց, որ ներկայում գյուղում բնակարանաշինական մեծ գործընթաց է սկսված. ինչքան ազատ բնակֆոնդ կա, նվազագույն պայմաններն ապահովում են, որ տեղահանված բնակիչներին տրամադրեն: Խոսքը միայն այդ 7 աշակերտների ընտանիքների մասին չէ. գյուղը պատրաստվում է տեղահանված նոր ընտանիքների ընդունել: Լիլիթն ուրախությամբ փաստեց, որ գյուղում ամենացավոտ՝ ջրի հարցը կարգավորված է: Բնակիչները ձեռքով էին ջուր կրում աղբյուրներից, տնամերձերը անձրևի հույսին էին: Պատերազմից մեկ օր առաջ էր արտեզյան ջրհորը գործարկվել, բայց չհասցրին օգտագործել: Արդեն մեկ շաբաթ է, ինչ գործարկվել է: Հիմա լիուլի կարող են օգտագործել և տան, և բանջարանոցների համար: Էլեկտրական հոսանքն էլ արդեն նորմալ է, ինտերնետն է, որ շատ թույլ է: Հուսով է, որ շուտով դա էլ կվերականգնվի:

Գյուղի մասին խոսելու շատ նյութ կար, բայց կոնկրետացանք դպրոցի վրա: «Այս տարի մենք մի լավ ձեռքբերում ունեցանք. ֆիզիկայի նոր ուսուցիչ ունենք՝ Լուսին Միրզոյանը, որը ԱրՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինն է գերազանց ավարտել: Ստեփանակերտում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում է եղել աշխատելիս: Հարս է եկել մեր գյուղ: Շատ զոհ ենք, խոստումնալից մասնագետ է՝ ուրախությամբ ասաց Լիլիթը, որն արդեն նաև որպես կրթօջախի ուսումնական գործընթացի պատասխանատու է մտահոգված դպրոցի առաջընթացով, եթե գու՜մարենք, որ ամուսինն էլ՝ Հովհաննես Պետրոսյանը, համայնքի ղեկավարն է: Փետրվարի 10-ին մեկ այլ ուրախացնող նորություն

նակային տեղեր գրավում: Պատերազմի ժամանակ, երբ Երևանում էին, 8-րդ դասարանցի նրա տղան սովորել է «Այթ»-ում: Պատմել է, որ ոչ մի տարբերություն չի տեսել էլիտար այդ դպրոցի և իրենց դպրոցի միջև բնագիտական առարկաների մասով: Առավելություն տեսել է միայն լեզուների առումով:

«Վճարովի պարապմունքի մասին խոսելն ամոթ է», - ասում է Լիլիթ Ազիզյանը: Ինքը որպես փոխտնօրեն իր աշխատանքն ավարտելուց հետո առնվազն երկու ժամ մնում է դպրոցում և արտաժամյա պարապում աշակերտների հետ. «Այդ աշխատանքը ես վճարովի չեմ կարող անել: Փորձել եմ ուրիշ տեղից եկած աշակերտի հետ, մեկ ամիս աշխատել, չեմ կարողացել, թվացել է, թե մեքը եմ գործում»:

Աշակերտներն աշխարհագրությունից ավելի մեծ արդյունք են ցուցաբերում: Դա էլ առարկայի ուսուցիչ Ժիրայր Ասրյանի ներդրումն է:

Պատմության լավ մասնագետներ ունեն, բոլորն էլ տեղացի:

Դպրոցում ամուր հիմքերի վրա է կարգապահությունը: Տնօրեն Արմեն Գրիգորյանը հնուտ կազմակերպիչ է, իր գործին գիտակ: Կրթօջախում գործում են տարբեր խմբակ-



ունեն. գյուղում Հայ կրթական հիմնադրամի աջակցությամբ «Արմաթ» լաբորատորիա կբացվի:

Վաղուհասում լավագույն ավանդույթները շարունակվում են: Արցախի ամենաարագ աճող բնակավայրն է: Քաղաքից այստեղ հարս են գալիս: Եվ մի շատ կարևոր ու օրինակելի երևույթ. այստեղի աշակերտները կրկնուսույցների մոտ չեն պարապում, քանի որ դրա կարիքը չկա: Եվ ոչ միայն Լիլիթ Ազիզյանի առարկաներից, որոնցից մեծ հաջողություններ ունեն աշակերտները, այլև՝ մյուս: Կենսաբանության օլիմպիադային մասնակցող իր աշակերտները նաև մյուս առարկաներից են մասնակցել: Վարդուհիմ, օրինակ, աշխարհագրությունից ամենից բարձր՝ 19,25 միավորն է գրանցել: Այս տարի հունամիտար առարկաներից օլիմպիադա չի անցկացվում: Նախորդ տարիներին անցկացվում էր, և իր սաները դրանց էլ էին մասնակցում ու մրցա-

ներ՝ առարկայական, վայելչագրության (փոքրերի համար), «Հնուտ ձեռքեր»-ի, կերպարվեստի, լեզուների: Ավարտական դասարաններում այդ խմբակներում աշակերտներին նախապատրաստում են միասնական քննություններին, ցածր դասարաններում՝ օլիմպիադաներին: «Մեր ցավուր կողմերից մեկն այն է, որ մշակութային խմբակներ չեն գործում մասնագետների պակասի պատճառով: «Ազգային երգ-պար» առարկան էլ այդ պատճառով չենք անցնում: Լավ կարիքներ ունենք, ամեն ինչ՝ հիմնականում մեր ձեռքով պատրաստած: Հետաքրքիրն այն է, որ երբ աշակերտներին ասում են, որ տվյալ թեմայի վերաբերյալ պակաստ պետք է սարքենք, նրանք ասում են՝ մենք կանենք: Եվ ավելի որակով են սարքում, քան մենք էինք անում», - դպրոցի առօրյայից մի փունջ է ներկայացնում ուսումնական մասի վարիչը:

Կրկին դառնանք բժիշկների թեմային: Այս տարի Վաղուհասը Երևանի բժշկականի համար երկու դիմորդ ունի: Թե բժշկականում սովորած և սովորող ինչքան շրջանավարտներ ունեն, ուսուցիչն արդեն հաշիվը կորցրել է: Սաների պատճառած նրա հպարտությունը մեծացել է նաև այս պատերազմում նրանց ցուցաբերած վարքագծով: Անգամ աղջիկները կամավորագրվել են և եկել Արցախ՝ վիրավորներ տեղափոխել, մասնակցել գիշերային հերթափոխներին: Ու թվարկում է. երկու ուսանող 2-րդ կուրսից, մեկը՝ 4-րդ, մեկը՝ 6-րդ: Իմ առաջին բժիշկ սանը, որը հիմա դիմածնոտային բաժնի վարիչ է Հայաստանում, որպես կամավոր պատերազմի ժամանակ աշխատել է Մարտունու, պարզևատրվել է «Արիության համար» մեդալով: 2-րդ կուրսեցի Մարատ Հայրապետյանի պարզևատրման հրամանն է կարդում ձեռքի հեռախոսում. «Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը տևած ռազմական գործողությունների ժամանակ անձնվեր աշխատանքի, խիզախության, հայրենիքին նվիրումի և անմնացորդ ծառայության համար»: Մարտը և մեր մյուս ուսանողները նաև մասնակցում են կորոնավիրուսի դեմ պայքարին և պարզևատրվել են:

Վաղուհասում բազմազավակության ավանդույթը շարունակվում է: Վերջին երկու տարում մի քիչ տեմպը բուլացել է, պատճառը բնակարանային խնդիրն է. որդիները հայրական տներում արդեն չեն տեղափոխվում, առանձին պետք է ապրեն, բնակարաններ են պետք, որ տեղափոխվեն:

Պատերազմի ժամանակ ոչ մի տղամարդ գյուղից դուրս չի եկել, նույնիսկ հաշմանդանություն ունեցողները: Նրանք, ովքեր ի վիճակի չէին անմիջական ռազմագործողություններին մասնակցել, դիրքերին սնունդ էին մատակարարում:

Գյուղում տղամարդկանց մեծ մասը մինչև պատերազմը աշխատում էր համբուս: Այսօր քանի որ այն ոչ լրիվ հզորությամբ է գործում, աշխատողների մի մասը ցածր վարձատրության պատճառով դուրս է եկել և կամավորագրվում է սահմանը պահելու: Բավականին մարդիկ են ցանկություն հայտնել. «Եթե մեր սահմանը մեր գյուղացին չպահի, ուրիշը չի պահի»:

Լավ ուսուցիչն ուղեկցում է սանին նրա ողջ կյանքի ընթացքում: Լիլիթ Ազիզյանի հուշերում անմոռաց են ԱրՊՀ վարժարանում սովորած տարիները: Կյանքի բախտորոշ ու լավագույն մի հատվածը համարում է ուսումնառության շրջանը. «Ինձ քիմիա սովորեցրել է Արինա Գրիգորյանը: Նա է ինձ քիմիկ դարձրել և ուսուցիչ: Երբ պետք է գնար Երևան ատենախոսություն պաշտպանելու, ինձ՝ արդեն ուսանողիս, վստահում էր իր դասաժամերը վարժարանում: Նախօրոք նստեցնում էր ու սովորեցնում, թե տվյալ թեման ինչպես պետք է բացատրեն: «Հաշվիր՝ ես քո աշակերտն եմ, տեսնեն ինչպես կպատմես», - ասում էր: Ինձ ուսուցիչ նա է դարձրել իր մեթոդիկայով: Դա իմ երջանկությունն է, որ ես նրան հանդիպել եմ իմ ճանապարհին: Նա ինձ համար շատ բան է արել, շատ բան է սովորեցրել: Երկի դրանից է, որ չեմ կարողանում աշակերտի հետ այլ կերպ հարաբերության մեջ մտնել: Հատ-հատ բացատրում էր՝ այս թեման այսպես պետք է բացատրես, այս մեկը՝ այնպես: Իմ կյանքը կանխորոշել է Արինա Գրիգորյանը: Ես երկրորդ մասնագիտությամբ եմ կենսաբան, հեռակա կարգով եմ ավարտել: Համալսարանում Աբրահամյան Արտյոմն ինձ համար արել է այն, ինչ որ հարազատ ծնողը կաներ իր երեխայի համար: Ես նրա յուրաքանչյուր դաս մինչև հիմա հիշում եմ»:

Ու շարունակում է թվարկել որպես մասնագետի կայացման ճանապարհին իրեն հանդիպած լավագույն մանկավարժներին. Արթուր Ավետիսյան (ամբիոնի վարիչն էր), Ծովինար Հովհաննիսյան, Սարյան, Ներսիսյան... «Ես այդ լավը տեսել եմ իմ ուսուցիչներից, ես էլ պետք է իմ աշակերտների հետ ամեն նույնը»:

ԼՈՒՍԵ ԱՄՐՈՑՆԵՐ

ԱՄԵՆԱԿ ԴՊՐՈՅՑ

Թե որն է ամենալավ դպրոցը, այս հարցը բոլորին է հետաքրքրում: Այսօր 33 երրորդ մասնագետներ Սարգսյանի հարցազրույցն էին նայում հեռուստացույցով: Իմ խոսքն այն մասին չէ, թե ով է մեղավոր այսօրվա համար, կամ որն է ամենվրդ և այլն, որի թեման էր հարցազրույցը: Խոսքն Արցախի Հանրապետության Քաղաքապետի մասին է, մի վարչական միավոր, որ դարձել էր հայրենական կարևոր տարածքներից մեկը, հպարտությունը, և որտեղ ապրում էին իսկական հայրենասեր մարդիկ: Խոսելով արտագաղթի մասին՝ Ս. Սարգսյանը Հայաստանից արտագաղթողների վերաբերյալ այսպիսի միտք ասաց. «Դուրս գալով հայրենիքից՝ հնարավոր է, որ ավելի լավ պայմաններում կապրես, հնարավոր է՝ ձեր երեխաներն ավելի լավ դպրոցում կսովորեն...»: Ճիշտ է 33 երրորդ մասնագետը. պետք չէ հեռանալ հայրենիքից նեղացած սրտով: Բայց միևնույն է, գնալու են: Այսօր հնարավոր է նաև շատ քաղաքացիներ գաղթեն կամ մեկնեն արտագնա աշխատանքի՝ աշնանը վերադառնալու հույսով:

Բայց դառնա՞մ Քաղաքապետի շրջանին, որտեղ անձամբ ես իմ ընտանիքով ապրեցի մոտ 25 տարի: Մի շրջան, որտեղ բնակվելու եկան 33 տարբեր մարզերից, Արթուրյանից բռնահամակած հայկական ընտանիք-

ներ, Արցախի՝ թշնամու կողմից բռնազավթված տարածքներից, Սի-րիայից ու Լիբանանից, այլ երկրներից: Եկան ու իրենց տունը դարձրին ազատագրված մեր պատմական հայրենիքը, եկան ու շենագրին պատերազմից ավերված այս երկիրը, եկան ու հայրուրավոր հեկտարներով այգիներ հիմնեցին, հազարավոր հեկտար ցորենի ու գարու արտեր ցանեցին:

Բայց ամենակարևորը Քաղաքապետի հանրակրթական դպրոցներն էին, որոնց կողքին կայացան բնակավայրերը, և որոնք հիմնեցինք ավերակներում, դեռից-դեռից գույք հայթայթեցինք, ուսուցչական անձնակազմ հրավիրեցինք: Հետագայում նույն դպրոցների սաները դարձան մանկավարժ, ու կայացան նաև դպրոցները: Կայացան ոչ թե շենքային պայմաններով, այլ կայացան ամենահայրենասեր, ամենաբարի, ամենահայ սերունդ կրթելով: Եվ ահա, Քաղաքապետի շրջանում էին աշխարհի ամենալավ դպրոցները, որոնք հայրուրավոր շրջանավարտներ այսօր Հայոց հայրենիքին նվիրված մարդիկ են, ու յուրաքանչյուրն իր գործում՝ արհեստավարժ մասնագետ: Այո, Բերձորում էին գործում աշխարհի ամենալավ դպրոցները. արաքսաներձ Կովսականում, Սիջնավանում, հյուսիսային Դրախտաձորում ու Հակում, Արտաշավիում ու Մովսե-

սաշնում, Մոշաբաղում ու Տանձուտում, Տիգրանավանում, Իշխանաձորում: Թող ներեն մնացած դպրոցները, որոնց անունը չի շատակցեց: Ամենալավ դպրոցները գործում էին Հաղուրթի շրջանի Առաջամուղ գյուղում, Արևշատում, Հայկավանում, Մարտակերտի շրջանի Թալիշում ու Մատաղիսում, որոնց սաներն ու ուսուցիչները նաև սահմանապահներ էին: Գործեցին այս դպրոցներն աշխարհից կտրված, հեռու՝ աշակերտներից, նրանց ծնողներից գումար ու այլ ֆանկարժեք իր վերցնելուց, հեռու՝ խարդավանքներից, մոտ՝ Հայոց սահմանին, հավատով լավ ապագայի հանդեպ: Ու գործեցին այս դպրոցները՝ տալով հայրենիքին նվիրված զինվորացու տղաներ, ովքեր այսօր էլ Հայոց բանակի ամենակարգապահ ու նվիրված զին-ծառայողների շարքում են ու էին 25 տարիների ընթացքում: Ու նույն տղաներից շատերն ընկան ռազմի դաշտում՝ դառնալով սահմանի պատվար:

Լեռնահովիտի դպրոցի սան Սարգիսյանը պատանի տարիքում եղբոր՝ Հարութի, ընկերների հետ իրենց տարածքում հայոց պատմական հուշարձաններ էր գտնում և տեղյակ պահում. միասին ուսումնասիրում էին: 2020թ. պատերազմին մասնակցեց արդեն որպես պահեստագործային գնդացրորդ ու օգնու-

թյան հասավ Ջաբրայիլում ծառայող ժամկետային Հարութ եղբորը: Ընկավ Սարգիսյանը հերոսաբար՝ իր գնդացրով ապահովելով մարտական ընկերների նահանջը: Վիրավորվեց նաև Հարութը, որը դեռ կազդուրվում է: 1995թ. մարտի 19-ին մարտական ընկերների հետ մի քանի անգամ ավել թշնամու հետ մարտի բռնվեց Աղածորի դպրոցի շրջանավարտ, ՀԳՄՀ պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, գնդացրորդ Հակոբ Խաչատրյանը և մարտիրոսվեց քաղաքապետ: Նրա անունն ամփոփվեց հարազատ դպրոցի հարևանությամբ, և նույն կրթօջախը կոչվեց հերոսի անունով: 2016թ. սեպտեմբերին Մեխակավանում՝ մարտական հենակետում նահատակվեց Բերձորի բնակիչ Արայիկ Օրդուբեկյանը, որը հուղարկվելուց եռաբլուրում: 2018-ին Ասկերանի սահմանում նահատակվեց Տիգրանավանի Պետրոս Դևոնյանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ Արցախի Հովսեփյանը և հուղարկվելուց Տիգրանավանում: Հակոբի ու Արցախի ծնողները վստահ էին՝ հավերժ մերն է մնալու Քաղաքապետի շրջանը, սակայն այսօր թշնամու տիրապետության տակ մնացած տարածքում են հերոսների շիրմերը...

Եղավ 2020թ. պատերազմը, և նույն Քաղաքապետի շրջանի դպրոցների շրջանավարտներից, ուսուցիչներ-

րից, տնօրեններից շատերը հասան առաջնագիծ, ու դարձյալ մարտիրոսներ ունեցանք, անհայտ կորածներ: Իսկ աշխարհի լավագույն համարվող շատ դպրոցներում սովորող մեր հայրենակիցներից քչերը հասան հայրենիքի նեղ օրվան: Թշնամուն մնաց Քաղաքապետի շրջանը, հիշատակածս բնակավայրերն ու դպրոցները:

Այսօր Քաղաքապետի 52 դպրոցներից գործում է ընդամենը մեկը՝ Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան միջնակարգը, որը հիմնվել էր 1994 թվականին և այսօր ունի մոտ 20 աշակերտ: Ահա ամենալավ դպրոցն աշխարհում և ամենալավ աշակերտները, որոնք փորձում են տեր մնալ հող հայրենիքին: Մնում է ընդամենը աջակցություն մեր ամենախնկարկան հերոսներին՝ Աղավնոյի գյուղապետ Անդրանիկ Չավուշյանին, դպրոցի տնօրեն Պողոս Աղաբեկյանին, ուսուցիչներին, աշակերտներին, նրանց ծնողներին: Իսկ ամենալավ ու հավաքական դպրոցը վերջին 25 տարիներին գործում էր Մեծ Հայքի Սյունիք և Արցախի աշխարհների Աղախեճ-Քաղաքապետ, Քաղաքապետ, Կովսական, Վայկունիք Բերդաձոր գավառների վրա ստեղծված Քաղաքապետի շրջանում:

Ջոհրաբ ԸՈՔՈՑԱԼ

ՀՐԵԱ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՅ ԵՄԱԿԸ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԻ ՀԱՄԲԱԿԻ

Մի խումբ հրեա և իսրայելցի գիտնականներ կարծում են, որ Ադրբեջանը կանգնած է Հայաստանի դեմ գրպարտության արշավի հետևում, և հանդես են եկել ի պաշտպանություն Հայաստանի: Այս մասին տեղեկացնում է «Լուրեր»-ը՝ հղում կատարելով Arutz Sheva-ին: Բայց նամակում ասվում է՝

«Մենք՝ ներքստորագրյալներս, Մերձավոր և Միջին Արևելքի հրեա և իսրայելցի գիտնականներ ենք: Այս բաց նամակը գրում ենք՝ պաշտպանելու համար հայ ժողովրդի պատիվն ու բարի համբավը: Գրում ենք այս նամակը, քանի որ մեր կարծիքով՝ իսրայելական և հրեական մամուլում Ադրբեջանի կառավարության կողմից ֆինանսավորվող՝ հայերի դեմ ուղղված գրպարտության արշավ է սկսվել:

Հայերն ունեն հին քաղաքակրթություն, նրանք առաջինն են ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Մեր մայրաքաղաք Երուսաղեմի Հայկական թաղամասը գոյություն ունի արդեն մեկուկես հազար տարի:

Նրանք շատ դժբախտ ժողովուրդ են, քանի որ, լինելով քրիստոնյա, շրջապատված են մահմեդական հարևաններով: Կորցնելով անկախությունը, զրկվելով քաղաքական և ռազմական իշխանությունից՝ նրանք, ինչպես և մեր ժողովուրդը, ստեղծեցին իրենց պետականությունը: Նրանց մեծ հայ համայնքը հաջողության է հասել բիզնեսում, բժշկության, արվեստի և գրականության մեջ:

Թեև Հայաստանում բնիկ հրեական համայնք չկա, հրեական կրոնական տերմինաբանության առկայությունը հայերենում ենթադրում է շատ վաղ կապեր երկու ժողովուրդների միջև: Հարյուր տարի առաջ օսմանյան թուրք ազգայնականները Առաջին համաշխարհային պատերազմն օգտագործեցին որպես պատրվակ հայերի ոչնչացման համար: Թուրքերի ադրբեջանցի եղբայրներից շատերը մասնակցել են հակահայկական ջարդերին տարբեր վայրերում՝ ներառյալ Լեռնային Դարաբաղ ամունով տարածաշրջանում: Այդ դեպքերից մեկ սերունդ անց լեհաստանցի հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը մտցրեց «ցեղասպանություն» եզրույթը՝ նկարագրելու համար, թե ինչ է կատարվել հայերի հետ:

Ազգությամբ հրեա գրող Ֆրանց Վերֆելը գրել է «Մուսա լեռան քառասուն օրը»՝ բեթսեյլերի հայ գյուղացիների հաջողված զինված դիմադրության մասին: Այս գիրքը ոգեշնչել է ինչպես 1943 թվականին Վարշավայի գետտոյի մեր մարտիկներին, այնպես էլ մեր Հազանա-

յին, որը պատրաստվում էր վերջին մենամարտը տալ Կարմելի մոտ, եթե մացիստները ներխուժեին Իսրայել:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո արևմտյան տերությունները կոմունիզմի դեմ խաչակրաց արշավանքում թուրքիայի



րպատությունների ներսում, այնպես էլ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Երկու նորանկախ պետությունները սկսեցին պատերազմել Ադրբեջանում հայկական մեծամասնություն ունեցող Դարաբաղի պատճառով, որի բնակչությունն ինքնավարություն էր պահանջում: Հայերը ազատագրեցին և Արցախը, և հարակից շրջանների ռազմավարական բուֆերային ընդարձակ գոտին:

2020թ. աշնանը Ադրբեջանը պատերազմ սկսեց Արցախը վերադարձնելու համար: Ռուսաստանը զենք էր վաճառում երկու կողմերին, թուրքիան բացահայտորեն աջակցում էր Ադրբեջանին՝ մարդկային և տեխնիկական ռեսուրս, այդ թվում՝ բարձրտեխնոլոգիական անօդաչուներ տրամադրելով, Իսրայելն անօդաչու թռչող սարքեր և այլ տեխնիկա էր վաճառում իր դաշնակից Ադրբեջանին:

Դա Իսրայելի պատերազմը չէր: Մենք լավ հարաբերություններ ունենք Հայաստանի հետ և չպետք է կողմնակալ լինենք:



հետ բարեկամություն էին փնտրում: Միացյալ Նահանգները հրաժարվեցին հայկական կոտորածը վերապարծներին, անօթ և աննե-րին պաշտպանելու իր քաղաքականությունից: Պատմական Հայաստանի արևելյան ծայրամասում՝ խորհրդային Անդրկովկասում, հիմնադրվեց խորհրդային մի փոքր հայկական պետություն:

Իսրայելի մասին ասում են, թե այն բազմաթիվ անգամ ունեցել է շատ մղձավանջներ, քան ցանկացած այլ երկիր: Հայաստանն էլ մոտավորապես այդպիսին էր. սարսափի հիշողություններով պատված, կոտորված մարդիկ փորձում էին ծառեր տնկել, քաղաքներ կառուցել և նոր կյանք սկսել: Իսրայելում մենք ծաղկեցրինք անապատը, հայերը նույնն արեցին իրենց քաղաքապետի վրա, բայց նրանք ստիպված եղան պայտերել կոլեկտիվացման, ստալինյան զտումների, ծանր ձեռքի և գաղտնի ոստիկանության ուշադիր ականջի դեմ:

Երբ խորհրդային Միությունը փլուզվեց, ծայրահեղ ազգայնական գաղափարախոսությունները և կրոնական ծայրահեղականությունը ներխուժեցին մարդկանց մտքերը, որոնք վերջապես ազատագրվել էին յոթ տասնամյակ պարտադրված կոմունիստական դոգմայից: Ջսպված էթնիկ լարվածությունը պատերազմի վերածվեց ինչպես նախկին խորհրդային հան-

«Յաղ վա-Շեն» Հոլոքոստի հուշահամալիրի հետազոտական կենտրոնը զգուշորեն խուսափում է իր ցուցամուշնեղումը Հայոց ցեղասպանության մասին հիշատակումներից, չնայած նրան, որ Հիտլերն իր ծրագրերը կազմելիս ոգեշնչվել է Հայոց ցեղասպանությամբ:

Ադրբեջանն այս քարոզչական արշավում ներկայացված է որպես հրեա ժողովրդի լավագույն բարեկամ: Կրկին, սա խեղաթյուրված պատկեր է, և դա ապացուցող բազմաթիվ փաստեր կան:

Մենք չենք կարող պայքարել Բաքվից եկող ամբողջ ապատեղեկատվության դեմ: Բայց մենք կցանկանայինք այստեղ հայտարարել, որ մենք՝ որպես հրեաներ և իսրայելցիներ, պաշտպանում ենք հայ ժողովրդի իրավունքը՝ սպրեյելու որպես ազատ ժողովուրդ իրենց հայրենի հողում: Մենք հարգում ենք նրանց հնագույն, եզակի մշակույթը: Մենք դատապարտում ենք նրանց դեմ ուղղված ատելությունները, գրպարտությունը: Մենք նաև դատապարտում ենք հակասեմականության բոլոր դրսևորումները՝ անկախ դրանց պատրվակից: Մենք դեմ ենք հայերի դեմ ագրեսիային և կարծում ենք, որ մեր երկիրը չպետք է որևէ կապ ունենա դրա հետ:

Պատերազմի առաջին գոիը ճշմարտությունն է: Բայց ճշմարտությունը, ինչպես և մեզ՝ Գրքի մարդկանց, չի կարելի սպանել: Բռնապետները կարող են անել այն ամենը, ինչ ուզում են իրենց դժբախտ երկրներում՝ զոհելով անմեղ մարդկանց իրենց կեղտոտ խաղերի համար, բայց մենք չենք կարող այդպես վարվել: Մենք թույլ չենք տա ադրբեջանական քարոզչականքեքեքային ճշմարտությունը դուրս մղել Իսրայելից, որքան էլ «նավթային գումար նա վճարի իր գործակալներին»:

Ստորագրում ենք.

Շեյն Ռասել - Հարվարդի համալսարանի հայագիտության պատվավոր պրոֆեսոր
 Մայքլ Սթուն - Երուսաղեմի Հրեական համալսարանի հայագիտության և համեմատական կրոնագիտության պատվավոր պրոֆեսոր
 Յուսուբ Լեմկին - Երուսաղեմի Հրեական համալսարանի հայագիտության դասախոս
 Օդեթ Շտայնբերգ - Երուսաղեմի Հրեական համալսարանի միջազգային հարաբերությունների և եվրոպական հետազոտությունների դասախոս
 Ռեուվեն Ամիտայ - Երուսաղեմի Հրեական համալսարանի Մերձավոր Արևելքի պատմության պրոֆեսոր

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ...

Իմ օրագրից

2021 թվականը բոլորովին անտրամադիր դիմավորեցինք: Չնայած պատերազմը նոր էր վերջացել, բայց մթերքների պակաս չզգացինք: Սեղանին ամեն ինչ դրված էր, նույնիսկ շամպայնի շիշ, որն այդպես էլ ոչ ոքի կողմից չբացվեց ու մինչև օրս դրված է ճաշասենյակում գտնվող պահարանի մի անկյունում: Թռռերիս ու ծոռներիս համար տոնածառ էլ չէինք սարքել: Երբ մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում բացակայում է և որ տարվա տոնածառը, ում մտքով կանցնի իր տանը տոնածառ դնել:

Բոլորս հիասթափված ենք, ընկճված, անտեղի պարտվել ենք՝ հերիք չէ, քնած վարչապետից էլ չենք կարողանում ազատվել, որ ազատ շունչ քաշենք ու լծվենք նոր աշխատանքի: Ստածում են՝ «Գոնե Շուշին չտալինք, մեր մարզարիտը, մեր Ղարաբաղի զարդն ու սիրտը, որին վարչապետի աթոռին կառչած և հիկոլ Փաշինյանը առանց ամոթ զգալու հայտարարեց, թե մոլախտով ծածկված մի տարածք է, 90 տոկոսով թուրքաբնակ քաղաք. «90 տարվա ադրբեջանցի ունեցող քաղաքը դուք համարում եք հայկական քաղաք»: Այսպես նա դիմեց Ազգային ժողովի ընդդիմությանը:

Ջարմանում են, որ երբեմնի լրագրողը երկրի դեկի տեր է կանգնել, բայց նրա պատմությանը տեղյակ չէ: Գոնե որպես լրագրող ծանոթ լինեի Մարիետա Շահինյանի «Լեռնային Ղարաբաղ» գրքին, որի 41-րդ էջում մեծ գրողը 1930թ. գրել է. «...Առաջինը, որ ինձ ցնցեց, լռությունն էր: Այդքան սարսափելի լռությունն էր չէի զգացել ոչ մի տեղ երբեք, ու անմիջապես այն ինձ թվաց անբնական: Շուշի մտնելով՝ մարդուն հանկարծ թվում է, թե լռությունը քրթմնջում է, քարերը շշմուշում են, օրորվում, խշշում, ու զվիթի մազերը բիզ-բիզ են կանգնում: Այստեղ, 1920թ. մարտին երեք օր-

վա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել յոթ հազար տներ, մորթվել են, տարբեր թվեր են ասում. մեկն ասում է՝ երեք, չորս հազար, ուրիշները՝ ավելի քան 12 հազար հայ, բայց իրողությունն այն է, որ 35 հազար հայերից չի մնացել ոչ մեկը...»:

Փաշինյանը գիտի, որ Շուշիում 35 հազար հայ էր ապրում, ավելի շատ, քան Բաքվում ապրող ադրբեջանցիները նույն ժամանակաշրջանում: Ավելորդ չեն համարում հիշեցնել, որ 70 տարվա ընթացքում Շուշիի ադրբեջանցիների թիվը չի անցել 10-12 հազարից:

Ինչևէ: Չնայած օրագիրս Շուշիում գերված է, բայց ես շարունակում եմ գրել ու հիշել: Չէ՞ որ դա մեր պարմության էջերից է:

1.01.1991թ.: Արթնանալով՝ շնորհավորեցինք միմյանց, իսկ ես գնացի հացի համար հերթ կանգնելու: Ինչպես մշել են, և որ տարին ինչպես մեր մարզի բնակչության մեծ մասը, այնպես էլ իմ ընտանիքը դիմավորեց դատարկ, ավելի ծիշտ, աղքատ սեղանով, բայց հպարտ կեցվածքով:

2.01.1991թ.: Ադրբեջանի հեռուստատեսությունը հաղորդեց Ադրբեջանի նախագահ Այազ Մուբալիբովի հրամանագիրը ԼՂԻՄ-ում և նրան հարակից ադրբեջանական շրջաններում նախագահական կառավարում մտցնելու մասին:

3.01.1991թ.: Քաղաքի փողոցներում ու հրապարակում գետնի վրա թափված են մեր ժողովրդին ուղղված թուղցիկներ՝ ամենասեղմ ժանկետներում Լեռնային Ղարաբաղի սահմանները թողնելու վերջնագրով: Բաքվից Նոր տարվա շնորհավորանքն է: Լավ է, որ ով թուղցիկ վերցնում ընթերցում է, արհամարհական ժպիտով ծմրթում ու շարտում է: Այսպես հենց 1991-ի սկզբից Ադրբեջանի ղեկավարությունը մեր մարզի և Շահունյանի շրջա-

նի հայ բնակչության իրավունքները ոտնահարող նոր գործողություններ ձեռնարկեց: Ինչո՞ւ են Շահունյանի շրջանն էլ հիշատակում: Որովհետև...

14.01.1991թ.: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց երկու հարևան՝ հայկական Շահունյանի և ադրբեջանական Կասում Իսմայլովի շրջանները միավորելու մասին՝ նրանց տալով մեկ անվանում՝ Գերանբոյի շրջան: Հասկանալի է, որ Ադրբեջանի նպատակն է վերացնել ևս մեկ հայկական շրջան՝ տեղահանելով նրա արմատական բնակչությանը և հայկական գյուղերը բնակեցնելով ադրբեջանցիներով: Հիշեցնեմ ընթերցողներին, որ այդ ժամանակ Շահունյանի շրջանում ապրում էր շուրջ 20 հազար մարդ, որի 82 տոկոսը կազմում էին հայերը:

22.01.1991թ.: Հունվարյան այս օրերին Մ. Գորբաչովը ամենահեղինակավոր ու մարդասիրական պարզիկ՝ Նոբելյան մրցանակի տերը, իր կարևոր դեմքը վերջնականապես բացեց: Նա իր կարեկցանքը հայտնեց ադրբեջանական ժողովրդին 1990թ. հունվարյան դեպքերի տարեկիցի առթիվ: Նա մեր զոհերին չհիշեց, նրանց համար բառեր չգտավ, ասես 1990թ. հունվարի 13-19-ը չէին եղել ողջակիզվող հայեր, ասես նրանց չէին կացնահարել, ասես նրանք ազգայնամուլները (ինչու միայն ազգայնամուլները), լուսամուտներից դուրս չէին մետել մանկիկների, ասես գոյություն էլ չունեն հարյուր-հազարավոր անտուն հայ գաղթականներ: Գորբաչովն իրեն կույր ու խուլ է ձևացնում, իսկ ադրբեջանցուն դուր գալու համար, չզիտես ինչու, պոչ է խաղացնում. կարծես նա չգիտի, որ մեր մարզում խստով գրաքննություն է սահմանված, երկար ժամանակ չեն աշխատում մարզային, շրջա-

նային հայկական թերթերը, հեռուստատեսությունը, ռադիոն (դրա փոխարեն Շուշիում տեղակայված հեռուստատեսությունը լսված ու չլսված լուսանկարներ է թափում հայերիս գլխին): Ձերբակալվում ու բանտերն են մետվում տասնյակ ակտիվիստներ: Կրեմլի թողտվությամբ ինչ որ ուզում են, անում են:

22.01.1991թ.: Ադրբեջանի օժոն-ը Ստեփանակերտի օդանավակայանում կոպտորեն պահեց և Բաքու ուղարկեց ՌՄՖՍՀ Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորների, որոնք ՌԴԳԽ առաջադրանքով մարզ էին ժամանել իրավիճակն ուսումնասիրելու նպատակով: Լկտիություն է, չէ՞...

1991թ. հունվարի 29-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանն ընդունեց «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը: 1991-1992թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած 865 կոլտնտեսություններ ու պետական տնտեսություններ, որոնք թողարկում էին գյուղատնտեսական արտադրության ավելի քան 90 տոկոսը: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ, և իբրև սեփականություն նրանց փոխանցվեց հողերի 60 տոկոսը, անասունների 80 տոկոսը: Լավ է, որ մարզը չընդօրինակեց Մայր Հայաստանին, դեռևս պահպանեց կոլտնտեսություններն ու խորհրդատեսությունները: Կյանքը շարունակվում է, սակայն մարզի հայ բնակչության համառ կամքից ու անհնազանդությունից զազազած՝ գորբաչովյան թիմի հետ միակամ Ադրբեջանի իշխանություններն ստոր դավեր էին նյութում ու ոճիրներ գործում ինքնորոշման սահմանադրական ուղու վրա կանգնած մեր ժողովրդի նկատմամբ: Ինչ արած, դիմանում ենք:

1991Թ. ՓԵՏՐՎԱՐ

Այսօր փետրվարի 20-ն է: 2021թ. փետրվարի 20-ը: Սիրտս անհանգիստ է, մեր պատշգամբից նայում եմ Վերածննդի հրապարակին: Արդյոք, չի՞ նշվում մեր Շարժման 33-ամյակը: Հուրախություն ինձ քանի գնում՝ հրապարակը մարդաշատ է դառնում: Օգտվելով առիթից, որ տանը ոչ ոք չկա, հագնում եմ վերարկուս, վերցնում գլխարկս ու կամաց-կամաց հասնում հրապարակ, որի բազմությունն ինձ հիշեցնում է 1988թ. փետրվարի 20-ը, երբ փոթորկալից հրապարակը ծափահարությանը և ուռաներով մարզխորհրդի շենք էր ուղեկցում պատմական նստաշրջանի ժողպատգամավորներին: Միայն այսօրվա բազմությունը տարբերվում է նրանով, որ լռակցաց է. կարծես մեկ մարդ է, մեկ բռունցք, միայն ծաղիկների ծովն է երևում և ծածանվող երկարուծիզ դրոշմը, որ երիտասարդները գլխավերևում բարձրացրած՝ ժողովրդի հետ միասին շարժվում են դեպի հուշահամալիր:

Չնայած տկար եմ, բայց ուրախ եմ, որ մեր ժողովուրդը կամքի մեծ ուժ ունի. անիծելով չարաբաստիկ 44-օրյա պատերազմի պատճառած ցավը՝ շարունակում է հավատարիմ մնալ իր ավանդույթներին:

Անցած 33 տարվա ընթացքում առաջին անգամ այդ պանծալի տոնը նշվում է հանգիստ, առանց կոչերի ու ելույթների: Շարժման ակտիվիստներից ոչ մեկին չեն հանդիպում ու որևէ մեկի ծայնն էլ չեն լսում, այդ հազարավոր մարդկանց մեջ մի ծանոթ դեմքի չեն հանդիպում ու ժողովրդին ճանապարհելուց հետո շուռ են գալիս դեպի տուն, և հանկարծ մեկը թիկունքիցս թև բռնում է: Ետ են նայում, թռուռուիս է՝ Թամարը: Կուչ են գալիս, կարծես գողորթան մեջ են բռնվել: «Դեղո՞», այդ ինչպես՞ են հայտնվել այստեղ, ծոռնուհիդ գանգու էլ է, որ պապիկը տնից փախել է: Թռռուռուիս ինձ հասցնում է տուն ու ետ դառնում, մեխակները ձեռքին՝ նա շտապում է դեպի հուշահամալիր: Նստում եմ հեռուստացույցի առաջ. արդեն ժամը 3-ն է: Դիտում եմ երևանում կազմակերպված հանրահավաքը ու սովորությանս համաձայն մտքով խրվում մեր անցյալի պատմության մեջ, դեռ 100 տարի առաջ

փետրվարյան այս օրերին շեշտագրված դեպքերի, իրադարձությունների մեջ, երբ հայ ժողովուրդը, չդիմանալով խորհրդային իշխանության կողմից գործադրված վայրագություններին, ապստամբեց ու երևանն ազատեց խորհրդային զորքից ու նորաստեղծ իշխանությունից: Ապստամբների կողմից ստեղծված Հայրենիքի փրկության կոմիտեն Սիմոն Վրացյանի գլխավորությամբ վերակազմեց անկախությունը Հայաստանի տարածքի մի մասում: Կոմիտեն իշխեց 1,5 ամիս, որի ընթացքում Մոսկվայում բանակցություններ էին գնում քեմալական Թուրքիայի և Մոսկվայի միջև, որին հրավիրված էր մասնակցելու խորհրդային Հայաստանի պատվիրակությունը մեր համերկարացի Բեկզադյանի գլխավորությամբ: Հայրենիքի փրկության կոմիտեն հեռագրով դիմում է Մոսկվա՝ նշելով, որ հայկական պատվիրակությունը իրավունք չունի մասնակցել այդ բանակցություններին, քանի որ իշխանությունը փոխված է: Ու այդպես, առանց հայերի մասնակցության ծնվում է 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը, որով կատարվում է Հայաստանի վերջին բաժանումը:

Ստածում են. «Լավ է, որ այսօրվա Հայաստանում ստեղծված Հայրենիքի փրկության շարժումը 1921թ. Հայաստանի փրկության կոմիտեի քայլը չի կրկնում, իր գործունեությամբ Մոսկվային չի «անհանգստացնում»: Այսօրվա իրադարձություններին ակնատես լինելով՝ ինչո՞ւ վերհիշեցի 1921թ. փետրվարը, որը տարողունակ թեմա է: Բանն այն է, որ Փաշինյանն ստիպեց այդ վերհիշելու, քանի որ այսօր էլ նա չի խոստովանում, որ ինքը փաստորեն իշխանությունը զավթել է, այլ պնդում է, որ ժողովուրդն է այդ իշխանությունը տվել իրեն, «թավշյա հեղափոխության» հաղթանակով է ինքը իշխանության գլուխ անցել: Մինչդեռ իմ աչքի առաջ էր, երբ ամբողջովին բերել Ազգային ժողովի շենքը շրջապատել, իսկ ինքն էլ մտել է ներս ու խնդրել, ավելի ծիշտ հարկադրել, որ «Բարգավաճ Հայաստան» կամ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների ղեկավարները հանկարծ իրենց

թեկնածությունը չտան վարչապետի պաշտոնի համար: Եվ նույնիսկ գրավոր է վերցրել: Բայց այդ մասին չէ, որ հիշեցնում եմ ընթերցողներին, այլ «թավշյա հեղափոխության», որ Ն. Փաշինյանը քանի անգամ հիշատակել է այդ հասկացությունը, բայց չորս ամիս է՝ «թավշյա» բառը չի արտասանում, այլ ժողովրդին է հիշատակում: Բանն այն է, որ «թավշյա հեղափոխություն» արտահայտությանը ես հանդիպել եմ Սիմոն Վրացյանի հուշերում: Ու մտածել եմ՝ որտեղի՞ց է այսօրվա վարչապետը վերցրել: Մեկ էլ «թավշյա հեղափոխություն» արտահայտությանը հանդիպել եմ 12-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքի 47-րդ էջում. «Խռովությունը սկսվեց (խոսքը 1991թ. օգոստոսյան դեպքերի մասին է) որպես ԽՍՀՄ-ի, ԽՍԿԿ-ի հին պետական-կուսակցական վերնախավի իշխանություններից մեկի անհանգստացումը՝ իրավունք չունի մասնակցել այդ բանակցություններին, քանի որ իշխանությունը փոխված է: Ու այդպես, առանց հայերի մասնակցության ծնվում է 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը, որով կատարվում է Հայաստանի վերջին բաժանումը: Իսկ որ որպես վարչապետ, որպես լրագրող ծանոթ չէ Մարիետա Շահինյանի «Լեռնային Ղարաբաղ» գրքին և Շուշին ծուռ հայելու մեջ է ցույց տալիս, ներել չեն կարող:

Այժմ անցնենք 30 տարի առաջ, 1991թ. փետրվարին մեր երկրամասում և, ինչու չէ, ԽՍՀՄ-ում կատարված իրադարձություններին:

1991թ. փետրվարի սկիզբ: Այս օրերին ոչ միայն մեզ մոտ, այլև ԽՍՀՄ-ում քաղաքական իրադրությունը շիկացած է ծայրաստիճան: Հրապարակայնորեն քամահարանքի են ենթարկվում հասարակության միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների,


ժողովրդական պատգամավորների բողոքները: Հուսահատության հասած արցախահայությունը, օտարների հովանավորության պատրանքը թոթափելով, իր սեփական բախտը կռելու վճռակամությամբ գեների դիմեց՝ հիմք ընդունելով Մեծն Նժդեհի «Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդը պատժվում է մահվամբ» իմաստնությունը:

Ինքնապաշտպանության մղումով ստեղծվեցին հայ աշխարհագրայինների և մարտական խմբերն ու ջոկատները, որոնք արժանի հակահարված սկսեցին տալ թշնամուն:

Չնայած լարված վիճակին, հիշում ու վերհիշում ենք երեք տարի առաջ 1988թ. փետրվարյան դեպքերը, որոնց մասին պատմում ենք մեր աշակերտներին (1988թ. փետրվարի 12, 13, 20, 21, 22, 23, 26, 27-29), միևնույն ժամանակ ուշի ուշով հետևում ենք Մոսկվայի իրադարձություններին, մասնավորապես ԽՍՀՄ և ՌՄՖՍՀ խորհրդարաններում սկսված հակաեղևիցյան շարժմանը: Ինչպես գիտենք, ՌՖՖ-ի արեգիդեմտ է ընտրվել Բորիս Ելցինը, որը չափազանց ակտիվ գործունեություն է ծավալել, ու նրա ամեն մի խոսք ժողովրդի սրտին մոտ է, և մեծ ուրախությամբ է ընդունում: Բանն այն է, որ Բ. Ելցինը և՛ ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում ունեցած ելույթում, և՛ օրերս ունեցած հարցազրույցում հիմնավորելով իր խոսքը՝ առաջարկել է ԽՍՀՄ արեգիդեմտ Մ. Գորբաչովի հրաժարականը, ոչ միայն առաջարկել, այլև պահանջել է, և այդ առաջարկը բանավեճի առարկա է դարձրել, որի ընթացքում ավելի ակտիվ դերակատարություն ունի կոմունիստների ֆրակցիան, որը պնդում է, թե Մ. Գորբաչովի հրաժարականի կոչը ոչ այլ ինչ է, քան պետության օրինական, սահմանադրական իշխանությունը տապալելու կոչ: ԽՍՀՄ և ՌՄՖՍՀ ժողովրդական պատգամավոր Գ. Ստարովյոտովան, պատասխանելով Արմենպրեսի թղթակից Ջիվան Բալազյոզյանի հեռախոսահարցին, ասաց. «Երբ նման պնդումներով հանդես են գալիս այնպիսի պատգամավորներ, ինչպիսիք են Յուսուպովը, Մամեդովը, Չեխուրը,

ԱՌԱՆՑ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ

ԵՐԲ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՆՈՒՄ ԵՆ ՆՊԱՏԱԿ



Խոնարհվելով Ադրբեջանի հայաբնակ շրջանների, Լեռնային Ղարաբաղի, Սուճալիի, Կիրովաբադի (Գանձակ) և Բաքվում զոհված հայերի շիրիմների առաջ՝ աղոթում և խնկարկում են նրանց լուսաշող հոգիների խաղաղության ու մարմինների հանգստության համար:

արևելագետ Վ. Բարտոլոմեոսը, ուսումնասիրելով 14-րդ դարի Իրանի պատմագետ Յամդալաի Քազվիհի աշխատությունները, վկայում է Բաքվում գոյություն ունեցող հին հայկական եկեղեցու մասին: 15-րդ դարի արաբ ճանապարհորդ ալ Ռաշիդ ալ-Բակուվին, նկարագրելով Բաքուն, նշում է, որ այդտեղի բնակչությունն առավելապես քրիստոնյաներ են:

Քազուն փաստեր կան այն մասին, որ Բաքվում և մոտակա տարածքներում շատ ու շատ հայկական անվանումներ, եկեղեցիներ, հիշատակություններ կան: Պարզապես չհեռանա մեր մտքի տրամաբանությանը: Իսկ որ Բաքվում են ծնվել ու ստեղծագործել հայուրավոր հայ ճարտարապետներ, գրողներ, բժիշկներ, դերասաններ, գիտության ու տեխնիկայի հայտնի գործիչներ, նավթարդյունաբերողներ, բարերարներ, հոգևորականներ, սպորտի աշխարհի չեմպիոններ, անկասկած է:

տում էին այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտ էր տեղական իշխանությանը:

Այդ պաշտոնյա հայերը քաղաքական իրավիճակի ստրուկներն էին և մշտապես հարմարվում էին նրանց հակահայկական քաղաքականությանը՝ զոհաբերելով ճշմարտությունն ու ազգային արժանապատվությունը:

Թեկուզ մոտ 70 տարի հայերը Ադրբեջանում ապրում էին խաղաղ պայմաններում, այնուամենայնիվ, Ղարաբաղի հայությունը դրա հետ չէր հաշտվում, քանի որ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով սահմանափակման մեջ էին:

Ադրբեջանի իշխանություններն ամեն մի պատմական իրադարձություն օգտագործում էին հայերին ճնշելու համար: 1987թ. նոյեմբերից եկեղեցիներ ամիսներին Ադրբեջանի կառավարությունը փորձեց ուժային ճնշում գործադրել հայերի վրա առանձին վերցված գյուղերում, և այդ ծրագիրը ցնցիկ կերպով անվանեցին «Մարշալ Բաղրամյան»: Ինչու՞, որովհետև գործողություններն իրականացվում էին փառապանծ մարշալի ծննդավայրում, իսկ վերջակետը պիտի դրվեր դեկտեմբերի 2-ին՝ նրա ծննդյան 90-ամյակին:

Չարդախլուն՝ ռազմական փառքին նվիրված գյուղը, դարձավ գործաշուկյան ղեկավարման նոր պայմաններում հին եղանակների բռնությունների փորձադաշտ: Թուրքական իշխանության կողմից այդ գյուղի ընտրությունը խիստ մշակված էր. չէ՞ որ Չարդախլուն ավանդաբար համարվում էր հայկական ռազմական ոգու խորհրդանիշ, և ընտրությունն ուներ զաղափարաքաղաքական նշանակություն:

Երբ գյուղն ապացուցեց, որ այդ պայմաններում պատրաստ է նոր գեներալներ տալ, մարշալի հորելյանի օրն սկսվեցին հայերի ջարդը ու ձերբակալությունները:

13

Մեր՝ հայոց պատմությունը յուրաքանչյուրի պատմությունն է: Մեր նախնիների, մեր ընտանիքների ու մեր անձնական պատմությունն է: Մեր գերդաստանի ու մեր տոհմի պատմությունն է: Այն բոլորի համար ամբողջական է դառնում, երբ տիրապետում ենք պատմական անցյալին: Անցյալի մեր պատմությունը մեր ներկա պատմության հիմնաքարն է: Վայ էն մարդուն, որ ոչ պատմություն, ոչ էլ կենսագրություն ունի. դրանցով են սկզբնավորվում հենց մարդու կենսագրությունը, անձնավորվում սեփական անցյալը:

Ես եթե հավատում եմ պատմությանն ու ներկայացված պատմական տվյալներին, բնական է, սակայն իմ աչքով տեսածն ավելին է ու համոզիչ, քան տարիների ու դարերի հեռավորությունից մեզ հասած վկայությունները: Պատահական չէ, երբ ժողովուրդն ասում է. «Հավատա աչքովդ տեսածին, բայց և վստահիր պատմիչներին»:

Ես ցավով եմ խոստովանում, որ իմ ներկայացրած վկայությունները հաստատում են և՛ վկայագիրները, և՛ ակնատեսները, որոնք ամենայն հավաստումով ու փաստավկայություններով են ներկայացնում ողջ կատարված դեպքերն ու դիպվածքները:

Մենք էլ ձգտել ենք փաստահարոնք

վաք ջանասիրությամբ ու խորամիտ զգուշավորությամբ հավաքել ու ամբողջացնել փաստերն ու վկայությունները բանավոր թե՛ գրավոր հանդիպումներում, ամսագրերում, թերթերում ու գրքերում տեղ գտած բոլոր պատմությունները: Ներկայացրած փաստերն ամենայն հավաստի աղբյուրներից են՝ կենդանի թե՛ անկենդան վկայատուներով, նկարներով ու զծայատկերներով:

Ուզում եմ անդրադառնալ Սուճալիի, Բաքվում, Գանձակում, Մարաղայում և ամբողջ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած հայկական ջարդերին՝ մի քանի փաստեր ու դրվագներ գրասպարեզ բերելով. վանդալիզմ, անմարդկային խոշտանգումներ, էթնիկ զտումներ, հայրենագրություն և ցեղասպանական պանթոնիզմի հայադավանական քաղաքականություն ինչպես Թուրքիայում, Ադրբեջանում, այնպես էլ ամբողջ Հարավային Կովկասում:

Մի հետաքրքիր փաստարկ այն մասին, որ Բաքուն իր շրջակա տարածքով հայկական է եղել: Մի շարք աղբյուրներում Բաքուն հիշատակվում է Բագավան: Դա հաստատում են նաև արտասահմանյան աղբյուրները: Արևելագետ Մ. Սեն Մարթենը 19-րդ դարում նշել է, որ հայկական աղբյուրներում նշված Բագավանը Բաքվի հին անունն է: Հայտնի

Շատերը, նախապես զգալով սպասելիք վտանգը, ժամանակին հեռացել են Բաքվից, թեկուզ մի շարք տեղացիներ նրանց անվանեցին հիսթերիայի հակահայկական քարոզիչներ (պանիկյորներ):

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ նախադրյալներ կային ադրբեջանական վերնախավի և շարքային քաղաքացիների մեջ հայահալած քարոզչություն սերմանելու և իրավիճակը սրելու համար: Իսկ դա արվում էր հատուկ ծրագրված, բացարձակ և հրապարակայնորեն: Ահա մեզ մի օրինակ:

Չեյրադ Ալիևը երկաթգծից Աղդամից հասցրեց Ստեփանակերտ: Բոլորն ուրախացան, այնինչ կայաբանի բոլոր ղեկավարներն ադրբեջանցիները դարձան: Եվ մոտ 30 տարի անց Հ. Ալիևն իր մի ելույթում՝ նվիրված Լեռնային Ղարաբաղին, պետք է խոստովաներ. «Ադրբեջանի տա-

նաքանակներով Ադրբեջանի վերնախավը հատուկ ծրագիր էր մշակել ու առաջնորդվում էր հենց այդ «զաղտնի», բայց բացահայտ ձևով: Այդ սկզբունքի գաղտնագերծված տարբերակներին, որը պանթոնիզմի վարվելուց է, ժամանակին անդրադարձել և ճիշտ է նկատել ու անգիր գիտել Գարեգին Նժդեհը. «Ժողովրդի ճակատագրի դարբինը նրա մտավորականությունն է: Հենց այդտեղից են մեր հակառակորդներն սկսել գործել»: Ուստի սոցիալ-քաղաքացիական հարցերում հայ ազգի էլիտան տարանջատվեց ազգային մեծամասնությունից:

Ժամանակին Բաքու քաղաքը հայտարարված էր «ինտերնացիոնալ», ու դա, իրոք, այդպես էր: Այն մտավորականները, ովքեր խորհրդային դաստիարակությամբ «ինտերնացիոնալիստներ» էին կամ կարողանում էին ազգային «ես»-ը քողարկված պահել, ամցնում էին ղեկավար պաշտոնների և աշխա-

որոնք հնազանդ կարգում են ոմանց կողմից նախապատրաստված տեքստերը, հասկանալի է, բայց զարմանալի է, երբ մեզն բան է ասում ժողովրդական պատգամավորը: Օրինակ՝ լենինգրադցի գիտությունների դոկտոր Դենիսովը: Ինչպես ամեն մի գրագետ մարդ, նա չի կարող հասկանալ, որ ցանկացած պետական գործիչ, լինի վարչապետ թե պրեզիդենտ, հրաժարականի պահանջը բնավ էլ ունենալու չէ: Ժողովրդավարության հիմունքների նկատմամբ: Ընդհակառակը, այն ցանկացած ժողովրդավարության բնական շարժիչ մեխանիզմն է: Իսկական ժողովրդավարությունը միշտ էլ ենթադրում է ցանկացած ղեկավարի փոխելու հնարավորություն, եթե նա այլևս չի համապատասխանում ժողովրդի իղծերին, չի արդարացնում ընտրողների սպասելիքները: Եվ մենք շատ հիմքեր ունենք ասելու, որ ԽՍՀՄ ժողպատգամավորների համագումարի նեղ կազմի կողմից ընտրված Գորբաչովն այսօր չի վայելում ժողովրդի վստահությունը: Դեռ ավելին, նա չարդարացրեց մեր ակնկալիքները, քանի որ «վերակառուցումը» եզրափակվում է բռնապետության անցնելով:

Հետևությունը թողնում եմ ընթերցողին՝ չի ինչեքնելով այսօրվա մեր վայ վարչապետին, որ քանի գուճում, ավելի ստոր քայլերի է դիմում: Հիմա էլ հրապարակ է նետել «Իսկենդերի» հարցը և աղմուկ բարձրացրել երկրով մեկ: Իմ ձեռքի տակ է «Երեկոյան Երևան» թերթի 1991թ. փետրվարի 25-ի համարը, որում տպագրված է. «Չհուսահատվե՛ք», - ասում է ԽՍՀՄ ժողպատգամավոր Գալինա Ստարովոյտովան: Մեքերում են նրա ասածից. «Չպետք է հուսահատվել: Այս տարիները

ին ժողովուրդն այնպես է փոխվել, որ թույլ չի տա վերադարձ անցյալին: Չնահյուսը տեղից շարժվել է, այն հնարավոր չէ կանգնեցնել: Բայց մենք պետք է պատրաստ լինենք այն բանին, որ ժողովրդավարության ճանապարհին մեզ ծանր կորուստներ են սպասվում»: 1991 թվականի հենց սկզբից սովորական է դարձել Շուշիից հրետակոծել և օդից ռմբակոծել Ստեփանակերտն ու հայկական գյուղերը:

20.02.1991թ.: Չնայած արտակարգ դրությանը, հրապարակը դարձյալ բազմամարդ է, վերհիշում է փետրվարի 20-ի պատմական որոշումը, տասնյակ խմբեր են կազմավորված, և քննարկումներ են ծավալվել: Իսկ ես իմ հարազատ կուլեկտիվի հետ եմ՝ թիվ 9 միջնակարգ դպրոցի: Մեզ մոտ են նաև բարձր դասարանցիներ: Հրապարակը շրջապատված է, կարծես ինչ-որ իրադարձություն է սպասվում:

21.02.1991թ.: Այս ծանր ու լարված օրերին Հայաստանի Գերագույն խորհուրդը դիմում է մեզ՝ արցախցիներին. «Հայաստանի Հանրապետությունը ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է Արցախի գորավիզ կանգնելու, ձեր կյանքն ու կենսական շահերը բոլոր միջոցներով պաշտպանելու իր անփոփոխ վճռակալությունը ու ամեն ինչ կանի Արցախի վերամիավորումը Մայր Հայաստանին ավարտին հասցնելու»:

Այսօր, 30 տարի անց ընթերցում եմ այս տողերը ու երախտագիտության համապատասխան բառեր չեմ գտնում արտահայտելու իմ գոհունակությունն ու շնորհակալությունն այն տարիների Հայաստանում իշխող խավին, որ չափազանց համարձակ էր, անվախ,

հայրենասեր, հայասեր և կրկին ու կրկին վերհիշում եմ նրա ձեռնարկած քայլերը հենց մեր Շարժման սկզբից սկսած: Իսկ այսօր... բոլորին հայտնի է, որ Մոսկվան ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում, որովհետև իրեն ձեռնտու չէ արցախահայության բռնած դիրքը, իսկ Հայաստանի Գերագույն խորհուրդը սատար կանգնեց հարցը մեր օգտին լուծելու: Դրա վառ օրինակն է նախ 1988թ. հունիսի 15-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշումը.

«1. Քննարկելով ԽՍՀՄ մարզխորհրդի նստաշրջանի որոշումը՝ Գերագույն խորհուրդը համաձայնություն է տալիս ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելուն և ԽՍՀՄ ԳԽ-ին խնդրեց քննարկել ու դրական լուծում տալ այդ հարցին»:

2. 1989թ. նոյեմբերի 30-ին հրավիրված Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը, որը միաձայն 1989թ. դեկտեմբերի 1-ի երեկոյան որոշումն ընդունեց Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Այս որոշումը ոչ միայն արտահայտում էր մարզի հայ բնակչության իղծերն ու ցանկությունները, այլև որոշակիորեն ապահովում էր նրա անվտանգությունը:

Ինչպես տեսնում ենք, խորհրդային տարիներին Հայաստանի և օրենսդիր, և գործադիր իշխանությունները, և նույնիսկ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը ավելի ակտիվ դիրք էին բռնած մեր հարցը դրականորեն լուծելու և առանց երկյուղ կրելու ճակատագրական որոշումներ են ընդունել, իսկ շատ վայ պատ-

մաբաններ հորջորջում են, թե խորհրդային տարիներին ՀԽՍՀ-ն ոչ մի ինքնուրույնություն չի ունեցել: Իսկ այսօրվա Հայաստանը, որ իր անկախության ձեռքբերման հարցում շնորհակալ պիտի լինի նաև մեր Շարժմանը, անցած այս 30 տարվա ընթացքում համարձակություն չունեցավ ճանաչել ո՛չ ԼՂՀ-ին և ո՛չ էլ ԱՀ-ին, չնայած ադրբեջանա-դարաբաղյան այս ավելի քան 30-ամյա պատերազմների ժամանակ միշտ էլ դուռ է բացվել մեզ ճանաչելու և մյուս երկրների համար մեզ ճանաչելու ճանապարհ բացելուն: Ու եթե Հայկական երկրորդ պետությունը ճանաչվեր Հայաստանի Հանրապետության կողմից, ապա դժվար թե Իլիամ Ալիևն ու Երողյանը Բաքվում տիկնիկային թատրոն խաղային՝ 2020թ. դեկտեմբերի 10-ին սուտ հաղթանակը տոնեին:

Ամբողջ աշխարհը գիտի, որ արցախահայությունը գնացել է մեծ զիջման: Մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջին փոխարինել է նոր պետության՝ ԼՂՀ կամ ԱՀ հռչակմանը: Այնպես որ, կյանքը շարունակվում է, և ուշ չէ: Երբ էլ լինի, Հայաստանը ճանաչելու է մեզ, բայց որքան շուտ, այնքան լավ, և ես հավատում եմ, որ Հայաստանի չորրորդ հանրապետությունը ինչպես 1991թ. փետրվարի 21-ի դիմումում է գրված, «Ամեն ինչ կանի Մայր Հայաստանին Արցախի վերամիավորումն ավարտին հասցնելու համար»:


Մառլեն ՀԱՅՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
20-րդ դարի Ստեփանակերտի
լավագույն մանկավարժ,
անհապաղյալ թոշակառու

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ Է ԶԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ.

Ազգային հիմնախնդիրների լուծման ճանապարհ Մ ա ս Բ

Մաս Ա՝ «Լուսարար» հ.2-3



Տեղ Մեսրոպ քահանա ԱՐԱՄՅԱՆ «Այբ» դպրոցի կրթական ծրագրի հեղինակ է և հոգաբարձուների խորհրդի հիմնադիր նախագահ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կեղծիքն աննպատակ չի լինում, հատկապես երբ այն պարտադրված է: Զավեշտական է հնչում, բայց մեզ պարտադրում են «ազատ» լինել: Եվ այդ «ազատությունը» բոլոր ժամանակների մեծագույն հոգեւոր բռնությունն է: Ազատության, մարդու իրավունքների, հավասարության ակնուշահաճ թեգերի ներքո ներմուծում են օրակարգեր, որոնք գոյաբանական սպառնալիք են մեր ազգային ինքնության համար: Իսկ մեր արժեքային հիմքը սահմանված չէ, հետեւաբար չունենք ներքին համաձայնություն, թե ինչի շուրջ ենք միավորվում, եւ որոնք են մեր մարդկային հարաբերությունների սրբություններն ու սահմանները: Եվ քանի դեռ մենք չգիտենք, թե ով ու ինչ ենք, մեզ անընդհատ իմաստագրելով ու բարոյագրելով՝ հավասարեցնելու են: Ազատությունը առանց բարիքի գիտակցության եւ բարոյական պատասխանատվության՝ զաղափարական թմրանյութ է եւ կառավարելի քառուսի հիմնական գործիքը: Եվ մեր իրականությունը հենց ուղղորդված, կառավարվող եւ ազգակրթման քառու է, որից օր առաջ պետք է դուրս գալ: Ինչից սկսել: Նախ եւ առաջ՝ մարդու պաշտպանությունից, մարդկային հարաբերությունների չգրված օրենքների կամ սրբությունների ամրագրումից: Հասարակությունը չի կառուցվում սոսկ արտաքին օրենքներով եւ իրավական կարգավորումներով: Մարդկային կյանքը կանոնակարգող այդ հիմքային սկզբունքները կամ արժեքները ունեն կրոնափիլիսոփայական ծագում: Օրինակ՝ ավետարանական սերը եւ փիլիսոփայական արդարությունը շատերի համար անվիճելի ճշմարտություններ են եւ հասարակական կյանքի ձեւավորման բարձրագույն չափանիշներ: Սակայն ոչ պակաս կարեւոր են դրանք իրագործելու բանալիներն ու կողերը, որոնց բացահայտման համար կարիք ունենք նախեւառաջ հասկանալու եւ վերացնելու մեր համակարգային սխալների ու շեղումների պատճառները: Եթե մենք երկարաժամկետ մտածողության եւ ապագան տեսնելու խնդիրներ ունենք, ապա պատճառը մեր անհավատությունն է: Եթե քաղքենի ենք, սպառող եւ մանրախնդիր, ապա պատճառը մեր

անհավատությունն է: Եթե անփույթ, անհետեւողական ու թափթփված ենք, ապա պատճառը մեր թերահավատությունն է: Եթե ուզում ենք, որ անընդհատ մեզ գովեն եւ խոսեն մեր բացառիկությունից, ուրեմն ներքուստ դատարկ ենք: Պետք է շարունակել արատաբանության այս շղթան եւ վերհանել մեր համակարգային խախտումների օրինակափոխությունները, որպեսզի կարողանանք որպես հասարակություն կազդուրվել, մեզ պարզեցնելու կյանքը գնահատել եւ այն համաձայնեցնել կյանքի Տիրոջ հետ: Այս հարցում պատճենահանումները չեն օգնի, կարիք ունենք նրբագույն վերլուծությունների: Եվ միշտ պետք է հիշենք, որ հոգեւոր խավարը հաղթահարելու միակ ճանապարհը հավատքի ու առաքինությունների լույսն է: Իսկ մեր բարոյական աճի հայտարարը մեր խոսքն ու գործն են:

Խոսքը աստվածատուր շնորհ է: Հովհաննես ավետարանիչը Աստուծո Որդուն կոչում է Աստուծո Խոսք: Մարդը՝ որպես բանական կամ խոսքի շնորհով օժտված էակ, Աստուծո մարմնավորված Խոսքի պատկերն ու նմանությունն է: Խոսքը մեր մտածողության, ապրումների եւ մշակույթի խորհրդանիշն է: Խոսքը մեր սրբությունն է: Հետեւաբար խոսքի նկատմամբ հարգանքը հասարակության հոգեւոր իղեալների եւ մաքրության գլխավոր ցուցիչն է: Երկարաժամկետ լուծումը կրթության մեջ է: Սակայն մինչեւ սեփական խոսքը հարգող սերունդ ձեւավորելը մենք կարիք ունենք հենց այսօր մաքրագործելու եւ պաշտպանելու խոսքի սրբական ասպարեզը: Բավական է մի թռուցիկ հայացք նետել մեր հանրային հաղորդակցության հարթակներում եւ ցանցերում տիրող իրավիճակի վրա, որ համոզվենք, որ մենք իմաստագրելով, բարոյագրելով եւ այլանդակելով ենք մեր խոսքը: Մեզ ոչ անշահախնդրորեն օգնել են այդպիսին դառնալ, այսպիսին են ուղղորդված եւ կառավարվող խոսքի ազատության եւ ժողովրդավարության պտուղները: Ժամանակակից աշխարհում տեղեկատվական դաշտի եւ սոցիալական ցանցերի միջոցով կիրառվող մանիպուլյացիաները, ուրեղների լվացումը, գիտակցության վերակողովորումը, գոմբիացումը լավագույնս կիրառվել են մեզ վրա: Եթե չստեղծենք պաշտպանական համակարգ, կործանումն անխուսափելի է: Որպես առաջին քայլ՝ օր առաջ առցանց հանրային տարածքների դեմերը պետք է օրենքով փակել չստուգված օգտատերերի կամ ֆեյքերի առաջ, որպեսզի յուրաքանչյուր ոք իր խոսքին տեղ կանգնի եւ ասածի համար պատասխանատվություն ստանձնի: Օրենքով պետք է սահմանել հանրային տարածքում խոսքի հնչեցնելու որոշակի բովանդակային, որակական եւ բարոյական չափանիշներ: Այլապես հանրային խոսքի տարածքները լցվելու են զազրախոսության եւ զեղեկաբանության աղբով, որում գտնվելով վտանգավոր է առողջության համար: Օրինակ՝ հանրային տարածքներում խոսելու կամ, ավելի ստույգ, խոսք հեռարձակելու իրավունք կարող են ունենալ միայն բարձրագույն կրթություն ունեցող, հայոց լեզվի եւ մտածողության որոշակի մակարդակ ունեցող մարդիկ: Պահանջների

ցանկը կարելի է ընդլայնել: Այս ամենի փաստացի տվյալները (դիպլոմ, թեստերի արդյունքներ) պետք է արտացոլված լինեն օգտատերերի անձնական էջում: Այս խնդիրը անհավաղ լուծման կարիք ունի, այլապես ֆեյքերի, հիմարների եւ գոմբիների ձեռքը գերի ենք դառնալու:

Ազատ ապրելու պարզեցնել մենք մսխել ենք: Ստախտությունը եւ ատելության շարունակական քարոզը թունավորել են մեզ: Մարդը մեկուսացած եւ անպաշտպան է: Մեր հարաբերություններում եւ սպասումներում անվստահությունը գնալով աճում է: Ազատական քամիները, հեղափոխական խաթակները մեծ հեռանկարներ են բացել պրոտաբույծների համար: Գործ անողը, արդյունք տվողը, ստեղծագործողը ստորադասված են անգործներին, անբաններին, կյանքում ոչինչ չստեղծած եւ որեւէ պատասխանատվություն չստանձնած մարդկանց: Ինչպե՞ս դուրս գալ այս ծանր վիճակից: Նախ՝ պետք է գիտակցել չարիքը եւ հասկանալ, որ չարի հետ խաղերը եւ գրկախառնությունները լավ չեն վերջանում: Չարը անձնավորված գոյություն է, սակայն ամեն բան անում է, որ մենք հանկարծ դա չգիտակցենք: Չարիքից ամեն գնով, բոլոր մակարդակների վրա պետք է թռթափվել: Երկրորդ՝ պետք է հասկանանք, թե ինչ է բարիքը եւ գործ անենք: Բայց ոչ մեկուսի, այլ միասնաբար՝ հանրային շահի գիտակցմամբ եւ ազգ կառուցելով: Ուղի կանգնելու եւ հզորանալու միակ ճանապարհը բարիք ստեղծելն է: Եվ պետք է ամրագրենք մեր գիտակցության մեջ, որ բարիքը միայն որակով է լինում: Պողոթնությունը, ստեղծարարությունը, հավելյալ արժեքի ստեղծումը, նորարարությունը հասարակության արժեքային սանդղակի բարձրագույն դիրքերը պետք է զբաղեցնեն: Արարող մարդը Արարչի պատկերն ու նմանությունն է: Ավետարանական առաքինները ցույց են տալիս, որ մենք չենք կարող մեզ տրվածը նույնությամբ վերարտադրել կամ պահպանել, առավել եւս կորցնել կամ մսխել: Պետք է պտուղ տալ եւ ավելացնել ստացածը:

Ազատությունն առանց առաքինության կործանարար է: Հասարակական կյանքի կառուցման հիմնաքարը խոսքի եւ գործի արժեքը գիտակցող մարդն է: Այդպիսի մարդը դաստիարակելը, կրթելը եւ կերտելը միակ նախապայմանն է ազատ ապրելու եւ արարելու: Մարդկային բարձր որակների ձեւավորումը երկար ճանապարհ է, որի սկզբում անհրաժեշտ է պարզաբանել եւ հասկանալ, թե՛ ա) որոնք են մեր համակարգային սխալները եւ թերությունները, բ) ինչ է բարիքը եւ որ առաքինությունների շուրջ մենք պետք է միավորվենք, գ) ինչպես ամրագրել չարիքի մեթոդները, դ) որն է ապագայի հասարակության մեր մոդելը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգերի գոյությունը մեծապես կախված է նրանց համագործակցային ներուժից եւ մշակույթից: Մենակությունը դատապարտություն է: Աշխարհը թեւակոխել է համապարհիկ համագործակցությունների դարաշրջան, որն ազգերի ընդունում է մեծ հնարավորություններ,

բայց նաեւ պարունակում նրանց ինքնությանը սպառնացող վտանգներ: Մեզ համար կարեւոր է հստակեցնել, թե ինչպիսի ռազմավարական դաշինքների անհրաժեշտություն ունենք, եւ որն է մեր արտաքին քաղաքականության վեկտորը: Դաշնակիցներին ընտրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն պատմա-աշխարհագրական եւ ռազմա-տնտեսական գործոնները, այլեւ հոգեւոր-փիլիսոփայական եւ մշակութային մերձավորության սկզբունքները: Մեծ պատկերի տեսողությունը եւ այդ մեծ պատկերի մեջ սեփական դերակատարության ու դիրքերի հստակեցումը ելակետային դրույթներ են արդյունավետ դաշինքների համար:

Քրիստոնեությունը մեզ ընծեռում է մեծ հնարավորություններ: Քրիստոնեությունը դեռեւս աշխարհում ամենամեծ կրոնն է, եւ հայերը որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ՝ պետք է հստակեցնեն իրենց առաքելությունը առնվազն համաքրիստոնեական ասպարեզում: Սակայն սոսկ պատմական կրեդիտները բավարար չեն. քեզ վստահելու են եւ ընդունելու են որպես հեղինակություն, եթե դու հավատարիմ ես քո հավատքին եւ կարող ես բարոյական օրինակ ծառայել այլոց: Անգամ ոչ քրիստոնյաները քո նկատմամբ կունենան մեծ հարգանք, եթե համոզված լինեն, որ դու անկեղծ ես քո հավատքի մեջ: Ուրեմն՝ մեր հոգեւոր ակունքներին հավատարիմ մնալով միայն մենք կարող ենք լինել վստահելի գործընկեր եւ հեղինակություն: Եթե մենք ուզում ենք դառնալ մի միջին եվրոպական պետություն, մենք որեւէ մեկին հետաքրքիր չենք: Եթե ուզում ենք ստեղծել քրիստոնեական ազգի եւ պետության մոդել 21-րդ դարում (զոմե մեկ անգամ ստեղծել ենք այդպիսի մոդել), մենք միաձգամից հետաքրքիր ենք դառնում բոլորի համար: Ուրեմն՝ քրիստոնեական քաղաքականության մշակումը մեր ներազգային կյանքի կարգավորման եւ արտաքին քաղաքականության հիմնական հարթաթուղթն է:

Դաշնակցային հարաբերություններում միակողմանի խնդրողի դերակատարությունը բացառվում է: Ստանալու համար պետք է տաս, հզորանալու համար պետք է հզորացնես դաշնակցին: Դաշնակցային համագործակցությունը բազմաշերտ իրողություն է, որի կենտրոնում դաշնակցի ազգերի մտակենտրոնների համագործակցությունն է: Այդ համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծված ծրագրերն են ընկած լինելու քաղաքական որոշումների միջոցով: Համատեղ ծրագրերի մեջ սեփական ներդրումը բերելը եւ վստահության պաշար ձեւավորելը մեծ հնարավորություններ են բացում փոքր ազգերի համար: Վստահելի ազգերն օգտվում են ընդլայնված շուկաներից, գիտական ուսումնասիրությունների եւ տեխնոլոգիական զարգացումների մեծ ասպարեզներից, անվտանգության համալիր լուծումներից՝ շենացնելով եւ հզորացնելով իրենց երկիրը: Իսկ անվտանգ երկրի առաջ դրեցող հիմնականում փակված են, նրանք պարզապես օգտագործվում են ուրիշների նպատակների համար:

Արտաքին քաղաքականության մեջ մենք կրավորական դիտորդի կարգավիճակում ենք: Խնդիրների մի զգալի փունջ գալիս է նրանից, որ

չգիտենք, թե ինքներս մեզանից ինչ ենք ուզում, եւ դիմացինին չփոթոթյան մեջ ենք զցում: Այս ցարկոցիվ, պատահմունքային իրավիճակներից դուրս գալու համար անհրաժեշտ է հստակեցնել մի շարք հարցադրումների պատասխաններ: Որո՞նք են մեր հնարավորությունները, եւ համագործակցային ի՞նչ ներուժ ունենք: Ո՞րն է սփյուռքի դերը, եւ ինչպե՞ս ենք օգնում սփյուռքին: Ո՞րն է մեր արտաքին քաղաքականության հիմնական վեկտորը: Տեղեկատվության տիրապետման ի՞նչ համակարգ եւ գործիքակազմ պետք է ունենանք:

ԲԱՆԱԿ

Բանակի մոդելի ընտրությունը պետք է բխի ազգային անվտանգության հայեցակարգից: Անվտանգությունն իր հերթին վերաբերում է մարդկային կյանքի բոլոր ոլորտներին՝ մարմնական, տնտեսական, տեխնոլոգիական, տեղեկատվական, հոգեւոր: Հետեւաբար բանակաշինությունը պետք է արտացոլի ժամանակակից կյանքի անվտանգության բոլոր կողմերը: Հին մոդելներից պետք է զգուշանալ: Դրանք հաճախ անվտանգության խաթակաշինություն են ստեղծում, եւ մենք դասեր պիտի քաղենք մեր իսկ սխալներից: Ժամանակակից բանակի խնդիրներն են ոչ միայն սպառազինությունը եւ սահմանների պաշտպանությունը, այլեւ հոգեւոր ինքնության ամրացումը, բարձր տեխնոլոգիաների զարգացումը, տեղեկատվական անվտանգությունը: Բանակները ժամանակակից ազգերի կյանքում կենտրոնական դեր ունեն, նրանց ազդում են ուղղորդում են քաղաքականությունը, տնտեսությունը, գիտությունը: Ժամանակակից բանակը բարձր տեխնոլոգիաների հիմնական պատվիրատուն է եւ այդ ոլորտի զարգացման հիմնական խթանիչ ուժը: Իսկ որոշ ազգերի դեպքում, օրինակ՝ իրեաների, երկիրն ուղղակի կառուցվել է բանակի հենքի վրա: Իսրայելական բանակն այսօր հիմնական խաղաղուժերից մեկն է բարձր տեխնոլոգիաների համաաշխարհային շուկայում:

Ազգ-բանակի մոդելը կարեւոր նախաձեռնություն էր, սակայն ուշացած եւ ոչ ամբողջական: Այն պետք էր սկսել առնվազն երկու տասնամյակ առաջ, իսկ ամբողջական լուծումը ուղիղ ժողովրդավարության մոդելն է, որը, օրինակ, կիրառվում է Շվեյցարիայում: Յուրաքանչյուր չափափա մարդ իր երկրի պահապանն է, ունի իր զենքը, տանն ունի այդ զենքի պահպանման հատուկ պայմաններ եւ պարբերաբար անցնում է զինվորական պատրաստություն: Ուղիղ ժողովրդավարությունը բարձր պատասխանատվություն ունեցող հասարակություն կերտելու ճանապարհ է: Բոլորը հավասար են, բայց հավասարությունն ունի իմաստ եւ առաքելություն: Հայրենիքը նվիրական է, որովհետեւ այն պաշտպանում են բոլորը: Երբ այս մոդելի մասին ժամանակին քննարկումներ սկսվեցին, հիմնական հակաթեզն այն էր, որ մենք պատրաստ չենք, եւ մարդիկ իրար վրա կկիրառեն զենքը: Հասկանալի է, որ այստեղ ներքին մշակույթի եւ կրթության խնդիր կա: Բայց պետք է ինչ-որ կետից սկսել, այլապես այսպիսի տարածաշրջանում մենք անվտանգության որեւէ

ԱՌԱՆՑ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՍԿԵՏԻ

ԵՐԲ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱԶԻՐԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՆՊԱՏԱԿ

հեռանկար չունենք: Բացի դրանից, բոլորին հայրենիքի պաշտպանի կարգավիճակ տալը որակապես փոխում է հասարակության գիտակցությունը և մարդկային փոխհարաբերությունների բնույթը: Այդպիսի հասարակությունում մաուզերիստները, զոռքաները եւ ձայն գնողները տեղ չունեն:

Բանակի ոգին կերտում է սպայական էլիտան: Սպայական պատրաստության հաստատությունները պետք է օրինակ լինեն թե՛ իրենց ոգով եւ փիլիսոփայությամբ, թե՛ իրենց կրթական որակով եւ բարոյական նկարագրով: Հայ Առաքելական Եկեղեցու դերը այստեղ առանձնահատուկ կարեւորություն ունի: Արեւմտյան աշխարհի մի շարք երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, ռազմական կրթության հայտնի հաստատությունները հիմնականում ուղղակի կապ ունեն Կաթոլիկ եկեղեցու կամ բողոքական հարանվանությունների հետ կամ հիմնված են նրանց կողմից: Հավատքը կյանքի բոլոր ոլորտներում, բայց հատկապես ռազմական գործում ունի գոյաբանական (existential) նշանակություն: Իր եւ շատերի կյանքի համար վճռական որոշումներ կայացնող ռազմական գործչի բարոյականությունը պետք է ունենա մակարկային համակարգ (navigational system): Դա կոչվում է հավատք: Քրիստոնեությունը տալիս է նաեւ բանակում միջանձնային հարաբերությունների կարգավորման կարելու բանալիներ: Օրինակ՝ սպա-զինվոր փոխհարաբերությունը պետք է հիմնված լինի սիրո առաքինության վրա: Սպան պետք է վերաբերվի իր զինվորին, ինչպես հայրը՝ իր զավակին: Այսպիսի բանակը բարոյապես անպարտելի է:

Ժամանակակից բանակում սպառազինությունների եւ մարդկային ուժի հարաբերակցության փոխազդեցությունը ենթարկվում է լրջագույն փոփոխությունների: Բարձր տեխնոլոգիաները, արհեստական բանականությամբ օժտված համակարգերը, անօդաչու սարքերը եւ ռոբոտները արդեն ունեն մեծ կշիռ, որը գնալով ավելանալու է: Ապագայի բանակը միզուցե բաղադրանք է լինելու ամբողջովին ավտոմատացված ստորաբաժանումներից: Այս ասպարեզում մենք բավականին հետ ենք ընկել, եւ մեր անելիքները հստակեցնելու եւ արագացնելու խնդիրներ ունենք: Մեծախոսությունը, խաբկանքներ ստեղծելը, պոպուլիզմով զբաղվելը անընդունելի են: Լուծված խնդիրների գավառական կրկնաբանություններով զբաղվելը եւ դրանով մարդկանց ուշադրությունը շեղելը ծանր հանցագործություն է: Ինչ-որ բաներ պետք է ձեռք բերել, որովհետեւ դրանք նորից ստեղծելը, արտադրելը եւ որակ ապահովելը անհամեմատ ավելի թանկ եւ ժամանակատար են, եւ երբեմն՝ ուղղակի անիրատեսական: Ինչ-որ բաներ պետք է ստեղծել, որովհետեւ ամեն խնդիր չէ, որ աշխարհում լուծված է: Եվ ռազմարդյունաբերության ոլորտում բեկումն առաջացնելու համար որոշիչ են լինելու մեր ներուժի իրատեսական գնահատումը եւ մեր ռազմավարական գործընկերների հետ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը:

Մեր բանակը հիմնովին վերափոխվելու կարիք ունի: Անվիճելի է, որ բանակը պետք է ապահովված լինի արդիական զենքով ու տեխնոլոգիայով, որակյալ մարդկային ռեսուրսով, այլապես ինչպե՞ս պիտի ապահովի մեր անվտանգությունը: Սակայն բանակի առաքելությունը պետք չէ սահմանափակել սուս սահման պաշտպանելով կամ ռազմական առաջադրանքներ կատարելով: Բանակը պետք է դառնա՝ ա) արժեքային համակարգ, բ) ազգային կյանքի կազմակերպման մոդել եւ կրթական հարթակ, գ) տնտեսության եւ բարձր տեխնոլոգիաների զարգացման շարժիչ ուժ, դ) ապագան կանխատեսող եւ կանխորոշող հաստատություն:

Շարունակելի

11 թ տախագույթանը, ներքին գործերի նախարարությանը: Մոսկվան ոչ միայն միջոցներ չձեռնարկեց, այլև արգելեց հրատարակել «Իզվեստիա» թերթի թղթակից Ա. Բեկկերի «Անցյալի գերին ենք» հոդվածը: Կենտրոնական կառավարությունը չկարողացավ կռահել մոտեցող ողբերգության վերջին ազդանշանը: Երկու ամիս հետո պետք է լիներ «Սունգալիթ»-ը: Իսկ գուցե կռահել էր, բայց աջակցում էր լռությամբ:

Սունգալիթյան ողբերգությունն սկսվեց փետրվարի 26-ի երեկոյան և տևեց մինչև 29-ի ամբողջ օրը, երբ քաղաք մտավ բանակը: Մի քիչ ինչ է պատմում Արկադի Արաքանյանը. - Պատշգամբից նայում էի կոմկուսի քաղկոմի շենքի մոտ մոլեզմող ամբոխի միտուցին, որտեղ ելույթ էր ունենում առաջին քարտուղար Մուսիլիճովսկին: Նրա ծայրը մեզ չէր հասնում, բայց ամբոխի արագ հեռանալը կասկածանք առաջացրեց: Հաջորդ օրն այն Լենինի պողոտայի հարակից փողոցում էր: Հացի խանութը և հացի մեքենան վառած, հաց վաճառողուհին և մեքենայի վարորդը սպանված, կիսամերկ, խայտառակ վիճակում:

Եվս մեկ վկայություն հազարներից: Պատմում է Մադլենան.

- Փողոցի աղմուկ-աղաղակների և հայ կանանց լացուկոծի ազդեցության տակ, վախը սրտիս մեջ, հավաքեցի տղայիս անհրաժեշտ իրերը, ամբողջ մարմնով մեկ մի քանի տեղ գրեցի նրա անուն-ազգանունը, ծննդյան թիվը, օրը, ամիսը, ծնողների անուն-ազգանունները, դիմեցի ազգությամբ ադրբեջանցի հարևաններիս, որ զոնե երեխային թաքցնեն, բոլորը հրաժարվեցին: Ռուս հարևաններս նույնպես հրաժարվեցին մնալ պատասխանատվությունից:

Քաղաքում ինչ-որ չափով հետո փողոցներում ռուսական բանակի առկայությունը հնարավորություն տվեց հայ կանանց իրենց ցավակցությունը հայտնել անմեղ զոհերի համար: Հավաքվեցին քաղաքի 42 «ա» թաղամասի 26 շենքի առջև, որտեղ (21 բն.) Մելքոնյանների մի ամբողջ ընտանիքի սպանեցին, քանի որ դիմադրություն էին ցուցաբերել: Հայրը՝ Սողոմոն Մարգարի, 1931թ. ծնված, մայրը՝ Ռաիսա Մսեսյանի, 1934թ. ծնված, տղան՝ Իգորը, 1957թ. ծնված, տղան՝ Եղուարդը, 1960թ. ծնված, աղջիկը՝ Իրինան, 1961թ. ծնված:

Լրացել է 33 տարին սունգալիթյան ոճրագործության: Ցավոք, դեռ լրիվ չի բացահայտվել, թե ինչ է տեղի ունեցել քաղաքի հայ բնակչության հետ: Գորբաչովսկի ժամանակաշրջանում փորձում էին այդ ողբերգությունը լռության մատնել, իսկ այն, ինչ բացահայտված էր, որակում էին որպես խուլիգանական գործողություններ: Խորհրդային Միության որոշ քաղաքներում կազմակերպվեցին ցուցադրական դատեր, այսպես կոչված, խուլիգանների համար: Բոլոր դատական պրոցեսները պիտի տեղի ունենային Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Միայն մի պրոցես լսվեց ԽՍՀՄ Գերագույն դատարանում՝ Մոսկվայում: Իսկ երեքը տեղի են ունեցել Վորոնեժի, Վոլգոգրադի և Կույբիշևի (Սամարա) մարզային դատարաններում: Մյուս բոլոր դատական գործերը ԽՍՀՄ Գերագույն դատախազությունն ուղարկել էր Ադրբեջանի դատարաններ, որոնք լսվում էին Բաքվում, Սունգալիթում: Սունգալիթում տեղի ունեցած հայերի ցեղասպանությունն ազդանշան էր Ադրբեջանում հայերի թեմիկ գտման:

Սունգալիթյան իրադարձություններից հետո, 1988թ. մայիս ամսին աշխարհի խաղաղության պաշտպան, կոմիտեի նախագահ, միջազգային քաղաքական մեկնաբան Հենրիխ Բորովիկը ցուցադրում է վավերագրական ֆիլմ՝ մերկացնելով բազմազգ Ադրբեջանի ազգամիջյան խնդիրներնեղի լուծումը դիսկրիմինացիայի և բռնությունների միջոցով: Այսպես կոչված «ինտերնացիոնալ» հանրապետության ղեկավարությունն ամենաբարձր մակարդակով Հ. Բորովիկին հայտարարում է առաջին թշնամի:

Այն, ինչ տեղի ունեցավ Սունգալիթում, նույն սցենարով պիտի տեղի ունենար Կիրովաբադում (Գանձակ): Այստեղ աշխատանքի վայրերում ստիպում էին ստորագրել մի ուղերձի տակ, որը դատապարտում էր ԼՂԻՄ ժողովրդի

արդար պահանջը՝ այն համարելով ոչ իրավացի, էքստրեմիստական:

Քանի գնում, դրությունը արտակարգ սրվում էր: 1988թ. մայիսի 22-ին նորից և քանիտերող անգամ միտինգը և երիտասարդ ամբոխը շարժվեց դեպի հայկական թաղամաս, հատնվեցին առաջին փախստականները: Քաղաքի պարետ, գեներալ-մայոր Պուլեխի հրամանով մտցվեց պարետային ժամ՝ երեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 6-ը:

Կիրովաբադում տեղի էր ունենում անսպասելի: Քաղաքի Քյափազ ծերանոցի 12 հայերի սպանությունը, ալևոր տարիքի 11 կանանց և 1 տղամարդու դիակները հայտնաբերվել էին քաղաքից 40 կմ հեռավորության վրա, Քուռ գետի ափին: Ու նման տասնյակ շատ դեպքեր: Քաղաք մտցված բանակի ոչ վճռական գործողությունները թույլ տվեցին, որ միջնադարյան այդ բարբարոսությունը շարունակվի մեկ շաբաթ: Այդ ընթացքում ոչ պաշտոնական տվյալներով սպանվել է 18 մարդ, բռնաբարվել 11 հոգի, անհայտ կորել են 60-ից ավելի անձինք, ծանր վիրավորվել 70 հոգի, կողոպտվել ու այրվել է 1376 բնակարան: Շարունակվում էին հակահայկական հետապնդումներն ու ծեծկատուքը, ջարդերն ու խոշտանգումները, սպանություններն ու կոտորածները:

Եվ ահա 1990թ. հունվարին սկսվեց Բաքվի ինտենսիվ ջարդը: Նույն թվականի հունվարի 12-ին Ադրբեջանի ժողովրդական ճակատի արյունաբերու մասնակիցներն ու ղեկավարությունը՝ Նեյման Փանահունը ու Ռաիբն Դազիևը, հեռուստատեսությամբ հայտարարություն են տարածում. «Բաքու քաղաքը ամբողջապես լցված է անօթևան ադրբեջանցի փախստականներով, իսկ մինչև այսօր հազարավոր հայեր ապրում են հարմարավետ բնակարաններում»: Այդ ամենը կրում էր զանգվածային բնույթ՝ «Մահ հայերին», «Փառք Սունգալիթի հերոսներին» լռագունների ներքո: Թե՛ անցյալում և թե՛ 80-90-ական թվականներին ադրբեջանցիների և թուրքերի «արիությունը և զաղափարախոսությունը ցեմենտավորված է խաղաղ հայերի արյունով»:

Տաղանդավոր գրող Աբրահամ Ալիխլին իր հանրահայտ վեպում զուգահեռ է անցկացնում Սունգալիթում, Բաքվում հայերի ջարդերն ու 1918թ. Նախիջևանում ու Ազուլիսում (այժմ՝ Ալիխլի) հայերի կոտորածների միջև: Ցավը սրտում՝ նա պատմում է, որ Ադրբեջանում իրենց քաղաքացիներին սպանում են միայն նրա համար, որ նրանք հայ են:

Ես հիշեցի Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարաղայի դեպքերը: 1992թ. ապրիլի 10-11-ին ոճրագործները մտան գյուղ՝ սպանելով 57 խաղաղ բնակիչների: 45 հոգու գերեզմաններն, այդ թվում՝ 9 երեխա և 29 կին. թեկուզ գերեզմարածների մի մասը ետ վերադարձավ, սակայն 19 հոգի չվերադարձան, և նրանց ճակատագրերն առայսօր մնում են անհայտ:

Այս տվյալները հաստատված են Human Rights watch միջազգային իրավապաշտպան կազմակերպության կողմից:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի կողմից հրավիրվեց 20-րդ արտահերթ նստաշրջանը՝ արտահայտելով արցախցիների վճռականությունը՝ լինել իրենց երկրի ճակատագրի տերը: Իսկ 1991թ. դեկտեմբերի 10-ին Արցախի ժողովուրդը ռեֆերենդումով (հանրաքվե) իրականացրեց ինքնորոշման իր իրավունքը՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը հանդիսանում է ազատ, անկախ ժողովրդավարական պետություն: Որոշման մեջ սակած է նաև, որ Արցախի ժողովրդի ինքնորոշումն անդարձ վճիռ է, և որ Արցախի հաղթական երթն անհնար է կանգնեցնել:

Այս թեման այնքան ցավոտ է, որ կա սկիզբ, կա ընթացք, սակայն չկա ավարտ: Ոչ միայն Բաքվում և Սունգալիթում կամ Գանձակում, այլև ողջ Ադրբեջանի տարածքում տարիների հեռավորությունից այստեղ շարունակվել են հակահայկական քարոզչությունը, ճնշումներն ու բռնությունները, ազգային խտրականությունը: Հիշենք թեկուզ դրանցից մեկը՝ 1960-ական թվականների դարաբաղի փոքրիկ տղայի՝ Բենիկի որդու սպանությունն ու դատը Ստեփանակերտում:

Ցավով եմ հիշում ու վերապրում այդ ողբերգական պահն ու իրավիճակը, քանի որ ակամատեսներից մեկն էլ հենց ես եմ:

Ինչքան էլ դեմ առ դեմ շփվում էինք, խոսում, ժպտում, բաժակ-բաժակի տալիս, այնուամենայնիվ, կար այն սևատեսք սահմանը, որտեղ պարզ երևում էր՝ ով է թուրքը:

Մեկը «քիրվա», մյուսը՝ «աշնա», երրորդը՝ «եղբայր», չորրորդը՝ «գարդաշ», միևնույն է, կար զգացում և ինչ-որ տեղ սպասումներ, որ վաղ թե ուշ պիտի լինեին բախումներ, պատերազմ, և սպասումները քանի գնում, տեսանելի էին դառնում:

Ընդամենը մի վառ և համոզիչ օրինակ, որ մենք հարևան ժողովուրդ ենք, բայց նաև թշնամիներ, խաղաղ պայմաններում հարևաններ, պատերազմի ու ազգամիջյան ընդհարումների ժամանակ՝ թշնամիներ ու վրիժառուներ: Սակայն մենք՝ հայերս, լավատես ենք եղել, բայց շատ ենք խաբվել, հավատացել, անգամ՝ վստահել:

Ես ծնվել եմ Թաղավարդ գյուղում (Մարտունու շրջան), սովորել, աշխատել, ստեղծագործել հայրենի եզերքում: Հայրս արհեստավոր էր, իր աշակերտներով աշխատում էր Կարյազինոյում (1960թ., Ֆիզուլի), նրա բրիգադը տեղակայված էր Ադր.ԽՍՀ սոցիալիստական աշխատանքի հերոս Շամանա Հասանովայի կոլտնտեսության շինարարական հարթակում: Այդ իսկ պատճառով մանկուց շփումներ կային: Ուսումնա շարունակում նախապես զննացի Բաքու և ավարտեցի Բաքվի Ազիմ Ազիմզադեի անվան ուսումնական հաստատության արվեստի ֆակուլտետը: Ունեի ադրբեջանցի, ռուս, վրացի, ուկրաինացի ու այլ ազգերից կազմված ուսանողական կոլեկտիվ: Եվ բոլորիս մոտ նույն կարծիքն էր ձևավորված. թուրքը մնում է թուրք՝ վերաձևակերպված ադրբեջանցի: Այնպիսի հավատ ունեի, որ լավ սովորել էինք մեկս մյուսի լեզուն: Ես անգամ ադրբեջաներենից թարգմանություններ էի անում թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն և թե՛ ուկրաիներեն կամ վրացերեն: Այս օրինակը նրա համար չէ, որ ես ինձ ներկայացնեմ, այլ որ ես առավել քան ժամանակին հասկացա՝ ով ով է, և իմ ցավալի սպասումները դարձան դառն իրականություն:

Գիտեիք, որ թշնամիներ ենք եղել ու այսօր էլ կանք, սակայն խորհրդային 70 տարիներին կեղծ եղբայրություն պարտադրեցին, և դա կոմունիստական գաղափարախոսությունն էր, որ կարծես կանավոր, բայց նաև պարտադրվում էր:

Այսքանով հանդերձ, կարծես պատմությունն ու գաղափարախոսությունը բուժեբանագի մնան են: Ռուս և հայ իշխանավորների կողմից հաշտեցման ու մերժեցման միտումներ են նկատվում՝ մոռացվելով մեր պատմությունը, իրադարձությունները, զոհերն ու անհայտ ճակատագրերը, ավերածություններն ու տարհանումները, գերեզմարածներն ու մեր հայրենի արցախյան օկուպացված գյուղերն ու գերեզմանները, սրբավայրերը, մեր գերդաստանային և տոհմային օջախներն ու ընտանիքները: Այսօր նաև փորձ է արվում գերեզմարել ամբողջ արցախահայությանը, պատմական Լեռնահայաստանն ու Հայկական լեռնաշխարհը:

Հիշողությունն այն արժեքն է, որ երբեք չի կարող մոռացվել: Հիշել՝ նշանակում է գնահատել, արժևորել, արթուն պահել, այն մեր յուրաքանչյուրի խիղճն է: Ես այս ամենը հիշում եմ և ուզում եմ իմ հիշողությունները փոխանցել նրանց, ում համար նման դրվագները պատմություն են:

Ինչպես մեծ գրողն է ասել՝
Դա մեռածներին պետք չէ, ես գիտեմ,
Բայց ապրողներին շատ է հարկավոր:
(Ռ. Ռոժդեստվենսկի)

Հողվածի ձևակերպման աղբյուր են հանդիսացել բանավոր և գրավոր վկայությունները: Հաստատուն ուղեցույց էր Յուրի Բաղդասարյանի աշխատությունը, որին ես երախտապարտ եմ:

Յուրա Բեգևորյան
Թաղավարդի միջև դպրոցի թոշակառու ուսուցիչ ք. Մասիս - Երևան

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ

ԾԱՆՐՈՐԴ ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԱՆՄԱՀԱՑԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼԻՍ




ներ ու մարզական ձեռքբերումներ ուներ: 2019թ. Եվրոպայի ուժային եռամարտի առաջնության փոխչեմպիոն էր, իսկ սեղմում պառկած դիրքից առաջնության՝ երրորդ տեղի մրցանակակիր: Մարզական ձեռքբերումների համար 2018թ. եւ 2019թ. ԱՀ նախագահի կողմից արժանացել է պարգևների:

Ընկերը՝ ծանրորդ Հարուսթ Ավանեսյանը, կորստի մեծ ցավով է պատմում մտերիմ ընկերոջ ու թիմակցի մասին: Պարապլում էին միասին, մրցույթների էին զնուն միասին, մրցանակներ էին բերում միասին, ուրախանում ու տխրում էին միասին: Դժվար է հարմարվել նրա բացակայության հետ: Թաթուլը ընկերասեր տղա էր: Նրանք ընկերության մեջ տարբերություն չէին դնում մեքենաների մեջ, հագուստի մեջ: Շատ անգամ իրար էին վստահում մեքենաները, տարբեր հարցերում աջակցում միմյանց: Հարուսթի խոսքով՝ նրանք ընկերներով հաճախ էին հանդիպում պարապլումներից դուրս եւ գրուցում: Թաթուլը հավասարակշռված, խիստ, բժախնայի բնավորություն ուներ: Ծառայության ընթացքում էլ, մարզվելիս էլ միշտ աչքի է ընկել դրական հատկանիշներով, իր պարտականությունները կատարել է պարտաճանաչությամբ: Ինչպես վայել է ծանրորդ մարզիկներին, կարգապահ էր, իսկ ֆիզիկապես՝ շատ ամրակազմ: Ընկերների հետ բարի էր ու կատակասեր: Հարուսթը վերհիշում ու պատմում է, որ Թաթուլը շատ խոստովներին չէր ողջունում, ինքն էլ շատախոս չէր: Հաճախակի խրատում էր ընկերոջը կատակով թե՛ լուրջ, որ պետք է քիչ խոսել, շատ լսել, խելացի մարդիկ այդպես են անում: Սիրում էր սպորտը, նպատակասլաց էր, պարապլումների ժամանակ ցուցաբերում էր ակտիվություն եւ կամք: Առնի բազմաթիվ մարզական նվաճումներ: Սարդասեր էր, ընկերներին օգնում էր միշտ, բարի ու քաղաքավարի էր: Թաթուլը հայրենասեր տղա էր: Արտերկրում աշխատելու առաջարկներ էր ստացել, բայց չէր ուզում

կարողացավ իր մեջ ուժ գտնել եւ պատմել մեզ իրենց մասին: Ծննդատնից նոր էին դուրս գրվել, երբ գրույց ունեցանք նրա հետ: Ասում է, որ երեխաների անունները, այդ թվում նաեւ Թամարայինը, հայրն էր որոշել, ինքն էլ դեմ չէր: Թաթուլը հավատարիմ ամուսին էր, հոգատար հայր՝ նվիրված ընտանիքին: Նա ամեն ինչ անում էր, որ երեխաները կարիք չունենան: Շատ ժամանակ էր տրամադրում երեխաների հետ զբաղվելուն, զբոսնելուն: Քանի որ ծանրորդները սովոր են աշխատել ծանր ու կոպիտ երկաթածողի հետ եւ ունեն շատ ամուր կազմվածք, հաճախ շրջապատի մոտ կարող են կոպիտ մարդու տպավորություն թողնել: Բայց դա ընդամենը տպավորություն կարող է լինել առաջին հայացքից: Թաթուլը, չնայած խիստ բնավորության տեր, բայց հավասարակշռ-



խոսք հիշատակի
ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱԲԵԿԻ



Սույն թվականի մարտի 2-ին կյանքի 85 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց հանրապետության վաստակավոր մանկավարժ, հանրակրթության հնուտ կազմակերպիչ Անուշավան Աղաբեկի Պողոսյանը:

Անուշավան Պողոսյանը ծնվել է 1936 թվականի փետրվարի 12-ին նախկին ԼՂԻՄ Նախիջևանիկ գյուղում: 1943-1953 թթ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը: 1953թ. ընդունվել է 1957թ. գերագանցությանը ավարտել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության բաժինը: Ավարտելով բուհը՝ սկզբնական շրջանում ծավալել է մանկավարժական գործունեություն, այնուհետև զբաղեցրել է քաղաքական պաշտոններ՝ կոմերիտ-միության Ստեփանակերտի շրջկոմի քարտուղարից հասնելով մինչև Արցախի կոմունիստական կուսակցության քարտուղարի պաշտոնին:

ված, նրբանկատ, խելացի ու պարկեշտ էր: Կինը պատմում է, որ ցանկացած հարցում կարող էր օգնել իրեն, երեխաների հետ կապված ամենամուտք հարցերում էլ գլուխ էր հանում եւ օգնում: Ամենազբաղված պահերին էլ հասնում էր: Անուշը հաճախ էր կրկնում, որ Թաթուլը ոնց որ իր անձնական վարորդը լինի: Այժմ նա ստիպված է առանց սիրելի ամուսնու հոգ տանել զավակների մասին:

Մեր հերոսն ապրեց կարճ, բայց իր քաջության շնորհիվ թողեց մի ամբողջ կյանքի պատմություն, որը դարերով կապրեցնի նրան: Արցախյան նորոյրա գոյապայքարի անմահ հերոսներից է մեր սիրելի մարզիկ Թաթուլ Հարությունյանը, որը քաջաբար հավերժացավ՝ միանալով իր մյուս զինակից ըն-



կերներին: Հանգչում է Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում:

Արցախի մարզաշխարհի համար Թաթուլ Հարությունյանի բացակայությունը մեծ ու ծանր կորուստ է: Հայտնում ենք ցավակցություն եւ մեր զորակցությունն ընտանիքին ու հարազատներին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՀ ԿԳՄՍ նախարարություն

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմը պատճառեց մեծ վնասներ ու կորուստներ: Ցավոք, արցախյան մարզաշխարհն անմասն չմնաց եւ ունեցավ ցավալի ու անդառնալի կորուստներ: Շատ հայորդիների նման իր կյանքը հայրենիքի պաշտպանությանը զոհեց ՀՀ-ում եւ Եվրոպայում ճանաչված արցախցի հզոր մարզիկ, Ուժային եռամարտի ՀՀ բազմակի չեմպիոն, Եվրոպայի առաջնությունների մրցանակակիր Թաթուլ Հարությունյանը:

Թաթուլ Վիգենի Հարությունյանը ծնվել է 1987թ. մայիսի 14-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ստեփանակերտի հ. 6 դպրոցը: 2008-2013թթ. սովորել է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում եւ ստացել իրավաբանի մասնագիտություն: Թաթուլը ընտանիքի միակ տղա զավակն էր, հայրը մահացել էր: 2007-2012թթ. ծառայել է ԱՀ ՊԲ ՀՕՊ-ում: 2014թ. հուլիսից դեկտեմբերը սովորել է ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցում: 2016թ. մասնակցել է Ապրիլյան պատերազմին: 2012-2020թթ. տարիներին ծառայել է ԱՀ ՊԲ վերանորոգման բազայում որպես պահակապետ, նյութական ապահովման վաշտի բեռնաթափման եւ պահպանության դասակի հրամանատար, ավագ ենթասպա: Արցախի խաղաղ բնակչության դեմ արյունաբերու թուրքադրբեջանական ոստիկ սանձազերծած պատերազմի հետեւանքով 2020թ. հոկտեմբերի 2-ին ծառայության ընթացքում ստացել է մահացու բեկորային վիրավորում՝ թիկունքում թողնելով՝ իրենց տան գլուխի գալստյանն սպասող երեք նախադպրոցական զավակներին ու հղի կնոջը:



Թաթուլ Հարությունյանը մարզական ճանապարհն սկսել էր շուրջ տասնհինգ տարի առաջ: Սիրելով սպորտը եւ լինելով պարտաճանաչ ու նպատակասլաց՝ չէր նահանջում ոչ մի դժվարության առջեւ: Սկսել էր ուժային եռամարտ պարապլե դեռ եւս այն ժամանակ, երբ Արցախում այդ մարզածելը նոր էր սկսում զարգանալ: Պարապլումների էր զնուն «Դինամո» մարզահամալիրում մարզիչ Արկարի Ջաբարյանի մոտ: 2009թ. հիմնադրվեց Ուժային եռամարտի (փաուլերլիֆ-թինգի) ֆեդերացիան, իսկ Թաթուլը ֆեդերացիայի լավագույն մարզիկներից էր եւ մարզիչ Արկարի Ջաբարյանի սիրելի սաներից մեկը: Բազմիցս մասնակցել է ՊԲ-ի կողմից կազմակերպվող մարզական միջոցառումների, ինչպես նաեւ ՀՀ-ում եւ արտերկրում կազմակերպվող ուժային եռամարտի առաջնությունների: Ինչպես ծառայության մեջ էր կարգապահ ու պարտաճանաչ, այնպես էլ սպորտում ցուցաբերում էր բարձր մակարդակ, կամք ու նպատակասլացություն: ՀՀ ուժային եռամարտի բազմակի չեմպիոն, ՀՀ ուժային եռամարտի հավաքականի անդամ էր: Թաթուլ Հարությունյանը շատ մրցանակ-


թողնել հայրենիքը, ծառայությունը, հարազատ մարզումները, իր հողն ու ջուրը: Ընդհակառակը, մտածում էր ծառայությանը զուգահեռ որեւէ գործ սկսել: Սիրում էր մեքենաները, ուզում էր դրա հետ կապված որեւէ սեփական գործ ունենալ, մտածում էր ավտոտեխնասերի խառնուր բացել ու ընտանեկան բիզնես հիմնել: Ավաղ, նրա նպատակները մնացին անկատար:

Թաթուլ Հարությունյանը շատ ընկերներ ու մեծ շրջապատ ուներ, բայց նրա համար առաջին տեղում միշտ էլ ընտանիքն էր: Անուշի հետ ամուսնացել են 2013թ. օգոստոսին: 2016-ի ապրիլին ծնվել են նրանց երկվորյակ աղջիկները՝ Աննան ու Ալինան: 2017-ին ծնվել է նրանց որդին՝ Վիգենը: 2021-ի հունվարի 28-ին ծնվեց Թամարան, որն այդպես էլ չի տեսնի քաջաբար հերոսացած հորը:

Կինը՝ Անուշ Հարությունյանը, որքան էլ ծանր վշտի մեջ էր ամուսնու կորստից, բայց

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՈՎՔ ՆԱՅՈՑ ԱՅՐՈՒԲԵՆԻ



Մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակը «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմում գրել է.

Այդ, մենք կայինք նրանից առաջ, Չգոր թե տկար՝ Մարմին էինք մենք:

Սակայն նա եկավ, որ Չոգի դառնա,

Շոշափվող հոգի: Եվ անմեն հոգի:

Այդ, մենք կայինք նրանից առաջ, Քիչ թե շատ՝ կար հաց, Եվ ունեինք ջուր:

Եվ ծնվեց, որ ծնե՛նք, Եղա՛վ, որ լինե՛նք, Եվ անմահացավ, Որ անմահանա՞նք...

Ասել է թե՛ մեր Առաջին Ուսուցիչը, ստեղծելով Հայոց գիրը, դարերի ընթացքում պահպանել է մեր լեզուն, հավատը, մեր ժողովրդի միասնությունն ու մասնակցությունը համաշխարհային քաղաքակրթությանը:

Հիրավի, Մեսրոպյան այբուբենը դարձել է մեր ազգային ճակատագրի հավերժ ժիպսաձևն ու փառաբանվել մեր պոեզիայում, գնահատվել որպես հարատևելու ավիշ, արարելու դաս:

Հայոց այբուբենի ամեն մի տառ թևավորել է հայ գեղագետների: Բանաստեղծները ստեղծել են պոեմներ, ասքեր, բալլադներ, հոգևոր երգեր, կտավներ, քանդակագործները քանդակել են մեսրոպյան տառերի տուֆակերտ հուշարձանները:

Հայոց այբուբենի առաջին օրհներգիչը Մեսրոպ Մաշտոցի երախտագետ աշակերտ Կորյունն է, որը սերունդներին է կտակել «Վարք Մաշտոցի» մեսրոպաշունչ մատյանը:

Աշխարհահռչակ հայագետ Մանուկ Աբեղյանը, աշխարհաբար թարգմանելով Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը, միաժամանակ գրել է ներածական ուսումնասիրություն, առաջաբան և ծանոթագրություններ: Ընդհանրության մեջ գիրքը հրատարակվեց 1962թ. երևանում:

Խոնարհվելով անմահ Մաշտոցի հիշատակի առջև՝ հայ մշակույթի պատմության անմրցակից լուսաբանող՝ Մանուկ Աբեղյանը, Մաշտոցյան այբուբենի նշանակությունը շատ բարձր է գնահատում. «Մաշտոցի ու Սահակի և նրանց աշակերտների ջանքերով ստեղծվում է եկեղեցական հայերեն լեզուն, որ ընդունվում է երկու կողմերի հայերից և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում: Դրա հետևանքով ևս պահվում է միությունը հայերի մեջ միշտ և ամենուրեք: Նույնիսկ ուշ դարերում հռոմեական եկեղեցուն անցած հայերի հատվածները չեն

իշխում դիպչել հայոց եկեղեցական լեզվին և լատիներենով փոխարինել այն: Այդ լեզուն դառնում է, ուրեմն, ազգային միության մեծ գործոն» (Կորյուն, «Վարք Մաշտոցի», Հայպետհրատ, Ե., 1962, էջ 67):

Նման կենսափոխակալական ընդհանրացումից հետո Մ. Աբեղյանը կատարում է մարգարեական մի նոր ընդհանրացում՝ գնահատման ամենաճշմարիտ պայծառատեսությամբ: «Բայց այդ դերը,- գրում է նա,- լեզուն կատարում է ոչ միայն եկեղեցու միջոցով: Եկեղեցական լեզուն նաև գրական լեզու է, որով գրել են թարգմանչական և ինքնուրույն երկեր: Հետագայում ևս հայ դպրությունը զարգանում է նույն լեզվով, և առաջ է գալիս համեմատաբար հարուստ իմ հայկական գրականությունը, որ զանազան իշխանությունների ենթակա, քաղաքականապես անջատ և հաճախ սեփական պետություն չունեցող հայ ժողովրդի համար դառնում է ընդհանուր հոգևոր կյանքի, համագոյսի միություն պահպանելու և նույնիսկ դեպի ազգային անկախություն հրահրելու ամենամեծ պատմական գործոնը: Այդ ինքնուրույն գրականության սկիզբն էլ դնում են ինքը Մաշտոցը և Սահակի ու Մաշտոցի աշակերտները»:

Մաշտոցյան այբուբենի գյուտը բարձր գնահատեցին 5-րդ դարի դպրության անմահ ներկայացուցիչներ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին:

Մ. Խորենացին ճշմարիտ փաստերի ու իրադարձությունների հիման վրա շարադրում է այն դժվարությունները, որոնք հաղթահարել է Մաշտոցը: Այսպեսից հետո, ինչպես գրում է Քերթոզահայրը, Մեսրոպը ապավինում է աղոթքի. «Եվ տեսնում է ոչ երազ քնի մեջ, ոչ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է ձեռքի թափ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավերժվեցին ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը՝ Հոռոմանոսի հետ ձևակերպելով Մեսրոպից պատրաստված գրերը, հայերեն տառերը ճիշտ հանդիպեցնելով հունարենի հնչյուններին» (Մ. Խորենացի, «Պատմություն հայոց», «Հայաստան» հրատ., 1968, էջ 293):

Մեսրոպ Մաշտոցի ազգափրկիչ գյուտը և նրա պայծառ հիշատակը չէին կարող չհուզել 5-րդ դարի երկրորդ կեսի ականավոր պատմիչ Ղազար Փարպեցուն, որը դարերին է հանձնել հայտնի «Թուղթը»՝ ուղղված Վահան Մամիկոնյանին և «Հայոց պատմություն» մատյանը: Պատմության մեջ մեծարանքի խոսքով է գնահատում Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին: Դարերի ու գալիք սերունդների համար նա կոնկրետ տարեթվերի հիմամբ շարադրում է նրանց մահվան ժամանակաշրջանը և պատվավոր հուղարկվողությունը ժողովրդի կողմից: Պատմիչը հայտնում է, թե ինչպես Սահակ Պարթևի մահից հետո «Արբի տենչալի մարմինը քահանաների ու ազատների բազմությամբ տարան Տարոնի գավառը, իր սեփական ու բնիկ գյուղը, որ կոչվում է Աշտիշատ և այնտեղ սրբի համար հանգստարան շինելով՝ նրա արդար մարմինը թաղեցին

ըստ արժանվույն» (Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., 1982, էջ 85):

Հայտնի են անմահ Արբի ծննդյան ու մահվան տարեթվերը (29.9.348, Կեսարիա, 7.9.439, գյուղ Բլուր, Բագրեվանդի գավառ):

Ղ. Փարպեցին հայտնում է նաև Մեսրոպ Մաշտոցի մահվան տարեթիվն ու ամիսը և նրա հուղարկվողության համաժողովրդական արարողությունը: Ահա թե ինչպես է նա նկարագրում Հայոց առաջին ուսուցչի հուղարկվողությունը. «Սուրբ Սահակի վախճանից վեց ամիս հետո, ճուր և տարում, մեհենական ամսի տասներեքին վախճանվեց երանելի Մաշտոցը Վաղարշապատ քաղաքում, որ կոչում են Նոր քաղաք: Ամատունյաց իշխան Վահանը, առնելով այն առաքինի մարմինը, տարավ իր գյուղը, որ կոչվում է Օշական: Եվ հույժ մեծարանքով պատրաստեցին երանելու գերեզմանը, ապա Այրարատի ժողովրդական բազմությունները ամենաշքեղ պատվով նշում են նրա հիշատակի տոնը» (Նույն տեղում, էջ 85):

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան տարեթիվը մոտավորապես համարվում է 362 թվականը: Ծնվել է Տարոնի նահանգի Հագեկաց գյուղում: Մահկանացուն կնքել է 440թ. փետրվարի 17-ին:

Մաշտոցյան գրերի փառաբանման ճանապարհին ուշագրավ երևույթ դարձավ 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ Քերթոզի «Մեծ իշխան Ջիվանշիրի մահվան ողբերգը» չափածո երկը՝ բաղկացած 36 տնից: Յուրաքանչյուր տուն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառով: Այն ծայրակապ ակրոստիքոս է, որը վերարտադրում է Մեսրոպյան այբուբենը:

Մաշտոցյան այբուբենը պոեզիայի նյութ դարձավ նաև 7-րդ դարի եկեղեցական գործիչ, բանաստեղծ Կոմիտաս Կաթողիկոսի, Ստեփանոս Սյունեցու (8-րդ դար), Համան Արևելցու (9-րդ դար) և այլ մշակութային գործիչների համար:

Թարմ ու բովանդակալից երևույթ են 12-րդ դարի բանաստեղծ Ներսես Ընդրիակու ակրոստիքոսները, որոնցում ոչ միայն ստեղծագործության առաջին տողն է սկսվում այբուբենի հերթական գրով, այլև տան բոլոր տողերը:

Մեսրոպյան այբուբենի փառաբանման ավանդույթը շարունակվեց նաև հետագա դարերում՝ Խ. Աբովյանից մինչև Հ. Թումանյան, Ավ. Իսահակյանից Վ. Տերյան, Ե. Չարենցից Հ. Ծիրակ: Ապա հպարտության իրենց խոսքը հնչեցրին Պ. Սևակը, Հ. Սահյանը, Վ. Դավթյանը, Հ. Հովհաննիսյանը, Գ. Եմինը, Ս. Կապուտիկյանը և այլք: Այդ աստվածահաճ գործը յուրովի շարունակեցին Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Հակոբյանը, Ռ. Եսայանը, Դ. Միքայելյանը, տողերիս հեղինակը և ուրիշներ: Այստեղ արժե առանձնապես ընդգծել տաղանդավոր մանկագիր Գ. Գաբրիելյանի «Այբուբենը երգերի մեջ» ստեղծագործությունը, որը դարձել է «Այբուբենի տոն» Արցախի հանրակրթական դպրոցներում: Հաճույքով նշենք նաև, որ Գաբրիելյանի երկի հիման վրա կոմպոզիտոր Կիմ Առաքելյանը ստեղծել է դասական երաժշտություն: Այն ամենուրեք հնչում է ժողովրդական երգչուհի Նաիրուհի Ալավերդյանի կատարմամբ:

Ազգաբնույթ ավանդույթը շարունակվում է նաև մերօրյա ստեղծագործական գործընթացում, առանձնապես մանկագիր բանաստեղծների կողմից: Քնարական երգերով ու պոեմներով հանդես են եկել Ս. Մուրադյանը, Յու. Սահակյանը, Ե. Պետրոսյանը, Լ. Սարգսյանը և այլք:

Այդ գործում ուրախալի ներդրում է եղ.Միլիտոնյանի «Այբբենարան» նոր ժողովածուն՝ տպագրված 2019-ին «Ծիծեռնակ» հրատարակչության կողմից: Այն միանգամայն տարբերվում է մինչև հիմա տպագրված նմանատիպ երկերից: Միլիտոնյանը այբուբենի գրերին հաղորդում է ազգային ոգի՝ առնչված ժողովրդի ճակատագրին, նրա բնավորությանը, պայքարին և հույսին, արարմանն ու հարատևմանը: Ըստ բանաստեղծի, մաշտոցյան Ա-ն մեր ժողովրդի հավերժացման երազանքն է՝ աստղավորված Հայրենիքի լինելության գաղափարով:

Ա-ն առաջին տառն է մեր, Առաջնորդ է անվեհեր Եվ տանում է տառերին Այն Արարատ սարն ի վեր: Միլիտոնյանը այբուբենի հավերժությունը կապում է նոր սերունդների աշխատասիրության հետ: Այդ միտումով էլ Բ-ն օրհներգում է՝ ելնելով այդ նպատակից.

Բարի մանուկ, Ճամփաղ բանուկ, Վերում՝ արև, Վարում՝ բարև: Տառերի մրցույթին մասնակցում է Գ-ն: Նա ժողովրդի հաղթական ուղին առնում է միասնությանը՝ բացակայեցնելով. «Առանց իրար ի՞նչ Այբբենարան, // Մենք միասին ենք հոգու հենարան»:

Դ տառի տեղն ու դերն ընդգծելու համար եղ. Միլիտոնյանը չի շրջանցում իր սուր հումորը, գրում է. «Դ-ն դպրոց գնաց ու դրում էլ մնաց»: Բայց միասնամակ կատարեց ժողովրդական իմաստությունից բխած խորհուրդը. «Ամեն մեկն իր դերն ունի, // Սա էր դերը դրումի»:

Հետևելով այբուբենի միլիտոնյանական բնութագրումներին՝ համոզվում ես, որ մեր ժողովուրդը կենսահաստատ իր արարումը գոծել է երազանքի ամենապայծառ շողերով:

Օ, երանի Ե տառին, Երազում է ողջ տարին, Երևանի երկնքում Երերում է ու երգում: Ընկերության գաղափարը միշտ էլ հողովել է մեր մանկական գրականության մեջ: Միլիտոնյանը այդ թեման ավելի տեսանելի ու շոշափելի է ներկայացնում ընկուզենու միջոցով, որը հաճելի-շոյոլ տպավորություն է թողնում. Ընկույզն ունի Ընկերներ, Նրանք էլ են Ընկույզներ...

Ըստ բանաստեղծի, Թ-ն թռիչք է ու թև, Ժ-ն՝ իմաստնացած ժամանակ, Ի-ն արդար իրավաբան է, Լ-ն՝ լուրջ ու լիասիրտ լողորդ: Խորանալով այբուբենի շերտերի մեջ՝ բանաստեղծը վկայակոչում է մեր ժողովրդի դժվարին ու փառավոր պատմությունը՝ Խ տառի հողովմամբ մեծարելով Խորենացուն:

Խոսելուց առաջ միշտ խորհում է մարդ, Որ խոսքը հնչի արժանահավատ...

...Այդպիսին էր մեր Խորենացին,

Հայոց պատմության պատմիչն առաջին,

Ա՛յ թե ինչու ենք տառերը սերունդ,

Որ կարդանք մեծաց խոսքը իմաստուն:

Հայոց Ծ-ն առյուծի տեսք ունի, Կ-ն մեր ուրույն կարծիքն է, Գ-ն՝ մեր երկրի հրաշունչ անունը:

Հայոց լեզվում, ճիշտն ասած, Այս բառերն են հնչում շատ՝ Հայրենիք, հայր, հայ ու հաց, Հայաստան ու հարագատ:

Չ-ն մեր հացաբեր ծյունն է, քաղցրահամ Չմերուկը, Ղ-ն Ավետարան հեղինակած Ղուկաս մարգարեն է, Ծ-ն մեր հանճարի ոճն ու ուժն է, Աստծո հետ զրուցող ճգնափորը:

Ամեն մի տառ հառնում է բանաստեղծի աչքերի առջև՝ շոյոլ ու ճախրող: Եվ երբ նա հասնում է Մ տառին, սրտի ջերմությամբ բացականչում է.

Երբ Մ տառն են գրում թղթին, Ես հիշում են Մեսրոպ Մեծին, Մասիսի պես վեհ Մաշտոցին, Վայելչագեղ ստեղծողին:

Ինչ վերաբերում է Յ-ին, Միլիտոնյանը մատնանշում է մեր անկրկնելի, ազգապահ հայականչ երկրունը:

Հայ բառի մեջ ես հավետ Բելին հաղթել են Հայկի հետ: Մեր ազգանվան սուրբ նշան, Ու երբ լսում ենք մենք՝ յան, Բույրն ենք զգում հայրենի, Չայնն ենք լսում մայրենի:

Այս թևավոր գյուտից հետո Միլիտոնյան-հոգեբան-ազգագրագետ երգիչը Ն-ի մեջ նշմարում է Նորը, Նվերը, Նվազն ու Նավերը, նաև Նեկ-սուրբ: Ը-ն մեր սարերի շնկչկան հովն է, Շուշվա վանքում շնկչկող շարականը, Ռ-ն Որոտնավանքի դուղանցն է, Որոտան գետի շառաչը: Չ-ն մեր Չեչիլ պանիրն է, Պ-ն Պետության պիտանի պահապանն է ու սահմանապահը: Ջ-ն կյանքի սկիզբը Ջուրն է, Ռ-ն ռիզմում հաղորդ մարգիկը, իսկ Ա-ն Սիսականի տաք սիրտն է, Սփյուռքի ճամփեքին սերմանվող լույսը: Վ-ն Վանա լիճն է՝ իր տառեխ ձկնատեսակով, մեր Վստահությունն է, Վրաստան տանող ճամփան:

Բանաստեղծը ընթերցողի ճանապարհին նոր անակնկալներ է պարզում ու հորդորում, որ հպարտությամբ նայի անցյալին, հավատով՝ գալիքին, քանզի մեր Տ գիրը խորհրդանշում է «Տիգրան Մեծից մինչև Տիգրան Պետրոսյան», «Որպես Հայոց ոգին ու միտքը՝ հաղթական: Ռ-ն միանգամայն ուրույն իր դիրքերն ունի մեր պատմության տեղերում:


Ար բառի երկրորդն են, Բարի բառում՝ երրորդը, Բույե-ում առաջին, Իսկ սեր բառի մեջ՝ վերջին:

Իսկ հայ ժողովուրդը, հայն ընդհանրապես, որտե՞ղ և ե՞րբ չի եղել առաջինը: Պատմության խորքերում, Սարդարապատում, Մեծ Հայրենականում հրաշքեր են գործել հայ հրամանատարներն ու զինվորները:

Մաշտոցյան գրերից յուրաքանչյուրը Մաշտոց ծնող ժողովրդի հոգու երանգներն ու սրտի ցոլքն է պարունակում: Եվ տեղին են Միլիտոնյանի բնութագրումներն ու ընդհանրացումները՝ թելադրված մեր Այբուբենից:

ԳՐԱԴԱՐԱԿ

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ



2020 թվականի հունվարի 22-ին հայ հասարակայնությունը արժանավուն և ճշգրիտ բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սուրբազան Կարամյանի ծննդյան 90-ամյակը...

Արժանի և Հայաստանի գրական մամուլը բարձր գնահատեց մշակույթի բազմավաստակ գործիչ պոետիան ու գրականագիտական հունձքը: Մատնանշվեց, որ տարիների ընթացքում նա արժանացել է «Մեսրոպ Մաշտոց», «Մարշալ Բաղդասարյան» շքանշանների, «Վաչագան Բարեպաշտ», «Գրիգոր Նարեկացի» և այլ մեդալների, ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչման, 5-րդ դրաի պատմիչ Եղիշեի անվան գրական մրցանակի և այլ պատվավոր պարգևների:

Զնայած պատկառելի տարիքին, անվանի բանաստեղծն ու գրականագետն իր նախանձելի աշխատասիրության շնորհիվ շարունակում է հիացնել ստեղծագործական իր արդյունավետ ներդրումներով: Վերջին երկու տարվա ընթացքում նա ընթերցողի սեղանին է դրել Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված «Ժողովրդի կենսափոփոխության ջահակիրը», «Ղևնդ Ալիշան-200» ուսումնասիրությունները և «Կրակ չէ, ինչ է» բանաստեղծությունների նոր ժողովածուն: Հայաստանի գրողների միությունը 2020 թվականին «Հրանտ և Մանուշակ Սիմոնյաններ» մրցանակաբաշխության ՊՈԵՏԻՎ անվանակարգում Ս.Կարամյանի «Կրակ չէ, ինչ է» ժողովածուն արժանացրեց գլխավոր մրցանակի:

Նկատի ունենալով տաղանդավոր բանաստեղծ-գրականագետի բարձրարվեստ նվաճումները՝ բանասիրության ակադեմիկոս պրոֆեսոր, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ԱրՊՀ գիտխորհրդի երաշխավորությամբ լույս ընծայեց «Կենսատեսնագիտություն» աշխատությունը, որը ջերմորեն ընդունվեց ընթերցողների կողմից: Ժողովածուն՝ բաղկացած տասից ավելի մասերից, ամբողջությամբ մեջ ներկայացնում է Ս. Կարամյանի կյանքի հիմնական տարեթվերը, պարզաբան, անվանի գեղագետների կարծիքները պոետական ու գրականագիտական գրքերի վերաբերյալ: Փիլիսոփայական

լուրջ մտորումներ ու խոհեր են համայնի ասույթները՝ բերված գրքի առաջին մասում:

Մի առանձին բաժին են կազմում հինգ տասնյակի հասնող լրջախոհ կարծիքները Կարամյանի մասին գրված ժողովածուներից, գրախոսություններից, նամակներից, բանաստեղծություններից: Հայաստանի ու ընկերական սրտաբուխ զգացումներ են առաջացնում հռչակավոր գրողներ ու գրականագետներ Ն. Զարյանի, Ա. Արզումանյանի, Մ. Կորյունի, Ա. Սողոմոնյանի, Ժ. Անդրյանի, Դ. Գասպարյանի, Ա. Ավագյանի, Հ. Խաչատրյանի, Մ. Սանթրյանի, Ա. Դանիելյանի, Ն. Աղալյանի, Վ. Օշականի, Գ. Շահինյանի, Ա. Դեմիրճյանի, Ա. Մխիթարյանի, Ա. Բաղդասարյանի, Գ. Գաբրիելյանի, Հ. Բեգլարյանի, Վ. Հակոբյանի, Ռ. Եսայանի, Դ. Միքայելյանի և այլոց բարձր գնահատականները:

Գրքի «Մատենագիտություն» բաժնում բերված է Ս. Կարամյանի բանաստեղծական ժողովածուների ցանկը, որը հասնում է 30-ի, իսկ մենագրությունների թիվը՝ 38-ի, որոնք խոշոր ներդրումներ են արդի հայ պոետիայի ու գրականագիտության հարուստ ակունքում:

Ս. Կարամյանի գիտական աշխատանքների թիվը՝ տպագրված ամսագրերում, հանդեսներում և առանձին ժողովածուներում, հասնում է 112-ի: Պարբերական մամուլի էջերում տպագրված հոդվածների, գրախոսությունների թիվը՝ 245-ի:

Գրքում բերված է նաև Ս. Կարամյանի հրապարակախոսական հոդվածների, ակնարկների, ռեպորտաժների 80-ի հասնող ցանկը:

Ս. Կարամյանի երկարամյա բեղմնավոր գրական նվաճումների մասին ստեղծվել է հարուստ գրականություն: Նման ուսումնասիրությունների թիվը հասնում է 133-ի:

Մատենագիտության վերջին էջերը նվիրված են բանաստեղծ-գրականագետի 90-ամյա հոբելյանի ժամանակ տեղի ունեցած ելույթներին: Բարձր գնահատականների ենք հանդիպում ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Դուլյանի, ԱՀ ԿԳՄ նախարար Ն. Աղաբալյանի, ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանի, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լ. Հովհաննիսյանի, թատերագետ Կ. Ալավերդյանի, Ստեփանակերտի գիտական կենտրոնի ղեկավար, պատմաբան Ստ. Դադայանի, բանաստեղծուհի Ծ. Բաղդասարյանի, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Վ.Եղիազարյանի, ԱրՊՀ դասախոսներ Ս. Բաղդասարյանի, Ա. Մխիթարյանի, հոբելյարի որդու՝ անվանի ֆիզիկոս Հ. Կարամյանի, տաղանդավոր թողարկող աշխարհահռչակ դաշնակահար, կոմպոզիտոր Հ. Մելիքյանի ելույթները և ժողովրդական դերասաններ Զ. Հարությունյանի, Ս. Եվրիյանի ասմունքը Ս. Կարամյանի պոետիայից:

Բոլոր երույթ ունեցողները հիացնում են ու հպարտության զգացումով են արժևորել հոբելյարի բազմաբնույթ գրական-գրականագիտական վաստակը:

Հայ ակադեմիկոս արձակագիր Մկրտիչ Արմենի խոսքը Ս. Կարամյանի մասին, որ բերվում է գրքում, հնչում է արտամոտ երանգով: «Սուրբազան մոտ, գրում է նա,- պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը... Հաճելի է կարդալ Սուրբազանի, որի մոտ այնքան արև կա և լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ և ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլև դրա հետ սերտորեն կապված համեմատություններն ու բառային մատերիալը:

Բանաստեղծությունը չի կարելի պատմել, և ես չեմ էլ պատրաստվում պատմել: Բանաստեղծությունը կարելի է միայն երգել: Ընթերցողին հղում են կարդալու Սուրբազանի լավատեսական բանաստեղծությունները»:

Ս. Կարամյանի գրականագիտական հունձքը արժանացել է հայտնի գրականագետ Սուրեն Դանիելյանի ուշադրությանը: «Մեր սեղանին է,- գրում է նա,- Արժանի վերջին 50 տարիների հայ բանաստեղծության ընթացքների գիտական ուրվագիծը, որ երևան է հանում զարգացման ուղղությունները և միտումները... Նախ այն շաղախված է հայ գրական զարգացումներին, ինչը բնական է: Արժանի մեր բանաստեղծները «մայր գծի» շարունակությունն են կազմել՝ նույնն են եղել հայրենաշունչ տրամադրությունները, ազգային միասնական հունի ճանաչման փորձը, ինչը վկայում է նաև գրքի գտնված խորագիրը՝ «Հայ պոետիայի զարգացման միտումներն Արժանի»:

Մեր առջև տողանցում են գրական դիմագիծ կազմած արցախյան բանաստեղծները (Գ. Գաբրիելյան, Ս. Կարամյան, Վ. Օվյան, Ռ. Եսայան, Հր. Բեգլարյան, Ա. Թովմասյան, Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ն. Ավագյան, Հ. Ալեքսանյան և ուրիշներ, որոնց գեղարվեստական ընդհանրացման պատկերների ենթախորքերում հյուսված են, հեղինակի ձևակերպմամբ, հայրենիքի և քաղաքացու ներդաշնակության խորհուրդները»:

Արմեն Սարգսյանի ստեղծած «Կենսատեսնագիտություն» աշխատությունը Ս.Կարամյանի հարուստ վաստակի արժանի գնահատականն է: Այն ուսանելի գիրք է, նրա գրական ու գիտական հունձքի գիտական ամփոփում: Ժողովածուն բացատրատում է բանաստեղծ-գրականագետի ստեղծագործության քաղաքական, հասարակական և մշակութային արժեքը:

Անահիպ ԱԹԱՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԳՈՎԵ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ

Սկիզբը՝ էջ 15

Սևա և Ց-ն՝ իր էությանը. Ց տառը հոգուն Ցանած մի ցող է, Գիշեր-ցերեկ Աստղացույց: Փառք տուր հայոց Ցույակ ցեղին, Հաց կտրվի Քո սեղանին:

Յուրաքանչյուր տառի միլիտոնյանական երանգ ընթերցողի հոգում փոխվում է ծիածանի: Հրաշքների մի աշխարհում ես ասես, մեսրոպածին հայածածան աշխարհի ծաղկանոցում: Վերցնենք Ու ծայնավորի հայաշունչ արծազանքը.

Ուրույն է տառն այս, Ապրում է մեռակ, Բայց միավորում Բառերի բանակ: Եվ ուրախ է նա, Որ ինքն ուրիշ է Ու ընկերության Լույս ուղեկիշ է:

Ինչ վերաբերում է Փ-ին, այն ազգանվեր փրկարար է, մարդկային նվիրումի ամենասուրբ դրսևորումը:

Մեր այրուբենը դարերի ընթացքում ծիածանվել է բազում բանաստեղծների շուրթերին: Եվ ուշագրավն այն է, որ նրանցից յուրաքանչյուրն այդ ծիածանին իր երանգն է գումարել: Բազմերանգ այդ երկնակամարում Միլիտոնյանը միանգամայն նոր գույն է ստեղծել՝ օգտագործելով գրեթե մոռացված մեր Որդան Կարմիրը: Դառնանք ու փառաբանենք նրա պատկերած Ք տառին.

Այրուբենը լեռ է հսկա, Քարե կամք է մեզ հաղորդում, Կենաց ծառից մինչև խաչքար Հայ քանքարն է անխոնջ կերտում:

Ո՞վ է կանգնած լեռան վրա, Քարոզում է հույս, հավատ, սեր, Քրիստոսն է, լույսն է նրա Սփռվում հար աշխարհում մեր:

Էդ. Միլիտոնյանի «Այբբենարան»-ը սրտաբուխ օրհներգ է, որի հյուսվածքում իրենց նկատելի տեղն են գրավում Եվ-ը և Օ-ն: Օ-ն շուրթերի օղակման հրաշք պատկերն է.

Այդպես ամեն օր Դու զարմանալիս Ասում ես՝ օ՜, Եվ օղակվում են Օրերը բոլոր Տարվա մեջ կտր: Եվ Օշականում Թարգման-չաց տոնին

Օրինաբանում ենք Մեսրոպ Մաշտոցին:

Հիրավի, ինչպես էդ. Միլիտոնյանն է ընդհանրացնում, երկրագունդը օ-ածն պտտվում է կարուսելի պես, հենց այդ պտույտի ընթացքում հայ ժողովրդի շուրթերին հնչել է ու հնչելու է անունը Մաշտոցի, որի հայտնագործած ազգափրկիչ Այրուբենը օրհներգ է դարձել նաև էդ. Միլիտոնյանի արարող հոգում՝ որպես հայապատկեր ընծա գալիք սերունդներին:

Ավարտելով գնահատանքի մեր սրտաբուխ խոսքը էդ. Միլիտոնյանի այրուբենված երգաշարի մասին՝ ուղղակի մեր հիացմունքն ենք արտահայտում նկարիչ Անահիտ Հովսեփյանի նկատմամբ, որն իր ամենատես տաղանդի շնորհիվ դարձել է հավերժախոս այս երգաշարի գունային գաղտնիքների ինքնատիպ հայտնագործողը:

Սուրբազան Կարամյանի գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

«ՀՈՒՍԱՐԱՐ»
2021 թվականի
բաժանորդագրություն
Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց զատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնականոն ռիթմը: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՞ր է տանում ճամփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքնենք գտնենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համադրենք, բանավիճենք ու կիսվենք... Եվ կյանքն աստիճանաբար կվերադառնա իր հունի մեջ, հավատացե՛ք:
«ՀՈՒՍԱՐԱՐ»-ը եղել է մնում է հանրապետության բոլոր մանկավարժների վատահեղի գրուցակիցը: Համախմբվել են կրկին մեր սիրելի թերթի շուրջ:
Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ:
Սպասում ենք բոլորիդ նորանոր հանդիպումների հույսով:

ՀՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրազրույթուն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.03.2021թ.: